



ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐԵՐ

Լույս է տեսնում 2007 թվականից տարին չորս անգամ

4 (16), 2010

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Քոթանջյան Հ. Ս.

քաղաքական գիտությունների դոկտոր (Ռ-Դ), Ռազմական գիտությունների ռուսաստանյան ակադեմիայի իսկական անդամ, հակահարկաբեկչության գծով փորձագետ (ԱՄՆ) (նախագահ)

Չիլինգարյան Գ. Ս. (գլխավոր խմբագիր)

Այդինյան Ռ. Ա.

Ապրիանով Է. Ա.

Ավետիսյան Վ. Պ. (գլխ. խմբ. տեղակալ)

Բաբայան Ն. Մ.

Գասպարյան Վ. Ս.

Գասպարյան Տ. Շ.

Դավթյան Ա. Մ.

Թունյան Վ. Վ.

Իսախանյան Մ. Ռ.

Խաչատուրով Յու. Գ.

Կարապետյան Մ. Ն.

Կարապետյան Մ. Ս.

Մաթևոսյան Ի. Ժ.

Մարգարյան Վ. Հ. (գլխ. խմբ. տեղակալ)

Մարտիրոսյան Ս. Ս.

Մարտիրոսով Լ. Ա.

Սիրզաբեկյան Ա. Ռ.

Նազարյան Ա. Ս.

Սեդրակյան Ս. Գ.

Տեր-Գրիգորյանց Ն. Գ.

Տոնոյան Գ. Է.

Փարսադանյան Ա. Մ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԱԳՐՔԵԶՆԵՒ ԿՈՂՄԻՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆԵՆԳԱՓՈԽՈՒՄՆԵՐԻՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՎԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ.

ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԱՊԵՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Հ. Ս. Քոթանջյան, Ռազմավարական ուղենիշներ Հայաստանի պատմության նենգափոխման դեմ գիտական պայքարում՝ ցանցապետականության տեսանկյունից 5

Պ. Ա. Չոքսևյան, Ա. Գ. Ավագյան, Բ. Պ. Պողոսյան, Վ. Հ. Տեր-Մաթևոսյան, Վ. Պ. Ավետիսյան, Հայաստանի պատմության նենգափոխման աղբրեջանական ռազմավարությունը և դրան հակադեցության ուղենիշները 33

Գ. Ա. Հովհաննիսյան, Պետությունը էլեկտրոնային-թվային դարաշրջանում. Հայաստանը և հայությունը որպես ցանցապետություն 46

Աղբրեջանի պատմական կեղծարարություններին համակարգված գիտական հակադեցությանը վերաբերող եզրակացություններ և գիտության բնագավառում պետական քաղաքականության ռազմավարական ուղենիշներ 59

**ԱԳՐՔԵԶԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆԵՆԳԱՓՈԽՈՒՄՆԵՐԻՆ ԳԻՏԱԿԱՆ
ՀԱԿԱԶԳԵՑՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՐԱԿԻՑ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ**

Հ. Ս. *Խառապյան*, Աղբրեջանական պատմաշինության առանձնա-
հատկությունները. Աղվանքը աղբրեջանական պատմագրության և քաղա-
քականության մեջ 69

Է. Բ. *Աքանեսյան*, Պատմության կեղծարարությունների գործունը
Ղարաբաղյան հակամարտության համատեքստում 78

Մ. Մ. *Հասրաթյան*, Հայկական ճարտարապետության վերաբերյալ
աղբրեջանական կեղծարարությունները 86

Լ. Վ. *Երնջակյան*, Հայ երաժշտարվեստի աղավաղումը թուրք-աղբրե-
ջանական հետազոտություններում 91

Ս. Ս. *Չոլյան*, Աղբրեջանում «հիշողության քաղաքականությունը»՝
որպես քաղաքական վերնախավի գործիք 105

**ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱԳՐՔԵԶԱՆԱԿԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՎ ԳՐԱՆՑ ԳԻՏԱԿԱՆ ՀԱԿԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆՄՈՒՇ**

Ս. Մ. Мурадян. Два искаженных издателем памятника 113

ԳԻՏԱԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

- Ռ. Վ. Աղուզումցյան*, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Ն. Հ. *Առաքելյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Գ. Ե. *Բաղդասարյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Հ. Ա. *Գևորգյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Ռ. Գ. Գևորգյան, երկրաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Վ. Մ. *Հարությունյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Ա. Հ. *Մանթաշյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Է. Գ. *Մինասյան*, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Մ. Մ. *Միրիջանյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Կ. Ս. *Մոսոյան*, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Յու. Ս. *Չիլինգարյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Վ. Ս. *Սարգսյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Հ. Ս. *Միսակյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱԴՐՔԵՁԱՆԻ ԿՈՂՄԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆԵՆԳԱՓՈԽՈՒՄՆԵՐԻՆ
ԳԻՏԱԿԱՆ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵԶՍՈՒՄ.

ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԱՊԵՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՈԱԶՄԱԿԱՐԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՈՒԹՅԱՆ ՆԵՆԳԱՓՈԽՄԱՆ ԴԵՍ
ԳԻՏԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ՝
ՑԱՆՑԱՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

*Հ. Ս. ՔՈԹԱՆՋՅԱՆ, գեներալ-մայոր, քաղաքական գիտությունների
դոկտոր (ՌԴ), հակահարկերի գծով գիտական փորձագետ (ԱՄՆ),
Ռազմական գիտությունների ռուսաստանյան ակադեմիայի
իսկական անդամ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի պետ*



Ադրբեջանի հակահայկական գործունեությանը հակազդեցությունը կարելի է կառուցել կամ մենամարտի ավանդական երկկողմ ձևաչափով՝ զուտ տեղային ռեսուրսների սահմաններում, կամ էլ համաշխարհային ընկերակցության մեջ հայության ցանցային ինտեգրվածության՝ Հայաստանի և Սփյուռքի համադրված ռեսուրսի ներգրավման ռազմավարությամբ: Խոսքը վերաբերում է Հայաստանը՝ որպես տեղային (լոկալ) սահմա-

նափակ ռեսուրսների տիրապետող սուբյեկտ դիտելուն, կամ՝ Հայաստան–Սփյուռք հարաբերությունների ցանցապետական համակարգմանը: Տվյալ ցանցապետական մոտեցման համաձայն՝ աշխարհի գործակցային ցանցային համակարգին Հայոց ցանցապետական համալիրի ինտեգրվածությունը անհրաժեշտ է օգտագործել ի նպաստ և՛ Հայաստանի Հանրապետության, և՛ Սփյուռքի առաջընթաց զարգացմանը:

Այս առումով մեր հետազոտությունը միտված է ԱՌՀԻ-ի նախորդ մենագրական հետազոտություններում ուրվագծված Հայոց ցանցապետության մոդելի հետագա զարգացմանը՝ տվյալ պարագայում այն նպատակաուղղելով հայության հումանիտար գիտելիքի միացյալ ցանցապետական ռեսուրսի համակարգմանը՝ Ադրբեջանի կողմից հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգության նենգափոխմանը հակազդելու

նպատակով համաշխարհային գիտական համակարգին Հայաստան–Սփյուռք միասնական հունանիտար գիտական ներուժի ինտեգրմամբ: Սակայն հունանիտար գիտությունների ինտեգրման խնդիրը հնարավոր չէ լուծել միայն հասարակագիտության ենթահամակարգի շրջանակներում. այն պահանջում է ամբողջ ազգային գիտական համակարգի համընդգրկուն ինտեգրում միջազգային գիտական համակարգին:

Մի կողմից՝ Հայաստանի հունանիտար գիտությունը, նախկինում լինելով ԽՍՀՄ ակադեմիական համակարգի մաս, տուժում էր մարքս-լենինյան հասարակագիտության «կուսակցականության» կոշտ սահմանափակումներից, որը թելադրում էր արևմտյան «կեղծ գիտության» հետ ազատ համագործակցության բացառում: Մյուս կողմից՝ Խորհրդային Հայաստանը բնական և տեխնիկական գիտությունների բնագավառում շահում էր գերտերության գիտական հզորության մաս լինելու հանգամանքով պայմանավորված առավելություններից: Հայաստանի գիտությունը, զրկվելով ԽՍՀՄ վարչարարական-ֆինանսական առավելություններից ու սահմանափակումներից և ձեռք բերելով անկախություն, մոտ քսան տարի է, ինչ կանգնած է աշխարհում գործող ազատ ակադեմիական համակարգի մեջ ինքնուրույն ինտեգրման մարտահրավերների առջև, որոնք առ այսօր համակարգորեն լուծված չեն¹:

¹ Վերջին տարիներին, չնայած առկա բոլոր խոչընդոտներին, միջազգային գիտական համակարգի հետ ինտեգրման գործում ԳԱԱ որոշակի առաջընթացը հիմնականում տեղի է ունեցել բնական և ճշգրիտ գիտությունների ոլորտում: Աշխարհում բնագիտության արդի վիճակին նվիրված՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2010 թ. հրապարակված զեկույցի համաձայն՝ եթե 2005 թ. նշված ոլորտում բարձր վարկանիշ ունեցող գիտական պարբերականներում ՀՀ գիտնականների հրապարակումների թիվը կազմել է 377, ապա 2008 թ՝ 544: 2008 թ. գիտական հրապարակումների թվով Հայաստանն զգալիորեն գերազանցում է Ադրբեջանին՝ 392 հրապարակում, Վրաստանին՝ 328, Ղազախստանին՝ 218, Լատվիային՝ 408: 544 հրապարակումներից 66-ը արվել է քիմիայի, 251-ը՝ ֆիզիկայի բնագավառում:

Հայաստանում որոշակիորեն աճել է նաև բնական գիտությունների ոլորտում միջազգային համագործակցությամբ կատարված հետազոտությունների արդյունքների թիվը՝ 2005 թ. 219-ից 2008 թ. հասնելով 252-ի: Այս ցուցանիշով ևս Հայաստանը գերազանցում է Ադրբեջանին (123), Վրաստանին (196), Ղազախստանին (113), Լատվիային (237):

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ բնագիտական հետազոտություններին հատկացվող միջոցները 2007 թ. Հայաստանում կազմել են 19330 հազ. ԱՄՆ-ի դոլար, Ադրբեջանում՝ 59500 հազ., Ղազախստանում՝ 220000 հազ., Լատվիայում 169700 հազ. ԱՄՆ-ի դոլար (տես UNESCO Science Report 2010, UNESCO Publishing 2010,

Ինչպես ցույց են տալիս ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ուսումնասիրությունները, Հայաստանի և Սփյուռքի մտավոր ռեսուրսների միավորմանն զգալիորեն խոչընդոտում է այն հանգամանքը, որ Հայաստանի գիտության կազմակերպվածքը իր ղեկավարման սկզբունքներով ու կառավարման գործիքարանով ոչ լիարժեք կերպով է համապատասխանում աշխարհում ընդունված հետազոտական համալսարանների գիտակազմակերպական մշակույթին: Կորցնելով ԽՍՀՄ գիտական համակարգի մաս լինելու և աշխարհի գիտական համակարգի հետ գործակցելու առավելությունը՝ Հայաստանի գիտական համակարգը խորհրդային գիտակազմակերպական մոդելին բնորոշ որակների պահպանման պատճառով շարունակում է մնալ արևմտյան գիտական աշխարհի հետ անհամատեղելի: Դա ՀՀ գիտությանը հնարավորություն չի տալիս միջազգային գիտական ու գիտահամալսարանական համակարգին ինտեգրման պայմաններում արդյունավետ համագործակցելու աշխարհի գիտական ընտրանու հետ:

<http://unesdoc.unesco.org/images/0018/001899/189958E.pdf>): Բնագիտության ոլորտում միջազգային համագործակցությունը հիմնականում ընթանում է անհատական կապերի շնորհիվ, սակայն հետզհետե աճում է նաև հաստատութենական բաղադրիչը:

Հասունացել է ՀՀ-ում հիմնարար գիտության զարգացման ռազմավարության՝ որպես անվտանգային ռեսուրսի համակարգային մշակման անհրաժեշտությունը: Կարևոր է այս բնագավառում որոշումներ ընդունելիս հաշվի առնել հետևյալ հանգամանքը. հիմնարար գիտության կոմերցիոն արժեքը բուն իմաստով հնարավոր չէ գնահատել, քանի որ այն միտված է գիտական մտքի հեռահար հորիզոնների նորացմանը և այդ առումով՝ ճյուղային, կիրառական գիտությունների հայեցակարգային սնուցմանը: Ճյուղային հետազոտությունների ասպարեզը գերատեսչական ոլորտների տիրույթն է: Իսկ այդ՝ գերատեսչական դասի հետազոտությունների արգասիքների միջգերատեսչական համադասումը և նորանուծական գործընթացների կոմերցիոն գնահատումն ու իրավական կազմակերպական ուղեկցումը պահանջում են ճյուղային գիտության կիրարկումներով զբաղվող հատուկ պետական հաստատության կողմից ղեկավարում ու կառավարում: Չի կարելի անտեսել այն հանգամանքը, որ հիմնարար գիտության արգասիքները, հնարավոր չէ ապրանքայնացնել (կոմերցիալացնել) և գնահատել զուտ տնտեսական շահութաբերության տեսակետից: Ընդամին ապրանքային արդյունք ունեցող կիրառական գիտության հետ հիմնարար գիտության կապն ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ համապատասխան զարգացած ենթակառուցվածք (ՀՀ-ում հիմնարար գիտության զարգացման հեռանկարների մասին ավելի հանգամանորեն տես Հ. Ս. Քոթանջյան, Հայ գիտության զարգացումը Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության տրամաչափի մեջ (գեկուցում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի գիտության և կրթության հանձնաժողովի լուսններում): «Հայկական բանակ», 2008, հմ. 4):

Այսինքն՝ Հարվարդի կամ Բեռլինի Հումբոլդտի անվան համալսարանների* նման գիտահետազոտական համալսարանների հետ արդյունավետ կերպով համագործակցելու համար ՀՀ գիտական-կազմակերպական մոդելը պետք է դառնա այդ գիտակազմակերպական մոդելի հետ համեմատելի և համատեղելի: Այսպիսի որակական բարեփոխումն է, որ ՀՀ գիտական համակարգին հնարավորություն կտա, ինտեգրվելով համաշխարհային համալսարանական գիտահետազոտական միջավայրի մեջ, տարանջատվելու խորհրդային գիտակազմակերպական

* Հարվարդի համալսարանում 2009 թ. հոկտեմբերի դրությամբ գործում էին 15 դպրոցներ, որոնք իրենց հերթին բաժանվում էին մոտ 150 կրթական-հետազոտական ինստիտուտների ու կենտրոնների: Մագիստրոսական մասնագիտացումների թիվը 100-ից ավելի է, այդ թվում՝ քաղաքագիտություն, անտիկ պատմություն, աշխարհագրություն, աստվածաբանություն, համաշխարհային կրոնների ուսումնասիրություն, իսլամական հետազոտություններ, միջազգային հարաբերություններ, իրավաբանություն, իրավունքի պատմություն, միջազգային իրավունք և ֆինանսներ, բնապահպանություն, բանակցային հմտություններ, բիզնես կառավարում, առողջապահության կառավարում, կրթության զարգացում, հանրային կրթության կազմակերպում, ռազմավարական հետազոտություններ, պետական և հանրային կառավարում, ճարտարագիտություն, քվանտային մեխանիկա, ճարտարապետություն, այլընտրանքային տեխնոլոգիաներ, կենսաբանություն, աստղագիտություն, աստղաֆիզիկա, համակարգչային ճարտարագիտություն, մաթեմատիկա, կիբեռնետիկա, ծրագրավորում, կենսանաոտեխնոլոգիաներ, կինեմատոգրաֆիա, և այլն:

Պրոֆեսորադասախոսական կազմը 2410 հոգի է, մագիստրանտների թիվը՝ 10870, ասպիրանտներինը՝ 3590:

Բեռլինի Հումբոլդտի անվան համալսարանում 2010 թ. դրությամբ գործում էին 11 ֆակուլտետներ և 14 հետազոտական կենտրոններ: Մագիստրոսական մասնագիտացումների թիվը 64-ն էր, այդ թվում՝ կենսաֆիզիկա, կենսաբանություն, մաթեմատիկա, մոլեկուլյար կենսաբանություն, նյարդաբանություն, ճարտարագիտություն, տնտեսագիտություն, կառավարում, վիճակագրություն, միջազգային հարաբերություններ, եվրոպական, աֆրիկյան և ամերիկյան հետազոտություններ, աշխարհագրություն, հնագիտություն, գրադարանային գործ, եվրոպական գրականություն, դասական բանասիրություն, մշակութաբանություն, փիլիսոփայություն, աստվածաբանություն: Ուսանողների ընդհանուր թիվը ավելի քան 36.000 է, պրոֆեսորադասախոսական կազմինը՝ ավելի քան 1700:

2010 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԳԱԱ համակարգում գործում էին 27 ինստիտուտներ, 4 գիտական և գիտատեխնիկական կենտրոններ, 2 ՓԲԸ-ներ: Գիտական աստիճան ունեցող գիտաշխատողների թիվը ավելի քան 1400 էր: ԳԱԱ-ում մագիստրոսական մասնագիտացումների թիվը 20-ն էր, մագիստրանտներինը՝ 859, ասպիրանտներինը՝ 335, հայրորդներինը՝ 173:

ժառանգությունից և զգալիորեն մեծացնելու գիտական, այդ թվում՝ կեղծարարություններին հակազդեցությանն ուղղված, ցանցային համագործակցության արդյունավետությունը*:

Նման բարեփոխումներն իմաստավորված կլինեն միայն այն դեպքում, երբ գիտությունը վերականգնի պետության կենսագործունեության մեջ խորհրդային ժամանակներին բնորոշ իր առաջնային տեղը և համարվի հայ ժողովրդի անվտանգ կայուն զարգացման գերակայություն: Եվ տրամաբանական է տվյալ համակարգային բարեփոխումների առաքելության ղեկավար տեսնել << Գիտությունների ազգային ակադեմիան՝ որպես հանրապետությունում գիտական գործունեությամբ զբաղվող հիմնարկները միավորող կազմակերպություն **:

* * *

Մեր կարծիքով՝ տվյալ գործընթացը կազմակերպելիս նպատակահարմար է առաջնորդվել հետևյալ նկատառումներով ու սկզբունքներով: Ընդհանուր առմամբ, գիտությունը ենթադրում է ճշմարտության որոնում և ճանաչում փաստերի վերաբերյալ հավաստի տեղեկությունների հիման վրա: Դրանով է պայմանավորված նաև պատմական գիտության՝ որպես գիտելիքների համաշխարհային համակարգի առավել կարևոր բնագավառներից մեկի մեծ հեղինակության էությունը: Ընդսմին այդ գիտելիքները արտացոլում են, իսկ մի շարք դեպքերում նաև կանխատեսում մարդկության, նրա առանձին ազգային ստորաբաժանումների՝ ի դեմս ժողովուրդների, նրանց պետությունների և միջազգային կազմակերպությունների զարգացման ընթացքը:

* Հարկ է նշել, որ Ռուսաստանում (այդ թվում՝ խորհրդային շրջանում), ուստի և Հայաստանում գիտակրթական համակարգի կազմակերպվածքը համապատասխանում էր գերմանական մոդելին: Սակայն գերմանական մոդելը վերջին տասնամյակներում ևս ենթարկվել է զգալի վերափոխումների: Այս հանգամանքը նույնպես հուշում է, որ Հայաստանում էլ անհրաժեշտ է առկա գիտակրթական համակարգի կազմակերպվածքի կատարելագործում:

** Ըստ << ԳԱԱ ներկայացուցիչների հետ ունեցած մեր քննարկումների՝ նրա իսկական անդամների շրջանում գերակայում է այն տեսակետը, որ Ակադեմիան այն կազմակերպությունն է, որը համադասում և ուղղորդում է գիտական ինստիտուտների, ինչպես նաև հանրապետության առաջատար մասնագետների (գերազանցապես՝ ակադեմիկոսների) ստեղծած գիտական դպրոցների գործունեությունը:

Պատմության նենգափոխում են կոչվում որևէ իրադարձության ինչպես ոչ կանխամտածված կամ նպատակադրված սխալ նկարագրությունը, այնպես էլ կանխակալ մեկնաբանումը: Գիտելիքների համաշխարհային համակարգի համար առանձնակի վտանգ է ներկայացնում պատմական գիտության նենգափոխումը պատմագրության մակարդակով՝ պատմական փաստերի աղբյուրների մեջ ներխուժմամբ և դրանց մեկնաբանության ժամանակ խեղաթյուրված գիտական մեթոդների կիրառմամբ: Պատմագրական տրամաչափի այդպիսի աղավաղումներն սպառնում են պատմական գիտության՝ որպես ընդհանուր առմամբ մարդկության գիտելիքների համաշխարհային համակարգի զարգացմանը:

Բնագրային պատմական աղբյուրի մտավոր աղավաղում է կոչվում այնպիսի միջամտությունը, երբ տվյալ աղբյուրն «ուղղվում» է դրանում ճշմարտացի կերպով արտացոլված փաստերը գոյություն չունեցող մանրամասներով լրացնելու կամ էլ իրական իմաստը փոփոխելու նպատակով: Աղբյուրի ոչ լիարժեք բնագրաբնույթությունը (նույնականությունը) գրավոր աղբյուրի տեքստի աղճատումն է, դրանից բացառումների փոխարինումն այնպիսի մտացածին դրվագներով, որոնք փոխում են նրա իմաստը՝ դարձնելով կեղծիք, և հանգեցնում են պատմական գիտելիքների համաշխարհային համակարգի մասշտաբով աղետալի հետևանքների: Ե՛վ աղբյուրի կեղծումը, և՛ իրական աղբյուրի մտավոր աղավաղումը դիտվում են որպես նենգափոխում, այսինքն՝ ճշմարտության նյութականացված աղավաղում, ինչն արվում է համաշխարհային գիտական ընկերակցությունը մոլորեցնելու նպատակով:

Գիտական տեղեկույթի փոխանակման համընդհանրացման ներկայիս պայմաններում կեղծարարությունը դառնում է նոր սերնդի սուր «ոչ մահաբեր» զենք, որը կարող է օգտագործվել ինչպես քաղաքական (տարածքի նկատմամբ այս կամ այն պետության պատմական իրավունքի ամրագրում, այս կամ այն քաղաքական հաստատության, կառավարող վերնախավի հայեցակարգային գերակայությունների օրինականության կամ անօրինականության հիմնավորում), այնպես էլ տնտեսական, ռազմական կամ այլ նպատակներով: Տվյալ տեսակետից ցանկացած երկրի պատմական տարածքը կարող է օգտագործվել ոչ միայն որպես

ժամանակակից տեղեկության պատերազմներում ճակատամարտերի թատերաբեմ, այլև որպես իրադարձությունների այս կամ այն զարգացման օրինաչափության կեղծ գիտական հիմնավորման միջոց, ինչն արվում է ի շահ նման նենգափոխումները հովանավորող պետության, այդ թվում՝ ռազմական գործողությունները հիմնավորելու և իր հաղթանակը կամ հակառակորդի պարտությունը նախապատրաստելու համար:

Կան հեղինակավոր չեզոք ակադեմիական վկայություններ, որ Ադրբեջանում կատարվում են նման նենգափոխումներ, որոնք իրագործվում են պատմագրության աղավաղումների տրամաչափով և աջակցություն են ստանում պետական մակարդակով²: Հայաստանի, ներառյալ՝ Արցախը, տարածքի և հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգության նկատմամբ ցինիկության աստիճանի հասնող ադրբեջանական ոտընծությունները հարևան պետության ղեկավարի կողմից ուղղորդվող՝ Հարավային Կովկասում հայոց պետականության պատմության նենգա-

² Տես *B. A. Шнирельман*. Войны памяти: мифы, идентичность и политика в Закавказье. М., 2003; *А. Л. Якобсон*. Гандзасарский монастырь и хачкары: факты и вымыслы. «Историко-филологический журнал», 1984, № 2; *И Алиев*. Изучение проблемы древней истории, филологии и археологии в Азербайджане в 1977-1987 годы. «Вестник древней истории», 1988, № 1; *Г. А. Абдурагимов*. Кавказская Албания-Лезгистан: История и современность. СПб., 1995; *P. Goble*. Copying with the Nagorno-Karabakh Crisis, the Fletchers Forum of World Affairs. Vol. 16, summer, 1992. *Bahram Amirahmadian*. Kusheshhaye Dovlat-e Jomhuri-e Azerbaijan dar tahrir-e nam-e Azerbaijan (Ադրբեջանի Հանրապետության կողմից «Ադրբեջան» անվանման կեղծման ջանքերը (պարսկերեն)) (http://www.civilica.com/Printable-GEONAMES04_002.html); «Tashdid perozheye hamle be tamamiyat-e arzi-ye Iran ba mehvariyaate dovlrat-e baku» (Բաքուն՝ որպես Իրանի տարածքային ամբողջականության սպառնացող գործոն (պարսկերեն)), (<http://www.tabnak.ir/fa/news/93688>); *Rahim Nikbakht*. Negahi be naghsh-e tahrifi-ye Jomhuri-ye Azerbaijan (Հայացք Ադրբեջանի Հանրապետության կեղծված քարտեզին (պարսկերեն)) (http://www.aftab.ir/articles/view/applied_sciences/geograohy_history/c12c1198327048p1.php/); «Tahrirhaye tarikhi dar ketabe darsi-ye Azerbaijan moujebe ijade moshqelat-e siasi mi shavad» (Ադրբեջանական դասագրքերում պատմական կեղծարարությունները կառաջացնեն քաղաքական խնդիրներ (պարսկերեն)) (<http://www.mehrnews.com/fa/NewsDetail.aspx?NewsID=327458>); *Kaveh Farrokh*. What is the role of the government of Baku in promoting pan-Turkism? (<http://www.kavehfarrokh.com/articles/pan-turanism/question-6/>), *Սայիհ Չաիր աղ-դին*, Մաուկիա Քարաբաղ ֆի ասսիրաուլ-արմանի ալ-ագերբայջանի (Ղարաբաղը հայ-ադրբեջանական հակամարտության մեջ (արաբերեն)): Բեյրութ, 1994; *P. Goble*. Copying with the Nagorno-Karabakh Crisis, the Fletchers Forum of World Affairs. Vol. 16, summer, 1992:

փոխման արդյունք են: Ի հակազդեցություն դրանց՝ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը, ելույթ ունենալով 2010 թ. դեկտեմբերին Աստանայում կայացած ԵԱՀԿ գագաթնաժողովում, անհրաժեշտ համարեց միջազգային հանրության ուշադրությունը հրավիրելու այն հանգամանքին, որ՝

«Բանը հասել է նրան, որ Ադրբեջանի պաշտոնյաները որևէ առիթ բաց չեն թողնում ասելու, որ Հայաստանի մայրաքաղաք Երևանը գտնվում է, այսպես կոչված, «պատմական ադրբեջանական հողերի» վրա: Իսկ վերջերս ՅՈՒՆԵՍԿՕ-ում վիճարկում էին խաչքարի՝ հայկական քրիստոնեական արվեստի գլուխգործոցի հեղինակային իրավունքները և այնուհետև, որ խաչքարը ոչ այլ ինչ է, քան ադրբեջանական արվեստի նմուշ: Միայն տարակուսել կարելի է, թե ինչու այդ դեպքում, ընդամենը 5 տարի առաջ, այդքան վայրագաբար ոչնչացվեց այդ արվեստի խոշորագույն հուշարձաններից մեկը՝ Ջուղայի միջնադարյան հայկական գերեզմանատունը՝ հազարավոր խաչքարերով, որի տեղում կառուցվեց ռազմական հրաձգարան: Ի դեպ, դա, արդեն մեր օրերում, դարձավ Ադրբեջանի կազմում ամենաբարձր մակարդակի ինքնավարություն ունեցող Նախիջևանում հայկական մշակութային ժառանգության խսպառ ոչնչացման երկարատև և հետևողական քաղաքականության գագաթնակետը»³:

Ադրբեջանում պատմական գիտության նենգափոխումը խարսխվում է փաստերի կանխամտածված աղավաղման ու սխալ մեկնաբանման վրա: Տվյալ գործընթացի քաղաքականացումն ունի իր նախապատմությունը և սկիզբ է առնում անցած դարի առաջին տասնամյակներից, ընդամենը դրա վերլուծությունն արտացոլված է մեր կոլեկտիվ մենագրության մի շարք նյութերում:

Ադրբեջանի պատմության հնացումն ու ճոխացումը, որոնք կատարվում են ի հաշիվ Հայաստանի պատմության նենգափոխման, բնորոշ են եղել պատմական գիտությանը նաև խորհրդային շրջանում, թեև՝ ավելի սահմանափակ չափերով: ԽՍՀՄ ժողովուրդների պատմության

³ «Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ԵԱՀԿ գագաթնաժողովում»: «Հայաստանի Հանրապետության Նախագահ» պաշտոնական կայք, 2010 թ. դեկտեմբերի 2 (<http://www.president.am/events/statements/arm/?year=2010&id=78>):

աղավաղման որոշակի սահմանափակվածությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ ԽՄԿԿ Կենտկոմը, գործելով գաղափարախոսական գրաքննության շրջանակներում, վերահսկում էր «ազգայնամոլության դրսևորումները»: Ընդամին քաղաքական միջոցող դատավորի դերում հանդես եկող ԽՄԿԿ Կենտկոմի գիտության բաժինը բավարարվում էր այն բանով, որ միութենական հանրապետությունների գիտությունների ակադեմիաները պահում էր իր «կլիենտների» կարգավիճակում՝ դրանց պարբերաբար քննադատության ենթարկելով մարքս-լենինյան հասարակագիտության այսպես կոչված կուսակցականության ձևապաշտական դիրքերից:

Սակայն այդ պայմաններում էլ Բաքուն վարում էր նպատակամղված գործունեություն հին և միջնադարյան Անդրկովկասում հայերի ներկայությունը նվազեցնելու և նրանց դերը նսեմացնելու ուղղությամբ՝ այդ նպատակով անտիկ և միջնադարյան աղբյուրները վերատպելով համապատասխան կանխամտածված կրճատումներով, «Հայոց պետություն» տերմինը փոխարինելով «Աղվանական պետություն» տերմինով, կամ կատարելով բնագրային տեքստերի այլ աղավաղումներ: Քաղաքական ղեկավարության խրախուսմամբ աղբյուրների կեղծման հիման վրա շինծու տեսության ստեղծման օրինակ կարող է լինել Ջիյա Բունիաթովի, նրա աշակերտուհի Ֆարիդա Մամեդովայի և նրանց այսպես կոչված «աղվանագիտության դպրոցի» մշակած այսպես կոչված «Աղվանագիտությունը»: Հեյդար Ալիևի՝ Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար եղած ժամանակ (1969–1982 թթ.) նրա լռելյայն խրախուսմամբ սկզբնաղբյուրների աղավաղված վերահրատարակման համադասումը կատարվում էր ակադեմիկոս Ջ. Բունիաթովի «գիտական» ղեկավարությամբ:

Ֆ. Մամեդովան ինքն է նշում, որ Աղվանքի պատմական աշխարհագրության իր «իմացությամբ» պարտական է Հեյդար Ալիևին, որը Ադրբեջանում իշխանության գալուց անմիջապես հետո սկսել է պահանջել տվյալ թեմայով հրապարակված յուրաքանչյուր հայկական գրքի «գիտական» քննադատություն: Որպես նման «քննադատության» արդյունք՝ Մամեդովան «փաստերով ցույց է տվել, որ Կովկասում հայեր չեն եղել»: 2002 թ. ԱՄՆ-ում Հայաստանի պատմական ատլասի

հրատարակումից հետո Ադրբեջանի Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը այն հերքելու նպատակով ստեղծել է Պատմական քարտեզագրության բաժին, որի ղեկավար է նշանակվել Մամեդովան: Բաժնի աշխատանքների արդյունքն այն էր, անդում է Մամեդովան, որ «Հայկական լեռնաշխարհը, ինչպես նաև հայկական մայրաքաղաքները (որոնք սկզբնապես տեղաբաշխվում էին Երևանի շուրջը) տեղափոխվեցին Արևելյան Անատոլիայի տարածք՝ մեր հողերից հազար կիլոմետր հեռավորության վրա»⁴:

ԽՍՀՄ փլուզումից հետո, երբ վերացավ Կրեմլի քաղաքական-գաղափարախոսական գրաքննությունը, և Ադրբեջանը ձեռք բերեց անկախություն, հատկապես՝ Հեյդար Ալիևի իշխանության գալով (1993 թ.), մասնագետ պատմաբաններին տրված անմիջական քաղաքական պատվերի հետևանքով պատմության արտագրումը և «մաքրումը հայերի ժառանգությունից ու հայությունից՝ որպես պատմության գործող անձից» դարձել են Ադրբեջանի Հանրապետության պետական ռազմավարություն: Տվյալ երևույթի հետազոտության կոնկրետ կողմերը թողնենք մեր մենագրական աշխատության գործընկերներին, իսկ մենք կանգ առնենք այն սպառնալիքների որոշ ընդհանրացված բնութագրերի վրա, որոնք գիտելիքների համաշխարհային համակարգի համար ստեղծում է ադրբեջանական կեղծ գիտությունը, որն ամենաբարձր մակարդակով պետական ղեկավարմամբ իրականացվող պատմության լայնամասշտաբ նենգափոխման արդյունք է:

Ինչպես իր մենագրության մեջ գրում է ՌԴ ԳԱ ազգաբանության և մարդաբանության ինստիտուտի գլխավոր գիտական աշխատող, Եվրոպական ակադեմիայի անդամ Վիկտոր Շնիրելմանը, «այն բանի վերլուծության տեսակետից, թե ներկայումս ադրբեջանական պատմագրության մեջ ինչ է տեղի ունենում և ինչպես է դա արվում, առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Նախիջևանի Ինքնավար Հանրապետության 70-ամյա հորեյանի տոնակատարության պետական հանձնաժողովի նիստը, որը տեղի է ունեցել Հեյդար Ալիևի նա-

⁴ «Албания или Атропатена? Как «сочиняют» древнюю историю Кавказа». «Эхо» (Баку), 29 апреля 2006 г.

խագահությամբ 1999 թ. փետրվարի 9-ին: Բացելով նիստը՝ Նախագահը Ադրբեջանի պատմությունը ճշմարտացի գրելու կոչ է արել և շեշտել է այդ հորեյլանի քաղաքական նշանակությունը: Ցուցադրելով «պատմությունը ճշմարտացի գրելու իր ըմբռնումը»՝ Նախագահը հայտարարել է, թե իբր 1918–1919 թթ. Ադրբեջանական ժողովրդավարական Հանրապետությունը Հայաստանին կամովին զիջել է Երևանի խանության և Երևան քաղաքի նկատմամբ իր իրավունքները: Սակայն այդ ժամանակ ոչ մի Երևանի խանություն արդեն չկար, այլ կար Երևանի նահանգ, որում բնակչության մեծ մասը կազմում էին հայերը»⁵:

ԱդրՀ Նախագահ Իլիհան Ալիևը ցուցադրում է իր հոր կեղծարարական ուղեգծի ժառանգականությունը: 2005 թ. դեկտեմբերի 14-ին Ադրբեջանի Գիտությունների ակադեմիայի 60-ամյակի առիթով իր ելույթում նա ադրբեջանական գիտնականներին կոչ է արել ներգրավվելու մի ծրագրում, որի նպատակն է համաշխարհային հանրության առջև հիմնավորելու այն փաստը, թե Ղարաբաղի հայությունը չունի Լեռնային Ղարաբաղի նկատմամբ պատմական իրավունքներ: Ալիևը խոստացել է դրամավորել ադրբեջանցի մասնագետների ջանքերի միավորումը իր այն թեզի մշակման ու քարոզման գործում, թե «հայերը Ադրբեջանի անկապտելի մաս կազմող Լեռնային Ղարաբաղ եկել են որպես հյուրեր», ուստի և «բացարձակապես իրավունք չունեն պնդելու, թե անցյալում Լեռնային Ղարաբաղն իրենց է պատկանել»⁶:

Վերահրատարակության ժամանակ աղավաղելով աղբյուրները և ստեղծելով նոր կեղծված ու շինծու աղբյուրներ՝ ադրբեջանական գիտությունը պետության ղեկավարի պատվերով անառակացնում է գիտության բուն նախանշանակումը որպես ճշմարտության օբյեկտիվ որոնման գործիք: Գիտական հետազոտությունների ընթացքում դրա մեթոդաբանության մեջ ներբերվում են գիտությանը միանգամայն օտար

⁵ В. А. Шнирельман. История и большая политика. «Войны памяти: мифы, идентичность и политика в Закавказье». М., 2003, сс. 246–255.

⁶ «Речь Президента Азербайджана Ильхама Алиева на торжественном собрании, посвященном 60-летию Национальной Академии Наук», 14 декабря, 2005 (<http://www.president.az>); «Azərbaycan Prezidenti, Rəsmi İnternet səhifə» (http://archive.president.az/print.php?item_id=20070810125435235&sec_id=11).

սկզբունքներ ու մեթոդներ, որոնք բնորոշ են տեղեկության պատե-
րագմին: Վերջինիս համակարգաստեղծ սկզբունքներից են ապատեղե-
կատվությունը և ձեռնածությունը (մանիպուլյացիան), ինչով էլ այն հա-
կադրվում է գիտությանը, որը կոչված է ծառայելու փաստերի հավաս-
տիության և աղբյուրների արժանահավատության հիմքի վրա ճշմար-
տության որոնմանը:

Մեծ բացթողում է այն, որ Հայաստանում չկան աղվանագիտության և
աղբբեջանագիտության դպրոցներ: Թեև ԵՊՀ և Հայաստանի ԳԱԱ
թյուրքագետների թվից որոշ էնտուզիաստներ այդ ուղղությամբ խրա-
խուսման արժանի փորձեր են ձեռնարկում, սակայն տվյալ խնդիրը
Հայաստանի իշխանությունների կողմից առայժմ չի ընկալվում որպես
հայոց պետության համար ինչպես ակադեմիական, այնպես էլ քաղա-
քական-անվտանգային գերակայություն: Ակներև է Արցախի և Ադ-
վանքի պատմության վերաբերյալ սկզբնաղբյուրների (Մովսես Կաղան-
կատվացի, Մխիթար Գոշ, Կիրակոս Գանձակեցի և ուրիշներ) հետևո-
ղական վերատպման և աշխարհի՝ այդ բնագավառի գիտական կենտ-
րոններում ու լայն մասնագիտական ցանցերում տարածման պետա-
կան ծրագիր մշակելու անհրաժեշտությունը: Հայաստանի պատմութ-
յան կեղծարարների դեմ պայքարի տրամաբանությունը ենթադրում է
հայագիտական հետազոտությունների ու հրատարակությունների
կենտրոնացում ոչ թե «Հայ ժողովրդի պատմության», այլ՝ «Հայաստա-
նի պատմության» վրա: Ընդամին հատուկ ուշադրության է արժանի
«Հայոց Սփյուռքի պատմության» մշակումը:

Հայ պատմաբանները պետք է հաշվի առնեն այն փաստը, որ
աղբբեջանցի կեղծարարները մակաբուծում են որոշ հայ հեղինակների
«վարժանքների» վրա, երբ նրանք իրենց աշխատություններում հար-
ցականի տակ են դնում այս կամ այն պատմական փաստի և աղբյուրի
վերաբերյալ դատողությունների ճշմարիտությունը, թեև դրանք հայ
ժողովրդի պատմության դրական կողմերի վկայությունն են և արդեն
լայն ճանաչում են ստացել համաշխարհային ակադեմիական շրջան-
ներում: Աղբբեջանցի կեղծարարների կողմից հայ հեղինակների նման
անզգույշ ակադեմիական վարժանքների խարդախ օգտագործումը
լուսաբանող հատկանշական փաստ է պրոֆեսոր Նիկոլայ Հովհան-

նիսյանի հետևյալ վկայությունը: Հանդես գալով այս կոլեկտիվ մենագրության հայեցակարգի քննարկմանը նվիրված մեթոդաբանական սեմինարում՝ պրոֆեսոր Հովհաննիսյանը հայտնել է, որ Անդրկովկասի պատմության նենգափոխման ադրբեջանական դպրոցի «գուրու» ակադեմիկոս Զիյա Բունիաթովը ժամանակին անձնական գրույցում խոստովանել է, որ «Աղվանագիտության» գծով իր աշխատություններում զգալի չափով հենվել է գիտական շրջաններում հարգանք վայելող ակադեմիկոս Սուրեն Երեմյանի այն աշխատությունների վրա, որոնք վերաբերում են հայ ժողովրդի ծագումնաբանությանը և Անդրկովկասի պատմական աշխարհագրությանը: Ինչպես հայտնի է, նման անզգուշության փաստերը հայ հասարակական գիտության մեջ ամենևին էլ եզակի չեն:

Համաշխարհային գիտության հետ փոխադարձ կապի պրոբլեմը այն առավել գերակա պահանջներից է, որոնք ներկայացվում են գիտելիքի բոլոր բնագավառներում գործող ազգային գիտական դպրոցներին: Գիտության ազգային բաժինների համար գիտելիքի միասնական համաշխարհային համակարգին ինտեգրվածության տվյալ գերխնդիրը մարդկության համընդհանուր ճանաչում ստացած մտավոր ստանդարտներին դրանց համապատասխանության գնահատման առավել կարևոր չափանիշներից մեկն է: Այդ համապատասխանության գրավականներն են ինչպես նոր գիտելիքների արտադրության բարձր տոնուսը, այնպես էլ այն միջազգային գիտական շփումների դինամիկ զարգացումը, որոնք իրականացվում են ճշմարտության ճանաչողությանը նպատակաուղղված համագործակցություն ծավալելու համար, այդ թվում նաև պատմության ու պատմագրության ոլորտում:

Հայաստանի իշխանությունները պետք է անվտանգային գերակայություն համարեն այն վտանգը, որ ադրբեջանական պետության վարած լայնամասշտաբ կեղծարարական քաղաքականության պայմաններում հայկական պատմական գիտությունը կարող է հայտնվել ակադեմիական աշխարհի ծայրամասում և կորցնել այն հեղինակությունը, որը 20-րդ դարում ձեռք էր բերվել պատմաբանների, պատմության փիլիսոփաների ու պատմագիրների միջազգային գիտական միջավայրում: Անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ պարագան. ինչպես Հայաստա-

նում, այնպես էլ արտասահմանյան գիտական կենտրոններում հայագիտության ձեռքբերումները պայմանավորվում են ոչ միայն հայրենական պատմության ուսումնասիրությամբ, այլև ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող մի շարք պատմական պրոբլեմների հետազոտման բնագավառում արտասահմանյան գիտական կենտրոնների լայն շրջանի հետ համագործակցությամբ:

Միևնույն ժամանակ, տվյալ բնագավառում միասնական պետական քաղաքականություն չլինելու հանգամանքը, չնայած Ազգային անվտանգության ռազմավարության՝ ՀՀ Նախագահի կողմից հաստատված գերակայություններին⁷, ինչպես նաև Հայաստանում և արտասահմանում գործող հայագիտական կենտրոններին ցուցաբերվող նվաստացուցիչ սուղ ֆինանսական աջակցությունը կանխորոշում են համաշխարհային գիտության գործընկերային ակադեմիական օղակների հետ հայ գիտնականների համագործակցության նեղ ճակատն ու նվազ արդյունավետությունը: ՀՀ իշխանությունների կողմից գիտական հետազոտությունների և գիտական շփումների պլանավորումը չի կատարվում ըստ այն քաղաքական, ֆինանսական ու գիտական ռեսուրսների մասնագիտական գնահատումների, որոնք ԱդրՀ իշխանությունները ներդրում են Հայաստանի պատմության նենգափոխման և համաշխարհային գիտական ընկերակցության շրջանակներում հակահայկական շինծու աղբյուրների քարոզչության պետական ծրագրի մեջ, որի նպատակն է Հայաստանի ու Ղարաբաղի տարածքի, ինչպես նաև հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգության նկատմամբ Ադրբեջանի հավակնությունների հիմնավորումը:

Ներկայացվող մենագրական ժողովածուի հեղինակային կոլեկտիվը, մտահոգված լինելով Հայաստանի, Արցախի և Սփյուռքի ապագայով ու

⁷ Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն» (հավանության է արժանացել ՀՀ Նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի 2007 թ. հունվարի 26-ի նիստում), ՀՀ Նախագահի 2007 թ. փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագրի հավելված (<http://www.mil.am/arm/?page=49&id=&p=0&y=2011&m=01&d=26>), նաև՝ Հ. Ս. Քոթանջյան, Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում: Ե., 2008, էջ 210:

կատարելով իր քաղաքացիական պարտքը, հիմք է ընդունել հետևյալ պարզ ճշմարտությունը: Եթե այսօր Հայաստանի պատմությունը համաշխարհային ընկերակցությանը թելադրվող՝ ճշմարտության քաղաքական կեղծումից չպաշտպանվի հայ ժողովրդի թշնամիներից բխող վտանգին համարժեք միջոցներով, ապա դա կարող է «կրակել» շատ ժողովուրդների ապագային՝ անդառնալի վնասներ պատճառելով նրանց ազգային անվտանգության ռազմավարական շահերին:

Ադրբեջանի կողմից բխող սպառնալիքներին հակազդեցության պետական ռազմավարություն ու քաղաքականություն մշակելիս հարկ է նկատի առնել պատմության և պատմագրության քաղաքական աղավաղումների պատվիրատուի դերում հանդես եկող Բաքվի իշխանությունների գիտականորեն անբարոյական մտահղացման բուն էությունը: Ադրբեջանական կեղծարարները, հայ ժողովրդի պատմությանը վերաբերող գիտական ճշմարտության հետ մեկտեղ համաշխարհային գիտական ընկերակցության քննարկմանը ներկայացնելով Անդրկովկասի պատմության իրենց նենգափոխված տարբերակը, հույս ունեն, որ ճշմարտությունը կվերստուգվի մի երրորդ՝ «միջնորդ», կողմի դիրքերից, այն է՝ Ադրբեջանի իշխանությունների վարձահրավիրած արտաքին գիտական շրջանների կողմից: Ադրբեջանցի կեղծարարները գործում են այն դիտավորությամբ, որ հայկական գիտական դպրոցները կներքաշվեն ադրբեջանական կեղծիքների շուրջ արդեն սովորական դարձած և Ադրբեջանի համար ծեռնտու համաչափ մենամարտերի մեջ:

Սակայն Հայաստանի համար արդյունավետ պետք է համարել նման մենամարտերից հրաժարման ռազմավարությունը և նենգափոխումներին հակազդեցությունը համաշխարհային գիտական կենտրոնների հետ համագործակցությամբ, որն իրականացվի պատմական ճշմարտության՝ որպես գիտական ճանաչողության գլխավոր նպատակի քայլայնամբ ընդհանուր մտահոգության դիրքերից:

Ամփոփելով այս մշակման ներածական հոդվածը՝ պատիվ ունեմ նշելու այն խորհրդատվության կարևորությունը, որը մենագրական ժողովածուի պատրաստման ընթացքում ԱՌՀԻ-ի հեղինակային կոլեկտիվի գիտական ղեկավարներն ստացել են ՀՀ ԳԱԱ հայագիտության և

հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար *Վ. Բ. Բարխուդարյանից*, ՀՀ Կրթության և գիտության նախարարի տեղակալ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու *Վ. Վ. Հարությունյանից* և նախարարության Գիտության պետական կոմիտեի նախագահ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր *Ս. Գ. Հարությունյանից*:

Ցանկանում եմ արդյունավետ համագործակցության համար շնորհակալություն հայտնել ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր *Մուրադ Հասրաթյանին*, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, արվեստագիտության դոկտոր *Լիլիթ Երնջակյանին*, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գլխավոր մասնագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր *Պարույր Մուրադյանին*, ԵՊՀ քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնի տնօրեն, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, արտակարգ և լիազոր դեսպան *Ղավիթ Հովհաննիսյանին*, Վ. Բրյուսովի անվան ԵՊԼՀ մշակութային մարդաբանության և երկրագիտության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու *Հրանուշ Խառատյանին*, նույն բուհի ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների և ժողովրդավարության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու *Միքայել Զոյանին*:

Ստորև հավելվածների տեսքով ներկայացվում են միջազգային ամբիոններից հնչեցված իմ այն ելույթները, որոնք վերաբերում են Հայաստանի և ընդհանրապես տարածաշրջանի պատմության նենգափոխման պատվիրման Ադրբեջանի պետական քաղաքականությանը, և որոնց միջոցով գիտական փորձաքննության են ենթարկվել սույն ռազմավարական մոտեցման որոշ հիմնադրույթներ:

**ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԵՂԾՈՒՄԸ՝
ՍՊԱՌՆԱԼԻՔ ԿՈՒԵԿՏԻՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ⁸**

(հատված ՀԱՊԿ-ի անդամ պետությունների ներկայացուցիչների՝
Մոսկվայում 2010 թ. դեկտեմբերի 21-ին կայացած 8-րդ միջազգային
գիտագործնական գիտաժողովում հեղինակի ունեցած ելույթից)

...Որպես լրացում ՀԱՊԿ գործունեության տեղեկատվական բաղկացուցչի վերաբերյալ մեկնաբանություններին՝ կոնֆերանսի հարգարժան մասնակիցների ուշադրությունը պետք է հրավիրել մեր ժողովուրդների պատմական ժառանգությունը թշնամական քաղաքական նպատակներով կեղծելու հանգամանքի վրա: Ակնհայտ է Հայրենական մեծ պատերազմի և ՀԱՊԿ բոլոր անդամ պետությունների ընդհանուր սեփականությունը հանդիսացող մյուս իրադարձությունների պատմությունը կեղծել թույլ չտալու առանձնահատուկ կարևորությունը: Մեր ժողովուրդների պատմության նման խեղաթյուրումներն իրենցից սպառնալիք են ներկայացնում նրանց ազգային անվտանգության և, ուրեմն, նաև ՀԱՊԿ կոլեկտիվ անվտանգության շահերին: Ուշադրության է արժանի իր պատմական ժառանգության նկատմամբ նման սպառնալիքներին արձագանքելու Ռուսաստանի Դաշնության փորձը: Ռուսաստանի պատմությունը կեղծելուն հակազդելու գործիքներից մեկը դարձավ ՌԴ նախագահի որոշմամբ ստեղծված հատուկ հանձնաժողովը: Հենվելով ռուսաստանյան փորձի և ազատ ակադեմիական քննարկման նորմերի վրա և ելնելով մեր կոլեկտիվ անվտանգության շահերից, իմ կարծիքով, տեղին կլիներ ՀԱՊԿ շրջանակներում ստեղծել մեր կազմակերպության անդամ պետությունների պատմական ժառանգության կեղծման հակազդեցության կոորդինացման հանձնաժողով:

Ադրբեջանցի գիտնականների՝ Հարավային Կովկասի պատմությունը քաղաքականապես կանխակալ՝ կեղծ գիտական եղանակով վերաշարադրելու այսպիսի մեթոդին հիմնավորված գնահատական տվեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը դեկտեմբերին Աստանայում տեղի ունեցած ԵԱՀԽ-ի գագաթնաժողովում: Հայաստանի և դարաբաղյան կարգավորման հարցով Մինսկի խմբի համանախագահության վրա ճնշում գործադրելու համար պատմության կեղծարարության և ձեռնածությունների օգտագործման հիմքում ընկած է նախագահ

⁸ Տես «Հայաստանի Հանրապետություն», 2010 թ. դեկտեմբերի 24 (թարգմանաբար արտատպված է հետևյալ հրապարակումից՝ «Фальсификация истории-угроза коллективной безопасности: доклад Гайка Котанджяна на Конференции ОДКБ», ИА «REGNUM», 22.12.2010 (www.regnum.ru/news/13593777.html)):

Իլիհամ Ալիևի անթաքույց քաղաքական պատվերը: Ադրբեջանական պատմությունը հնացնելու և զարդարելու նպատակով Անդրկովկասի պատմությունը վերաշարադրելու համար գիտական ռեսուրսներ մեջտեղ բերելու նրա բացահայտ հրապարակային ցուցումը գիտությունների ակադեմիային, որը հնչեց 2005 թվականին Ադրբեջանի ԳԱԱ հոբեյանական ժողովում պետության ղեկավարի զեկուցման մեջ, հանգեցրեց նրան, որ համաշխարհային գիտությունն սկսեց աղտոտվել մեծածախս ենեցափոխումներով և կեղծիքներով, որոնք հակասում են փաստերին, համաշխարհային գիտության հեղինակավոր աղբյուրներին: Ակադեմիական նորմերի այդ աղաղակող խախտումների կապակցությամբ Հայաստանի գիտությունների ակադեմիան հինգ տարի առաջ համապատասխան դիմումով դիմեց համաշխարհային գիտական հանրությանը:

Սույն զեղծարարները յուրացնում են հայերի, պարսիկների, ուղիների, լեզգիների, ավարացիների, թալիշների, թաթերի և մեր տարածաշրջանի այլ ժողովուրդների պատմությունն ու մշակութային ժառանգությունը. դարերով հետ է տարվում ադրբեջանցիների նախնիների՝ Կենտրոնական Ասիայից Անդրկովկաս զանգվածային վերաբնակության պատմությունը, որոնք այստեղ են հաստատվել ընդամենը մեր դարաշրջանի 11-րդ դարից: Ընդ որում՝ «ադրբեջանական պատմության և մշակույթի յուրացման» մեջ ցինիկորեն մեղադրվում են հենց բնիկ ժողովուրդները՝ հակագիտական ջարդի զոհերը: Նման մոտեցման դեպքում պատմության կեղծումն, ըստ էության, դառնում է քաղաքական սուր զենք, որն օգտագործվում է մեր ժողովուրդների ճակատագրերի համար նշանակալից իրադարձությունների կանխակալ մեկնաբանման նպատակով՝ զեղծարար պետությանը վերապահելով, այսպես կոչված, «անվիճելի իրավունք» հարևանների պատմության, մշակույթի և, վերջնական արդյունքում, տարածքի նկատմամբ: Այսպիսով, ադրբեջանական իշխանությունների քաղաքականությունը նախապատրաստում է Հայաստանի Հանրապետության դեմ ագրեսիայի հակագիտական պատմական հիմնավորում՝ հանդես բերելով կեղծ գիտական հավակնություններ ՀԱՊԿ անդամ պետության տարածքի նկատմամբ:

Ասվածն ի մի բերելով՝ կարելի է ամփոփել, որ պատմության կեղծմանը հակազդելուն կոչված ՀԱՊԿ հանձնաժողովի զլխավոր խնդիրը կարող էր դառնալ պատմական փաստերի և իրադարձությունների կեղծման փորձերին հակազդելու ռազմավարության և կոորդինացված քաղաքականության մշակումը՝ ուղղված ինչպես մեր կոլեկտիվ անվտանգության ապահովմանը, այնպես էլ ողջ մարդկության համար այնքան կարևոր հումանիտար անվտանգության խնդրի լուծմանը, որն է ճշմարտության հուսալի պաշտպանությունը համաշխարհային գիտության համընդհանուր ակադեմիական ստանդարտներին համապատասխան:

ՆԱԽԱԳԱՀ ԱԼԻԵԿԸ ՓՈՆԶԻԶՈՒՄՆԵՐԻ ՓՈՆԱՐԵՆ ԱՌԱԶԱՐԿՈՒՄ Է ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆԵՆԳԱՓՈԽՈՒՄ⁹

(«ԻԱ Ռեզնում» գործակալության հարցազրույցը հեղինակի հետ. 23.12.2005 թ.)

2005 թ. դեկտեմբերի 14-ին՝ Ղարաբաղյան կարգավորմամբ զբաղվող Մինսկի խմբի համանախագահների ժամանելու օրը, Ադրբեջանի Նախագահ Իլիհամ Ալիևը, ելույթ ունենալով Ադրբեջանի Գիտությունների ակադեմիայի 60-ամյակի կապակցությամբ, ադրբեջանական գիտնականներին ու երկրի համապատասխան հիմնարկներին կոչ արեց ներգրավվելու մի ծրագրում, որի նպատակն է համաշխարհային հանրության առջև հիմնավորել այն դրույթը, թե Ղարաբաղահայությունը չունի պատմական իրավունքներ բնակվելու իր բնօրրանում՝ Արցախում (Լեռնային Ղարաբաղում): Նախագահ Ալիևը խոստացավ առանձնակի մեծ չափերով ֆինանսավորել ադրբեջանական գիտնականների ջանքերի միավորման ծրագրերը՝ միտված իր այն թեզի մշակմանն ու քարոզմանը, թե «հայերը, լինելով հյուր, որը Ղարաբաղում է հայտնվել 19-րդ դարի 70-ական թվականներին, Լեռնային Ղարաբաղի տարածքի նկատմամբ չունեն պատմական իրավունքներ»:

Որքանո՞վ է Նախագահ Ալիևի ելույթը համապատասխանում Ղարաբաղյան հակամարտության կողմերի միջև վստահության հաստատման փորձերին, որոնք ձեռնարկում է ԵԱՀԿ Մինսկի խումբը:

Նախագահ Ալիևի ելույթը ժամկետների առումով հարմարեցվել է Մինսկի խմբի համանախագահների այցելությանը տարածաշրջան. այն հասարակայնությանը ներկայացվել է 2005 թ. դեկտեմբերի 14-ին՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի ու Ֆրանսիայի համանախագահների ժամանման օրը: Հոբեյանի կապակցությամբ Նախագահի ունեցած ելույթում շեշտը չի դրվել իր երկրում հիմնարար գիտության զարգացման ռազմավարական ծրագրերի վրա, ինչպես հարկն էր սպասել նման պարագայում: Հարևան պետության ղեկավարի ելույթի էլեյտմոտիվն է ադրբեջանական Գիտությունների ակադեմիային և, ինչպես ինքն է հույժ արտահայտչաբար նշել, «այլ համապատասխան մարմինների» («and other relevant bodies») տրված քաղաքական պատվերը՝ ապացուցելու համաշխարհային գիտությանը հակասող այն վարկածը, թե Ղարաբաղ-Արցախի տարածքում հայ բնակչությունը բնիկ չէ: Այսպիսով՝ Նախագահ Ալիևը հակահայկական հիստերիայի «գիտականացումը» հասցրել է Ադրբեջանի հիմնարար գիտության ռազմավարության մակարդակի:

⁹ Տես Հ. Ս. Քոթանջյան, Անվտանգության քաղաքագիտական պորբլեմներ. ԽՍՀՄ վերակառուցում–Ղարաբաղ, Հայաստան, Անդրկովկաս–Աֆղանստան: Ե., 2009, էջ 431–435:

Խոսքը վերաբերում է ժողովրդավարական հասարակությունների ընկալմամբ աննախադեպ հրապարակային ու վարձատրվող քաղաքական պատվերին՝ տրված հիմնարար գիտությանը, որպեսզի այն կեղծի խաղաղ կարգավորման հարցով միջազգային խորհրդատվությունների առարկա դարձած վիճելի տարածքի պատմությունը: Մյուս կողմից՝ Ադրբեջանի ղեկավարը հայտարարել է, թե տվյալ հիմքի վրա և ավանդական ու էլեկտրոնային ՁԼՄ-ների ներգրավմամբ ծավալված հակահայկական հիստերիայի ուժգնացումը վերցվում է պետական հովանավորության տակ: Մի իրավիճակ, որը մեծ վարպետությամբ նկարագրել է Ջորջ Օռուելն իր «1984» դասական հակաբռնակալական պարսավագրում:

Ադրբեջանի Նախագահի ելույթը հակասում է ոչ միայն հակամարտող ժողովուրդների միջև փոխադարձ անվստահությունը խորացնող քայլերից զերծ մնալու վերաբերյալ Մինսկի խմբի և համանախագահող պետությունների՝ Ամերիկայի, Ռուսաստանի ու Ֆրանսիայի ղեկավարների կոչերին, այլև աշխարհում ընդունված գիտական ստանդարտներին: Այն հակասում է նաև Ղարաբաղյան հակամարտության խաղաղ լուծման գործում ժողովրդական դիվանագիտության ներկայացուցիչներին ներգրավելու մասին վերջին ժամանակներս հնչեցված հուսադրող կոչերի ոգուն:

Ձեր կարծիքով՝ որն է նման քայլի նպատակը:

Ես կնշեի ոչ թե մեկ, այլ մի քանի նպատակ: Առաջին. հետընտրական շրջանում Ադրբեջանի հասարակական կարծիքը ժողովրդավարության պրոբլեմներից վերակողմնորոշել դեպի կուրացուցիչ ազգամիջյան թշնամանքի սովորական հունը: Երկրորդ. կրկին ռևանշիզմի գիրկը մղել այն ուժերը, որոնք հանդես են գալիս տարածաշրջանում խաղաղության հաստատման ու ժողովուրդների առաջադիմական զարգացման համար ծավալված պայքարի ոլորտում: Եվ, վերջին հաշվով, շարունակել հիմնարար հասարակական գիտության՝ որպես օբյեկտիվ գիտական ճշմարտության կրողի բարոյալքումը երկրում և աշխարհում տեղի ունեցող քաղաքական զարգացումների ասպարեզում:

Ինչպե՞ս եք դուք գնահատում ադրբեջանական պետության ղեկավարի անձնական մասնակցությունը ազգամիջյան թշնամանքի քարոզմանը:

Դա այն փաստի վկայությունն է, որ հետխորհրդային տարածությունում դեռ պահպանվում է հասարակական գիտությունը գիտականակերպ քաղաքական քարոզչությամբ նենգափոխելու ավանդույթը: Դատելով ըստ ելույթի ձևի՝

կարող ենք ասել, որ Նախագահ Իլիամ Ալիևը շարունակում է խորհրդային շրջանում Ադրբեջանում ձևավորված և այժմ էլ պահպանվող «ազգի հոր» պաշտամունքի ավանդույթը: Եթե ներկայիս Նախագահ Իլիամ Ալիևին մտովի պատկերացնենք Ադրբեջանի կոմկուսի առաջին քարտուղարի դերում, ապա ամեն ինչ կընդունի իր սովորական տեսքը: Ասիական բռնապետության քաղաքական կենտրոնի միահեծան ղեկավարը խորհրդային պլենումների սցենարներին ճշգրիտ համապատասխանությամբ պատվեր է տալիս Հարավային Կովկասի ժողովուրդների պատմության բնագավառում համաշխարհային հիմնարար գիտության նվաճումները համատարած կերպով նենգափոխելու քաղաքական քարոզչությամբ:

Սակայն խոսքը ոչ միայն ձևի մասին է: Ակներև է, որ տվյալ դեպքում համաշխարհային հասարակական գիտության աչքում վարկաբեկվում է ադրբեջանական պատմագիտության բուն նախանշանակումը: Կաշառման ու կեղծարարներին պետական հովանավորչության միջոցով նրան կարգադրվում է զբաղեցնել խորհրդային ժամանակներից սովորական դարձած «հասարակական գիտությունների ամենամանկանխատեսելի բնագավառի» տեղը, իսկ պատմաբաններին հրահանգվում է ստանձնել քաղաքական ձեռնածուների օգնականների և սովորական դերը: Վտանգավորությունն այն է, որ հարևան պետության ղեկավարը հրապարակավ ու պաշտոնապես պատվիրում է Հայաստանի և Ադրբեջանի պատմության գիտական փաստերի նենգափոխում համաշխարհային գիտության մասշտաբով: Այլ կերպ ասած՝ Գիտությունների ակադեմիային նրա տված կարգադրությունը տարածաշրջանի ժողովուրդների կեղծված պատմության աղբյուրների ստեղծման ծրագիր է, աղբյուրներ, որոնց առաջնորդումը ֆինանսական աջակցության պարագայում պետք է խարխիվստահությունը տվյալ գիտական բնագավառում կատարված այն աշխատությունների նկատմամբ, որոնք արժանացել են համաշխարհային գիտության ճանաչմանը:

Կարո՞ղ եք նշել Ղարաբաղ–Արցախի հայ բնակչության բնիկությունը հաստատող փաստեր, որոնք գիտության տեսակետից անվիճելի են:

Ղարաբաղի հայության բնիկության փաստը հաստատված է ինչպես հայկական, այնպես էլ համաշխարհային բազմաթիվ պատմագիտական աշխատություններով: Այս պարզեմի ավելի մանրամասն քննարկումը թողնենք պատմագիտության ոլորտի մասնագետներին: Որպես արցախահայության բնիկության, ինչպես նաև ամբողջ հայ ժողովրդի մշակութային պատմության մեջ հայերով խիտ բնակեցված Արցախի խաղացած ժանրակշիռ դերի վկայություն սահմանափակվեմ այն փաստի արձանագրմամբ, որ 1600 տարի առաջ հայոց գրերի

ստեղծող Մեսրոպ Մաշտոցը առաջին հայատառ դպրոցը հիմնել էր հենց Ղարաբաղի տարածքում՝ Ամարասի վանքում: Միևնույն ժամանակ, համաշխարհային գիտության համար ակնհայտ է այն իրողությունը, որ ներկայիս ադրբեջանցիների թյուրք նախնիները մինչև միջին դարերը բնակվել են Ալթայի տարածքում ու դրա շրջակայքում՝ Հարավային Կովկասից հազարավոր կիլոմետր հեռավորության վրա: Իհարկե, օբյեկտիվ համաշխարհային գիտության տեսանկյունից նշված փաստերը ամենևին էլ չեն նսեմացնում կամ վեհացնում որևէ մեկի անցյալը: Խոսքը վերաբերում է ինքնին վերցված գիտականորեն ապացուցված փաստերին, որոնք իսկն այդպես են մեկնաբանվում ակադեմիական հանրության ցանկացած՝ ամերիկյան, ռուսական, ֆրանսիական կամ որևէ այլ, անաչառ ազգային օղակում:

Ի՞նչ կարող էք ասել Ադրբեջանի պատմության նենգափոխման այն փաստերի մասին, որոնք հայտնի են դեռ խորհրդային ժամանակներից:

Սա շատ զգայուն ոլորտ է, որն առնչվում է ոչ միայն գիտելիքներին, այլև հասարակ ժողովրդի զգացմունքներին: Միտումնավոր կերպով չեն հիշատակում Հայաստանի պատմության փաստերի գռեհիկ նենգափոխման փորձերը, որոնք ձեռնարկել են Խորհրդային Ադրբեջանի գիտնականները և նրանց ժամանակակից հետնորդները: Ադրբեջանական իշխանությունների կողմից ոգեշնչվող կեղծիքների էությունը հասկանալու համար կարող ենք սահմանափակվել Ադրբեջանի պատմության նենգափոխման մի քանի հատկանշական ու հանրահայտ նախադեպերով՝ կապված հարևան ժողովուրդների պատմական ժառանգության «սեփականաշնորհման» հետ: Ընդամին յուրացվել են նաև Հարավային Կովկասի բնիկ ժողովուրդների այն մշակութային հուշարձանները, որոնք անգամ ստեղծվել են նախքան այդ տարածքների բնակեցումը թյուրքական ցեղերով: Քաղաքական կենտրոնի հրահանգով ստեղծվում է գիտականի կարգավիճակի հավակնող ադրբեջանական աղբյուրների համակարգ, և ֆինանսավորվում է դրանց քարոզչությունը: Նույն մեթոդաբանությունն է կիրառվում նաև այն դեպքում, երբ Ադրբեջանի պատմությունը նենգափոխվում է ի հաշիվ արցախահայության պատմական ժառանգության, ինչի մասին Նախագահ Ալիևը կարգադրություն է տվել իր կողմից ձեռնածվող Գիտությունների ակադեմիային:

Նման փաստերից կարելի է նշել Իրանի ժողովրդից պարսկական բանաստեղծ Նիզամիի (Նիզամ-ուդդին Աբու Մուհամադ Իլյաս իբն Յուսուֆ, 1141–1203) դավանների յուրացման նախադեպը: Այս երևելի անձնավորության կերպարի նենգափոխումը դրված է «խորհրդային ադրբեջանական ժողովրդի» ազգային ինքնության հիմքում: Հայտնի է, որ խորհրդային շրջանում Նիզամին «Նիզամի

Գյանջևի» անվամբ հասցվեց աղբբեջանական ժողովրդի ազգային-մշակութային ինքնության խորհրդանիշի կարգավիճակի: Ուստի այն բազում թիրախներից մեկը, որոնց վրա Աղբբեջանի Նախագահի կոչով պետք է գրոհեն աղբբեջանցի կեղծարարները, դառնալու է «Համապիտանի բրիտանական հանրագիտարանը», կամ «Բրիտանիկան»: Անպարսավելի հեղինակություն վայելող «Բրիտանիկան» վկայում է, որ Նիզամին, որին ստալինյան քաղաքական կամայականությունների տարիներին Աղբբեջանի կոմկուսը հռչակեց որպես իր ազգային բանաստեղծի, իրականում եղել է իրանական Ղոմ (Կոմ) քաղաքում ծնված պարսիկ, որը հետագայում տեղափոխվել է այդ ժամանակ Պարսկաստանի կազմում գտնվող Գյանջա: «Բրիտանիկան» և աշխարհի իրանագետները նաև վկայում են, որ Նիզամին ոչ մի տող չի գրել թյուրքերենով. նա ստեղծագործել է Պարսկաստանում և ստեղծագործել՝ բացառապես իր մայրենի լեզվով՝ պարսկերենով:

Նման դեպքերում աղբբեջանական մասնագետները սովորաբար ասում են, թե դրանք կեղծիքներ են, որոնք արտասահմանյան գիտական կենտրոնները կատարել են հայկական լոբբիի ազդեցությամբ: Ի՞նչ կարծիքի եք:

Իհարկե, անարդար կլիներ ձեռնածություններն ու նենգափոխումները վերագրել բոլոր աղբբեջանական գիտնականներին: Ինչ վերաբերում է հարևան պետության կողմից իր գինանոցում ներառված օբյեկտի առաջանցիկ զրպարտության մեթոդին, ապա այն լավ է լուսաբանվում հայտնի ռուսական առածով, ըստ որի՝ գողի լավագույն պաշտպանությունը «գողին բռնիր» նրա զիլ զոչումներն են:

Անդրադառնալով նենգափոխման վերը հիշատակված օրինակին, որը հատկանշական էր Խորհրդային Աղբբեջանի համար, նկատենք, որ «Համապիտանի բրիտանական հանրագիտարանը» հրատարակվում է 1768 թվականից: Նիզամին՝ որպես պարսիկ բանաստեղծներից մեկը, նշվում է «Բրիտանիկայի» դեռ այն հրատարակություններում, որոնք լույս են տեսել շատ ավելի վաղ, քան ձևավորվել է հայկական լոբբին: Ինչպես հայտնի է, Սփյուռքն ստեղծվել է Թյուրքիայում հայերի էթնիկական գտման հետևանքով՝ ձեռնարկված 1895–1896 և 1915–1923 թվականներին տեղի ունեցած զանգվածային կոտորածների ընթացքում, իսկ հայկական լոբբին՝ որպես Սփյուռքի քաղաքական ինքնարտահայտման ձև, կազմավորվել է միայն 20-րդ դարի երկրորդ կեսին:

Այս նույն տրամաբանությամբ անհիմն են նաև Աղբբեջանում լայն տարածում ստացած չարաշահումները՝ կապված Նիզամի Գյանջևիի ազգային-էթնիկական ինքնության հարցում ժամանակակից իրանական իշխանությունների վա-

րած իբր հակաադրբեջանական քաղաքականության հետ: Նիզամիի պարսկական ծագումը և պարսկական պատմությանն ու մշակույթին նրա պատկանելությունը հաստատող փաստեր կարելի է գտնել բազմաթիվ ձեռագրերում, որոնք ստեղծվել են հարյուրավոր տարիներ առաջ՝ մինչև Իմամ Հոմեյնիի իշխանության գալը և Ադրբեջանական ԽՍՀ ու նրա վաթսուներեք Գիտությունների ակադեմիայի ստեղծումը:

Ձեր կարծիքով՝ ինչպես պետք է հակազդել հակահայկական հիստերիայում խաղաղոլորյքների բարձրացմանը, ինչի մասին իր ելույթում հայտարարել է Ադրբեջանի Նախագահը:

Սկզբունքայնորեն, կշռադատված, հետևողականորեն: Որպես առաջին քայլ՝ ես Հայաստանի Ազգային ակադեմիայի իմ մեծահարգո կոլեգաներին կոչ եմ անում Ադրբեջանի Գիտությունների ակադեմիայի հոբբեյանի կապակցությամբ Ադրբեջանի Նախագահի ճառը դարձնել մեր Ակադեմիայի նախագահության ընդլայնված նիստում համակողմանի քննարկման առարկա, ընդսմին նիստին հրավիրել հայրենական և արտասահմանյան մասնագետների, իշխանությունների, ինչպես նաև Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների:

«ԱՂԻՐԲԵԶԱՆՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆԵՆԳԱՓՈԽՈՒՄԸ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ
ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ¹⁰

Ինչպես արդեն նշվել է, դեկտեմբերի 27-ին Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայում (ԳԱԱ) կայացավ Կլոր սեղան, որի մասնակիցները քննարկեցին այն կոչի պատճառներն ու նպատակները, որը Ադրբեջանի նախագահ Իլիամ Ալիևը հնչեցրեց դեկտեմբերի 14-ին՝ Ադրբեջանի ԳԱԱ 60-ամյակի կապակցությամբ: Երևանում կայացած Կլոր սեղանի արդյունքներով ընդունված հայտարարությունը 2005 թ. դեկտեմբերի 30-ին հանձնվեց Հայաստանի Արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանին՝ դիվանագիտական կապուղիներով հետագա առաջնդման համար: «ԻԱ ՌԵԳՆՈՒՄ»-ը ներկայացնում է Հայաստանի ակադեմիական ընկերակցության Հայտարարության լրիվ տեքստը. ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՊԿ-Ի ՄԻՆԱԿԻ ԽՄԲԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԻՆ՝ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՆԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԳԵՏՆԵՐԻ ԿԼՈՐ ՍԵՂԱՆԻ ԱՆՈՒՆԻՑ, 2005 Թ. ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 27, ԵՐԵՎԱՆ

2005 թ. դեկտեմբերի 14-ին Ադրբեջանի Գիտությունների ակադեմիայի 60-ամյակին նվիրված հանդիսավոր նիստում հանրապետության Նախագահ Իլիամ Ալիևը իր ճառում դիմեց ադրբեջանական պատմաբաններին և իրավասու մարմիններին՝ կոչ անելով գտնել Լեռնային Ղարաբաղում ադրբեջանցիների բնիկության և հայերի եկվորության ապացույցներ, դրա համար խոստանալով մեծ պետական դրամավորում: Նման քաղաքական պատվերի միջոցով հարևան երկրի նախագահը շարունակում է ադրբեջանական իշխանությունների և, մասնավորապես, իր հոր՝ Հեյդար Ալիևի քաղաքականությունը, որը հայտնի է դեռ խորհրդային տարիներից և ուղղված է այն «թեզի հիմնավորմանը», թե վաչկատուն թյուրքական ցեղերը, որոնք իրականում Ղարաբաղի տարածքում հայտնվել են միայն 18-րդ դարի կեսերին պատմականորեն հայկական Արցախում, բնակվել են հնագույն ժամանակներից, մինչդեռ իրենց բնօրրանում հազարամյակներ բնակվող հայերը հայտարարվում են հյուրեր, որոնք իբր տեղափոխվել են միայն 19-րդ դարի 70-ական թթ.:

¹⁰ Տես «"В Азербайджане продолжается фальсификация истории региона": заявление академического сообщества Армении». ИА «REGNUM» (<http://www.regnum.ru/news/armenia/566706.html>):

Նման գործունեությունը արդեն որերորդ անգամ է հաստատում այն փաստը, որ Եվրոպայի Խորհրդի անդամ հանդիսացող Ադրբեջանում գոյություն չունեն ժողովրդավարության տարրական նորմեր, հասարակական-քաղաքական ու գիտական կյանքը շարունակում է մնալ իշխանությունների անմիջական վերահսկողության և քաղաքական գրաքննության ներքո: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է այն հրապարակային և վարձատրվող քաղաքական պատվերին, որը տրվել է հիմնարար գիտությանը՝ պատմությունը նենգափոխելու նպատակով:

Հատկանշական է, որ Ադրբեջանի Նախագահի այս աննախադեպ քայլը ձեռնարկվել է ՀԱՊԿ-ի Մինսկի խմբի համանախագահների Բաքու ժամանելու օրը և Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի լուծման գործում ուրվագծվող որոշ առաջընթացի շրջանում:

Ինչպես Նախագահի օբստրուկցիան, որը հարմարեցված էր տարածաշրջան համանախագահների ժամանմանը, այնպես էլ Նախիջևանի Հանրապետության տարածքում վերջին օրերին ձեռնարկված Ջուլֆայի հայկական խաչքարերի ոչնչացումը թույլ են տալիս պնդել, որ նման քաղաքականությունը նպատակ ունի տարածաշրջանում արհեստականորեն սրելու իրավիճակը և խաթարելու Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացը:

Վերը շարադրվածի հետ կապված՝ 2005 թ. դեկտեմբերի 27-ին Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության դահլիճում կայացած Կլոդ սեդանի մասնակիցները հայտարարում են.

– ՀԱՊԿ-ի Մինսկի խմբի ուշադրությունը հրավիրում ենք Բաքվում 2005 թ. դեկտեմբերի 14-ին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի արած հակագիտական, հակաժողովրդավարական և հակահայկական սադրիչ հայտարարության վրա, որն ուղղված է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացի խաթարմանը, չի նպաստում հակամարտող կողմերի միջև վստահության կլիմայի ձևավորմանը և կասկածի տակ է դնում հակամարտության կարգավորման գործընթացում ադրբեջանական կողմի մտադրությունների անկեղծությունը:

– Հումանիտար և հասարակական գիտությունների ոլորտում քաղաքական թելադրանքի առկայության պայմաններում Ադրբեջանում պետական մակարդակով շարունակվում են ինչպես Հայաստանի, Իրանի, այնպես էլ ամբողջ տարածաշրջանի պատմության նենգափոխումը, հնդեվրոպական և կովկասյան ժողովուրդների պատմական ժառանգությունը որպես «ադրբեջանական» ներկայացնելու ավանդական քաղաքականությունը:

– Հայաստանում հայկական Արցախի պատմության և մշակույթի հետազոտումն ունի բազմադարյան ավանդույթ: Հայաստանի իշխանությունների, գիտական և կրթական ինստիտուտների ղեկավարների, համաշխարհային և հայկական գիտական հանրության ուշադրությունը հրավիրում ենք այն հանգամանքի վրա, որ անհրաժեշտ է գործադրել միասնական ջանքեր՝ ուղղված ադրբեջանցիների կողմից պետական մակարդակով պատմական ճշմարտության նենգափոխման շարունակվող փորձերին հակազդեցությանը, նենգափոխում, որը կատարվում է Հարավային Կովկասի տարածքներում՝ մինչ թյուրքական ցեղերով դրանց բնակեցումը, հարևան բնիկ ժողովուրդների ստեղծած պատմական ժառանգության յուրացման միջոցով:

– Հայագիտությունը պետք է հայտարարվի հանրապետության ազգային անվտանգության բաղադրիչ մաս: Ելնելով դրանից՝ Հայաստանի Ազգային ժողովին առաջարկում ենք ուսումնասիրել ինչպես հայագիտական հաստատությունների, այնպես էլ Հայաստանի Պատմության կարգավիճակի մասին համապատասխան օրինագծի ստեղծման հարցը, և դրա քննարկման գործում ներգրավել Հայաստանի գիտնականներին:

*ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Կլոր սեղանի աշխատանքին մասնակցել են ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Վլադիմիր Բարխուդարյանը**, քաղաքական գիտությունների դոկտոր, Ռուսաստանի Ռազմական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի՝ հակահաբեկչության գծով փորձագետ **Հայկ Քոթանջյանը**, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Նիկոլայ Հովհաննիսյանը**, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Աշոտ Մելքոնյանը**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Արամ Քալանթարյանը**, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և սոցիոլոգիայի ինստիտուտի տնօրեն, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գևորգ Պողոսյանը**, ԵՊՀ պատմության ֆակուլտետի ղեկան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Հայկ Ավետիսյանը**, ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի ղեկան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, **Գառնիկ Անանյանը**, ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ալեքսանդր Սաֆարյանը**, ԵՊՀ հեռուստաժուռնալիստիկայի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Մուշեղ Հովսեփյանը**, ԵՊՀ մամուլի պատմության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Լենդրուշ Ալոյանը**, Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի հայ*

Ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Միեր Կարապետյանը**, «Էջմիածին» հանդեսի գլխավոր խմբագիր, բանասիրական գիտությունների թեկնածու **Վարդան Ղևրիկյանը**, Հայաստանի ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտական աշխատող, պատմական գիտությունների դոկտոր **Հենրիկ Սվազյանը**, Հայաստանի ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիճագրության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գրիգոր Գրիգորյանը**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտական աշխատող, պատմական գիտությունների դոկտոր **Համլետ Պետրոսյանը**, «Ազգ» թերթի տեսաբան, պատմական գիտությունների թեկնածու **Հակոբ Չաքրյանը**:

Կլոր սեղանը վարում էր Հայկական երկրորդ հեռուստաալիքի տնօրենի տեղակալ, քաղաքական մեկնաբան, բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ դոցենտ **Արամ Սաֆարյանը**:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆԵՆԳԱՓՈԽՄԱՆ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՒԴԵՆԻՇՆԵՐԸ

*Պ. Ա. ՉՈՐԱՆՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր,
ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի գիտնական-վերլուծաբան, Ա. Գ. ԱՎԱԳՅԱՆ, պատմական
գիտությունների դոկտոր, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի գիտնական-վերլուծաբան,
Բ. Պ. ՊՈՂՈՍՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի պետի տեղակալ – գիտավերլուծական կենտրոնի պետ,
Վ. Հ. ՏԵՐ-ՄԱԹԵՎՈՍՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի պետի խորհրդական, Վ. Պ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, փոխգնդապետ,
ՀՀ ՊՆ «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի գլխավոր
խմբագրի տեղակալ – իրավաբան*

1. Ադրբեջանական կեղծարարությունների հիմնական պատճառները և զարգացումը: Ադրբեջանի կողմից պատմության նենգափոխումը, որը լայնորեն օգտագործվում է նաև հայության դեմ մղվող տեղեկատվական պատերազմում, կատարվում է երկակի ուղղվածության նպատակներով՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին: Առաջին հայացքից կարող է թվալ, որ ներքին նպատակն է ադրբեջանական հասարակությունում արտաքին թշնամու կերպարի ստեղծմամբ նպաստել այդ գաղափարի շուրջ նրա համախմբմանը և դրանով իսկ լուծել պետության առջև ծառայած հիմնախնդիրները: Դրա խորքային պատճառն այն է, որ Ադրբեջանում դեռևս ավարտված չեն ազգային ինքնության միասնական գիտակցության ձևավորումը և միատարր ազգի կազմավորումը, որոնք Ադրբեջանում կրում են ոչ թե բնականոն, այլ արհեստականորեն պարտադրվող բնույթ¹:

Ադրբեջանում դեռ շարունակվում է «Ադրբեջան» վարչաքաղաքական միավորը ազգ պետության վերածելու, այսինքն՝ մշակութաստեղծ

¹ Տես *В. А. Шнирельман. Войны памяти: мифы, идентичность и политика в Закавказье. М., 2003, сс. 202–203; Г. А. Абдурагимов. Кавказская Албания-Лезгистан: история и современность. СПб., 1995, с. 499:*

պատմական ինքնություն սուբյեկտ ստեղծելու, 1918 թ. սկզբնավորված և խորհրդային տարիներին լայն թափ ստացած գործընթացը: Ադրբեջանական ժողովրդավարական Հանրապետության ստեղծման նախօրեին «կովկասյան թաթարներ» անվանվող բնակչությունը պահպանում էր ցեղային պատկանելության գիտակցումը (այրուհի, թարաքյամա, շահսևան, կենգեռլու, ջևանշիր) և միավորվում էր զուտ մահմեդականության հենքի վրա², քանի որ նույնիսկ 20-րդ դարի սկզբի կովկասյան թաթարների գաղափարախոսությունը կրում էր ոչ այնքան ազգայնականության, որքան պանիսլամականության և պանթուրքականության բնույթ³:

Ադրբեջանական առաջին քաղաքական կուսակցությունը՝ «Մուսավաթը», իր ծրագրում ներառել էր միայն մշակութային ինքնավարության դրույթը⁴: «Մուսավաթ» կուսակցությունը ազգայնական գաղափարախոսություն որդեգրեց 1912 թ. կուսակցության ղեկավար Մ. Է. Ռասուլզադեի Ստամբուլ կատարած այցից հետո՝ երիտթուրքերի հորդորներով⁵, որոնք Հարավային Կովկասում համառորեն հրահրում էին ազգամիջյան զինված ընդհարումներ⁶: 1917 թ. ապրիլի 15–20-ը Կովկասի մահմեդականների՝ Բաքվում գումարված համաժողովում ինքնավարության կողմնակիցների անունից ելույթ ունեցած Մ. Ռասուլզադեն հայտարարեց, որ շատ մահմեդական ժողովուրդներ արդեն գիտակցում են, որ իրենք առաջին հերթին «թյուրքեր են և նոր միայն՝ մահ-

² Թուրքիայի էթնիկական պատկերն ուսումնասիրած Փիտեր Էնդրյուսը նշում է, որ երկրի արևելյան շրջաններում ապրող ադրբեջանցիներից «ազերի» անվանումն օգտագործում են հիմնականում Իրանից գաղթած ադրբեջանցիները (տես *Peter Alford Andrews. Turkiye'de Etnik Gruplar. Istanbul, 1992, SS. 96–97*):

³ Տես *Э. Ю. Гасанова. Идеология буржуазного национализма в Турции в период правления младотурок (1908–1914 гг.)*. Баку, 1966, сс. 57–58:

⁴ Տես *М. Гусейнов. Партия Мусават в прошлом и настоящем*. Вып. I. Тифлис, 1927, сс. 10–13:

⁵ Տես *М. Волхонский, В. Муханов. По следам Азербайджанской Демократической Республики*. М., 2007, сс. 25–27:

⁶ Տես նույն տեղում, էջ 59:

մեղականներ»⁷, սակայն մեծահարուստ Գ. Թաղիևը և մի շարք այլ պատվիրակներ դեմ արտահայտվեցին «Ադրբեջան» անվանմանը, համաժողովի փաստաթղթերից հանվեց «Ադրբեջան» բառն ու հավանության չտրվեց Ռուսաստանի կազմում Կովկասյան թաթարների կողմից ինքնավար միավոր ստեղծելու գաղափարին⁸:

1918 թ. Նուրի փաշայի ղեկավարությամբ Կովկաս ներխուժած «Իսլամական բանակի» հրամանատարներից մեկը՝ Իսմայիլ Բերքբքը, որը մասնակցել էր ադրբեջանական կառավարության կազմավորմանը, հետագայում նշել է. «Ադրբեջան անվանումը ընդունվել է 1918 թվականին:... Այդ անվանումը, իրանական Ադրբեջանի հետ միասնության գաղափար արտահայտելուց բացի, այլ պատմական իմաստ չէր կրում: Նախկին անվանումը Աղվանք է, որն Արաբները հիշատակում են Առան անվանմամբ: Դրանից հետո որևէ հատուկ անվանում չի ունեցել: Որոշ հարգված անձինք առաջարկեցին Ազեր անվանումը, և այն ընդունվեց»⁹:

Ադրբեջանական կեղծարարությունը գերազանցապես հիմնվում է պատմության նենգափոխման թուրքական մեթոդաբանության վրա¹⁰:

⁷ Նույն տեղում, էջ 10: «Советский переворот в Азербайджане, — когда народ из «татарина» и «мусульманина» превратился в «тюрка», получив истинное свое название, — послужил громадным толчком для развития исторической литературы («Первый всесоюзный тюркологический съезд». 26 февраля — 5 марта 1926 г. Стенографический отчет. Баку, 1926, с. 50): Համագումարում ելույթ ունեցած Սաբաշվինը ուղղակի հայտարարեց, թե «Многие товарищи, присутствующие здесь на съезде, не знают своей нации. В числе последних нахожусь и я, представитель ойратов... Лишь недавно я, учась в ВУЗ-е и имея некоторое общение с научными силами тюркологии, узнал, что я тюрок. Нас так титуловали distinguished ученые: Радовлов, Вербицкий, Харузин и др.» (էջ 84):

⁸ Տես *Ղավիթ Կյազյան*, Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918–1920 թթ.: Ե., 2008, էջ 9:

⁹ *Ismail Berkok. Tarihte Kafkasya. Istanbul, 1958, S. 327.*

¹⁰ Տես, օրինակ, ԱՄՆ-ի թուրքական ընկերակցության կողմից ԱՄՆ-ում 1987 թ. անցվերեն հրատարակված ««Հայոց ցեղասպանություն». առասպել և իրականություն» գիրքը, որն ադրբեջանցիները թարգմանեցին ռուսերեն և հրատարակեցին Բաքվում («Армянский геноцид»: миф и реальность». Баку, 1992):

Այսպես. թե՛ թյուրքերը, թե՛ ադրբեջանցիները ֆիզիկապես ոչնչացրել կամ փորձել են իրենց վերագրել այն ժողովուրդների պատմամշակութային ժառանգությունը, որոնց տարածքներում նրանք բնակություն են հաստատել: Այդ ծրագիրը հիմնված է երկու գերակա սկզբունքի վրա.

1. հպատակված ժողովրդի լիակատար արտաքսում կամ ծուլմամբ վերածում չնչին փոքրամասնության, որը չի կարող սպառնալ պետության գոյությանը,

2. պետական վերահսկողության ներքո պաշտոնական պատմագրության ձևավորում ըստ այն թեզի, թե իրենք ավելի մեծ իրավունք ունեն տվյալ տարածքի և այնտեղ առկա պատմամշակութային ժառանգության նկատմամբ, քան այդ տարածքում բնակվող այլ ժողովուրդներ:

Ադրբեջանի խորհրդայնացումից հետո այդ երկրի պատմության գիտական հայեցակարգի հորինման գործում ներգրավվեցին ականավոր խորհրդային արևելագետներ Վ. Բարտոլդը, Ի. Մեշչանինովը, Վ. Սիսուևը, Ե. Ջևակինը, Ե. Բերտելսը, Ե. Պախտոնովը, Ի. Պետրուշևսկին, Վ. Լևիատովը և ուրիշներ: Լույս ընծայվեցին Ադրբեջանի պատմության նախնական տարբերակները՝ Ռ. Իզմայիլովի (Բաքու, 1923), Ե. Պախտոնովի (Բաքու, 1923), Վ. Սիսուևի (Բաքու, 1925) հեղինակությամբ, պատրաստվեցին Ադրբեջանի «ամբողջական» պատմությունը ներկայացնող նոր աշխատություններ¹¹:

Թյուրքերենում արաբատառից լատինատառի անցումը և թյուրքական ժողովուրդների պատմամշակութային ժառանգության ուսումնասիրությունը համակարգելու համար Բաքվում հրավիրվեց Խորհրդային Սիսուևյան թյուրքագիտական առաջին համագումարը (1926թ.), ստեղծվեց Ադրբեջանի գիտական ուսումնասիրության ընկերությունը, կազմակերպվեցին բազմաթիվ գիտաժողովներ¹²: Նման հզոր գիտակազմակերպական շարժման պայմաններում ստեղծվող հայեցակարգով ոչ միայն ամբողջ Խորհրդային Ադրբեջանի տարածքի, այլև Հայաստանի

¹¹ Տես, օրինակ, В. М. Сысоев. Начальный очерк истории Азербайджана. Баку, 1925:

¹² Տես «Первый всесоюзный тюркологический съезд». 26 февраля – 5 марта 1926 г. Стенографический отчет. Баку, 1926, с. 51:

մի զգալի մասի ու Իրանական Ադրբեջանի պատմությունն ու մշակութային ժառանգությունը վերագրվեցին թյուրքախոսության հենքի վրա ձևավորվող «ադրբեջանական» ժողովրդին, թեև 1926 թ. համագումարում նշվում էր, որ «առաջին թուրք նվաճողները՝ սելջուկները, 11-րդ դարում... բնակություն են հաստատում մեծ մասամբ Հայաստանում, Կապադովկիայում և Լիկիայում»¹³:

Ադրբեջանի պատմության նշված հայեցակարգը պայմանավորեց ինչպես հայ, այնպես էլ տարածաշրջանի մի շարք այլ տեղաբնակ ժողովուրդների պատմության ադրբեջանական «գիտական» նենգափոխման տրամաչափը: Այսպես, օրինակ, Ռ. Իզմայիլովը Ադրբեջանի պատմության իր շարադրանքում ներառել էր հնագույն շրջանը, արաբական, թյուրքական, մոնղոլական արշավանքները, Շիրվանշահների պետությունը, օսմանյան արշավանքներն ու Սեֆյան տիրապետությունը, Նադիր շահի և Աղա Մահմեդ խանի արշավանքները, Ռուսաստանի տիրապետության հաստատումն ու Քանձակի, Ղարաբաղի, Շիրվանի, Բաքվի խանությունների վերացումը, Ադրբեջանի Հանրապետության ստեղծումը¹⁴:

1920–1930-ական թվականներին «պատմագիտական» նոր տեսությունների հորինման գործում ներառվեց «Ադրբեջանական գրականության պատմության» ստեղծումը և այդ նպատակով «ադրբեջանական» հայտարարվեցին իրանական գրական մի շարք հուշարձաններ¹⁵, ինչպես նաև պատմական Աղվանք մարզպանության կազմում ընդգրկված հայկական (Արցախ և Ռիտիք) տարածքներում ստեղծված հայ մատենագրական երկերը¹⁶: Նույն մոտեցումը տարածվեց նաև տարածաշրջանի հայկական պատմամշակութային ամբողջ ժառանգության վրա (Ճարտարապետություն, երաժշտություն, կիրառական արվեստ և

¹³ Նույն տեղում:

¹⁴ Տես *Р. Измаилов. История Азербайджана. Баку, 1923:*

¹⁵ Տես *А. Е. Крымский. Низами и его современники. Баку, 1981; Мамег Ариф. История Азербайджанской литературы (краткий очерк). Баку, 1971, նույնի՝ Азербайджанская литература. М., 1979:*

¹⁶ Տես *З. М. Бунятов. Азербайджан в VII–IX вв. Баку, 1965:*

այլն): Ձևավորվեց «ադրբեջանական» ժողովրդի բնիկության և նրա ծագումնաբանությունում «թյուրքական», «աղվանական» և «ազերիական» բաղադրիչների համադրման տեսություն¹⁷:

Ներկայումս Ադրբեջանում ազգային փոքրամասնությունների ծուլումը արագացնելու համար Գիտությունների ազգային ակադեմիայի Տեղեկատվական տեխնոլոգիաների ինստիտուտում 2010 թ. վերջին մշակվել է «Էթնիկական փոքրամասնությունների ազգանունների վերջավորության փոփոխության մասին» օրենքի նախագիծ, որը միտված է Ադրբեջանում դեռ գոյատևող ազգային փոքրամասնությունների (լեզգիներ, ավարներ, ծախուրներ, թալիշներ, թաթեր, ուդիներ, քրդեր և այլն) ինքնագիտակցության ջնջմանը և նրանց ծուլմանը¹⁸:

Ազգանունների թյուրքականացումը միտված է կասեցնելու կովկասյան ու իրանական ժողովուրդների էթնիկ ինքնագիտակցության վերազարթոնքի գործընթացը և ազգանունների վերափոխման միջոցով արագացնելու նրանց ծուլումը:

Ադրբեջանի քաղաքական վերնախավի կողմից ուղղորդվող պատմական կեղծարարությունների առանցքային խնդիրը Հարավային Կովկասում հայ ժողովրդի պատմության արմատական աղավաղումն է, ինչը հետապնդում է երկու հիմնական նպատակ.

1. Արևելյան Հայաստանի ամբողջ տարածքի նկատմամբ ադրբեջանական հավակնությունների հիմնավորում¹⁹,
2. աղվանների ներկայացում որպես ադրբեջանցիների և արևելահայության որոշ հատվածի նախահայրերի և ըստ այդմ` Աղվանքի նկատմամբ իրավաժառանգորդության իրավունքի հիմնավորում²⁰:

¹⁷ Տես *И. Алиев. Очерки истории Атропатены. Баку, 1989; К. Алиев. Античные источники по истории Азербайджана. Баку, 1987:*

¹⁸ Տես *Рамелла Ибрагимхалилова. Что станет с фамилиями этнических меньшинств Азербайджана* (<http://www.vesti.az/news.php?id=61188>):

¹⁹ Տես օրինակ, *Ազիզ Ալաքբերլի*, Թուրք-օղուզական հնագույն բնօրրանը` «Էրմենիստան», Բաքու, 1994 (ադր.): Այլ հրապարակումների մասին տես *Վ. Ա. Շնիրելյան*, Նշ. աշխ.:

Ադրբեջանի կողմից Հայաստանի պատմության նենգափոխումը կատարվում է պատմական փաստերի կեղծմամբ, աղճատմամբ և խեղաթյուրված մեկնաբանությամբ, ինչպես նաև Ադրբեջանի պատմական դերի ուռճացմամբ: Այդ նպատակով օգտագործվում են հետևյալ միջոցները.

1. Ադրբեջանի պատմության արհեստական հնացմամբ ադրբեջանցիների ներկայացումը որպես Հարավային Կովկասի բնիկ ժողովրդի²¹,
2. ակադեմիական միջավայրում այս կամ այն պատմական իրադարձության վերաբերյալ խեղաթյուրված «այլընտրանքային կարծիքի» ներկայացումը, որով բարձրացվում է առաջ քաշվող «վարկածի» հավաստիության աստիճանը,
3. պատմության ընթացքում այս տարածաշրջանում տարբեր ժամանակներում գոյություն ունեցած պետությունների առանձին կառավարողների թյուրքական ծագման շահարկումը՝ ամբողջ պետությունը «ադրբեջանական» անվանելու նպատակով (օրինակ՝ թուրքմենական Ակկոյունլու և Կարակոյունլու (15-րդ դ.) և իրանական Սեֆյան (15–18-րդ դդ.) պետությունների²², ինչպես նաև 17–18-րդ դարերում իրանական պետության առանձին վարչատարածքային միավորների (խանությունների) դեպքում)²³,
4. անկախ էթնիկական ծագումից՝ «ադրբեջանցի» հայտարարումը յուրաքանչյուր բանաստեղծի, գրողի և մշակութային գործչի, որն

²⁰ Տես Ա. Շ. *Մնացականյան*, Աղվանից աշխարհի գրականության հարցի շուրջը: Ե., 1966:

²¹ Տես «История Азербайджана», в трех томах, т. I. Баку, 1958; Г. А. *Гейбуллаев*. Топонимия Азербайджана. Баку, 1986, Կ. *Ալիև*, Նշ. աշխ.:

²² Տես *Фарах Гусейн*. Осmano-Сефевидская война 1578 – 1590 гг. Баку, 2005; *Назим Джафарли*. Азербайджанское государство Сефевидов (Государственный строй). СПб., 2009:

²³ Տես *Н. Гезалова*. Вопросы истории Азербайджана XVIII века. Баку – Москва, 2010:

ապրել և ստեղծագործել է ներկայիս «Հյուսիսային կամ Հարավային» Ադրբեջանում (օրինակ՝ Նիզամին)²⁴,

5. Կովկասյան տարածաշրջանում ապրող ժողովուրդների պատմամշակութային ժառանգության յուրացումը՝ այն որպես ինքնատիպ ադրբեջանական ներկայացմանը (այդ թվում՝ ճարտարապետության, երաժշտության, գորգագործության, ազգային տարազի, կերակրատեսակների, և այլ ոլորտներում)*,
6. Ժամանակակից ինտերնետ տեխնոլոգիաների ցանցապետական կիրառումը²⁵,
7. կառավարության կողմից հաստատված կեղծված պատմության տարբերակի առաջնությունը և «համընդհանուր գիտելիքի» (*conventional wisdom*) տարածմանը²⁶ հասարակության ինքնագի-

²⁴ Արծանագրելով, որ Նիզամիի հայրը Ղոնից Փանծակ եկած օտարական էր, իսկ մայրը՝ քրդական անվանի տոհմի զավակ, Ա. Կրիմսկին ստիպված էր Նիզամիի 800-ամյակը նշելու միջոցառումների նախապատրաստման առիթով 1938–1939 թթ. լույս տեսած գրքերի տեսության մեջ այնուամենայնիվ զգուշացնել, թե «азербайджанец Низами, конечно, есть родной азербайджанский поэт, которым Азербайджан может по праву гордиться, но он же есть и украшение также иранской литературы, которая ни в коем случае не может исключить его из своих рядов, из числа своих святых, несмотря на его «азербайджанизм» и «тюркообразность», իսկ «Ադրբեջանի» վերաբերյալ առարկել, թե «Неудобно, например, частенько называть шахство Ширван XII в. термином «Азербайджан»; это особенно неудобно в тех случаях, когда приходится оперировать политическими отношениями между Ширваном и враждебно настроенным к нему атабекским Азербайджаном» (А. Е. Крымский. Низами и его современники. Баку, 1981, сс. 93–94):

* 2010 թ. դեկտեմբերի 2-ին Բեռլինի Հումբոլդտի անվան համալսարանում կազմակերպված Ադրբեջանի մշակութային ժառանգությանը նվիրված ցուցահանդեսում, Տաթևի, Փանծասարի, Խութավանքի և այլ հուշարձանների լուսանկարները ներկայացված են որպես ադրբեջանական մշակութային ժառանգություն:

²⁵ Համացանցում ադրբեջանական հակահայկական քարոզչության առանձնահատկությունների մասին մանրամասն տես՝ Ա. Աթանեսյան, «Ղարաբաղյան հակամարտության պայմաններում համացանցում տեղեկատվական պատերազմի և քարոզչության ադրբեջանական ռազմավարությունների առանձնահատկությունները»: «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան» (միջազգային գիտաժողովի նյութեր): Ե., 2007, էջ 509–530:

²⁶ Տես, օրինակ, «Azerbaijan: 100 questions answered», ed. 3. UK, 2008:

տակցման ու պատմական հիշողության խեղաթյուրումը, որը կարող է առաջացնել էթնոհոգեբանության մեջ հայտնի «խեղված հիշողության» բարդույթ:

Հայաստանի պատմության նենգափոխումներին համակարգային բնույթ և միջազգային հնչեղություն հաղորդելու գործում Ադրբեջանը հասել է որոշակի հաջողությունների՝ ստեղծելով տարբեր պետություններում բնակվող ադրբեջանցիների համագործակցության ցանցային համակարգ: Այդ համակարգն սկսել է ձևավորվել 1990-ական թվականներին և ներկայումս իր գործունեության մեջ ներառում է ադրբեջանցիների համաշխարհային կոնգրեսը, տարբեր պետություններում ադրբեջանական համայնքային տեղական կազմակերպությունները, արտերկրում գործող դեսպանություններն ու այլ ներկայացուցչություններ՝ համացանցային կազմակերպական համալիրում:

2. Հայաստանի մոտեցումը ադրբեջանական կեղծարարությունների նկատմամբ՝ որպես գիտության համակարգի դեմ ուղղված սպառնալիքի. հակազդեցության ռազմավարական ուղենիշներ: Ադրբեջանը գիտական հետազոտությունների քողի ներքո միջազգային գիտական աշխարհին մատակարարում է Հայաստանի, Աղվանքի, Ադրբեջանի և Իրանի պատմական անցյալի վերաբերյալ միտումնավոր կեղծված փաստեր, գիտական ապատեղեկատվություն, ինչը սպառնալիք է միջազգային գիտական միտքը ապակողմնորոշելու առումով: Այդ նպատակով Ադրբեջանը օգտագործում է միջազգային ակադեմիական ամբիոնները, որոնք իրենց բնույթով սկզբունքորեն բաց են և հնարավորություն են տալիս բոլոր ազգերի գիտնականներին տեսակետների փոխանակման համար:

«Գիտական» մենագրությունների տեսքով խեղաթյուրումների և կեղծարարության վրա խարսխված ադրբեջանական «գիտության» ներխուժումը համաշխարհային գիտության ասպարեզ, հեղինակավոր գիտական կենտրոնների կողմից կեղծ գիտելիքի շահախնդիր օգտագործումը կարող են մեծացնել էթնիկական բախումների, միջկրոնական առձակատման, քաղաքակրթությունների միջև հակամարտությունների հավանականությունը:

Թեև Ադրբեջանի կողմից իրականացվող պատմագիտական կեղծարարությունները ուղղված են նաև հարևան այլ պետությունների (Իրան, Վրաստան) և իր տարածքում բնակվող տարբեր ժողովուրդների (թալիշներ, թաթեր, լեզգիներ, ուդիներ և այլն) պատմամշակութային ժառանգության յուրացմանն ու կեղծմանը²⁷, սակայն դրա հիմնական թիրախը հայ ժողովուրդն ու Հայաստանի պատմամշակութային ժառանգությունն են:

Հայ ժողովրդի պատմության տասնամյակներ շարունակ իրականացվող նենգափոխումների սպառնալիքները Հայաստանում ընդունված էր թերագնահատել: Հայ գիտնականների մոտեցումներում գերակշռում էին գիտական նեղ շրջաններին հասցեագրված գնահատականներ ու հակադարձումներ²⁸: Եթե խորհրդային համակարգում դրանք կարող էին որոշակի ազդեցություն գործել զարգացումների վրա, ապա անկախության շրջանում կեղծարարություններին հակազդեցությունը պահանջում է նոր մոտեցումներ՝ համաշխարհային պատմագիտության զարգացման և տեղեկատվական տեխնոլոգիաների ցանցային հնարավորությունների ներկա մակարդակի հաշվառմամբ: Մինչ այժմ հայկական պատմագրությունը շատ դեպքերում ընդունել է թուրք-ադրբե-

²⁷ Տես *В. Хугагов*. Современный Азербайджан. «Новый Восток». Всероссийская научная ассоциация востоковедения при народном комиссариате по делам национальностей. Книга 3. М., 1923, с. 171: «Повсюду на Востоке тюрки обладают удивительной способностью ассимилировать туземные народы, среди которых завоевание тюркского языка имеет не меньший успех, чем тюркское оружие. Тюркская ассимиляция происходит на наших глазах, и близок день, когда от ряда национальностей, населяющих Закавказский Азербайджан, останется лишь воспоминание. Последняя перепись, произведенная в 1921 г. Азцесу, равно как и все предыдущие, указывает на систематическое уменьшение жителей Азербайджана, говорящих на татском, талышском, удинском и т. д., языках и, наоборот, на возрастание, во всяком случае, процентное, населения, говорящего по-тюркски... Ассимиляция эта может лишь выиграть с созданием независимой Азербайджанской Республики, с тюркским государственным языком»:

²⁸ Տես *К. А. Мелик-Оганджяня*. Историко-литературная концепция З. Буниятова. «Բանբեր Հայաստանի արխիվների», 1968, հմ. 2, *Ա. Մնացականյան*, Նշ. աշխ.; *А. Мнацаканян, П. Севак*. По поводу книги З. Буниятова «Азербайджан в VII—IX вв.». «Պատմա-բանասիրական հանդես», 1967, հմ. 1; «К освещению проблем истории и культуры Кавказской Албании и восточных провинций Армении», т. 1. Е., 1991:

ջանական խաղի կանոնները՝ հակափաստարկներով արծագանքելով կեղծ փաստարկումներին, հերքելով առաջ քաշվող վարկածները և այդ ամենը ներկայացնելով երրորդ կողմի դատին: Համաշխարհային գիտական հանրությունը դա ընկալում էր ոչ այնքան որպես գիտական բանավեճ, որին հարկ էր մասնակցել, որքան երկկողմ առճակատում, երբ կողմերից յուրաքանչյուրը ձգտում է ապացուցել կոնկրետ աշխարհագրական պատմամշակութային տարածքի նկատմամբ իր իրավունքների հիմնավորվածությունը:

Նոր ռազմավարության հիմքում պետք է դրվի հակազդեցությունը համաշխարհային գիտական կենտրոնների հետ սերտ համագործակցությամբ՝ հիմնված համաշխարհային պատմագիտության մեջ հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգության առավել լուսաբանված և ընկալելի կողմերի վրա:

Տվյալ համատեքստում հարկավոր է խնդիրը դուրս բերել փաստարկների և հակափաստարկների հակադրման նեղ ձևաչափից:

Ուստի կարևոր է ընդլայնել Հայաստանում և Սփյուռքում իրականացվող պատմագիտական ուսումնասիրությունների թեմատիկ շրջանակը, հայագիտության հետ մեկտեղ զարգացնել կովկասագիտության, թուրքագիտության, բյուզանդագիտության, իրանագիտության, արաբագիտության, ասորագիտության, ուրարտագիտության գիտական դպրոցները:

Այդ տեսակետից առավել արդյունավետ են թվում գիտական ուսումնասիրությունները հետևյալ ուղղություններով.

1. հայ ժողովրդի ծագումնաբանություն, նախաարիական ցեղերի ծագումնաբանություն և լեզվածագման կենսատարածքի ուսումնասիրություններ, Հայկական լեռնաշխարհի քաղաքակրթությունների պատմություն, այդ թվում՝ ուրարտագիտություն, որպես սեպագիր քաղաքակրթությունների ուսումնասիրության առանձին ճյուղ²⁹:

²⁹ Տես, մասնավորապես, *I. M. Diakonoff. The Pre-History of the Armenian People. New York, 1984*; *T. B. Гамкрелидзе, В. В. Иванов. Индоевропейский язык и индоевропейцы. Тбилиси, 1984*, նաև՝ *J. De Morgan. La pre-histoire orientale. Paris, 1927*:

2. Հայաստանն անտիկ շրջանում: Հայ ժողովրդի և Հայաստանի կապը հունահռոմեական, պարսկական և մերձավորարևելյան քաղաքակրթությունների հետ³⁰:
3. Հայերի դերը քրիստոնեության համակարգի զարգացման, տարաբնույթ գիտակրոնական ուսմունքների տարածման գործում³¹:
4. Հայերի դերը Արաբական խալիֆայության պետական-քաղաքական, տնտեսական, հասարակական և հոգևոր-մշակութային համակարգերում³² (Արմինիա վարչատարածք, հայազգի վեզիրներ Ֆաթիմյանների Եգիպտոսում՝ 11–12-րդ դդ., Լիբանանում՝ 19-րդ դարի կես, Սուհամնադ Ալիի շրջանում, Արաբական նահալայում (վերածնունդ) և այլն):
5. Կիլիկյան Հայաստանի պատմությունը, Արևմտաեվրոպական ասպետական իշխանությունների և եղբայրությունների հետ ռազմաքաղաքական-անվտանգային դաշինքը³³, հայության դերը Արևելք–Արևմուտք առևտրական և դիվանագիտական կապերում³⁴:
6. Հայերի դերը Բյուզանդական կայսրությունում և Ռուսական պետությունում³⁵:
7. Հայ ճարտարապետության ներդրումը համաշխարհային ճարտարապետության զարգացման գործում³⁶:

³⁰ Տես *Anne Elizabeth Redgate*. The Armenians, ed. 1. Oxford, 1999:

³¹ Տես *James Harvey Robinson and Janves Henry Breasted*. A General History of Europe. From the Origins of Civilization to the Present Times. Boston, 1926; *Mario Apostolov*. The Cristian-Muslim Frontier. Routledge, 2004:

³² Տես *J. Spencer Trimingham*. The Sufi Orders in Islam. Oxford, 1971, նաև՝ *Նիկոլայ Հովհաննիսյան*, Արաբական երկրների պատմություն, հ. I–IV: Ե., 2003–2007:

³³ Տես *Rene Grousset*. Histoire de l'Armenie. Paris, 1947:

³⁴ Տես *Фернан Бродел*. Игры обмена, т. 2. М., 1988, сс. 143–145:

³⁵ Տես *Л. Н. Гумилев*. Древняя Русь и Великая степь. М. 1992:

³⁶ Տես «Armenian Architecture: IV–XVIII centuries». Catalogue by A. Alpago-Novello and A. Manoukian. New York, 1981; *J. M. Thierry*. La Cathédrale des Saints-Apôtres de Kars (930–943). Paris, 1978; *P. Cuneo*. Architettura Armena dal quarto al diciannovesimo secolo. Vol. 1–2. Roma, 1988; *J. Strzygowski*. Die Baukunst der Armenier und Europa, Bd. 1–2. Wien, 1918:

Ադրբեջանական կեղծարարություններին համակարգված և արդյունավետ հակազդեցության, նշված, ինչպես նաև հնարավոր այլ ուղղություններով միջազգային առաջատար կենտրոնների հետ փոխշահավետ համագործակցության նախապայմանը Հայաստանում հումանիտար գիտության համակարգային զարգացումն է և միջազգային գիտական միջավայրին ինտեգրումը: Հումանիտար գիտությունների ինտեգրման խնդիրը, սակայն, հնարավոր չէ լուծել միայն հասարակագիտության ենթահամակարգի շրջանակներում:

Արդյունավետ ինտեգրման համար անհրաժեշտ է ապահովել Հայաստանում գիտության կազմակերպվածքի և ժամանակակից արևմտյան գիտակազմակերպական մշակույթի համատեղելիությունը: Դա հնարավորություն կտա միջազգային համակարգի հետ արդյունավետ ինտեգրվածությամբ հայկական ցանցապետական համակարգի շրջանակում օգտագործելու միջազգային գիտական ընտրանու ներուժը՝ ադրբեջանական գիտական կեղծարարությունների դեմ գիտական պայքարի արդյունավետությունն ապահովելու համար: Որպես դինամիկ ակադեմիական ինքնազարգացմամբ ճանաչված հետազոտական համալսարանի արդյունավետ նմուշ կարելի է դիտել Հարվարդի և Բեռլինի Հումբոլդտի անվան համալսարանների մոդելները:

Տվյալ համակարգային բարեփոխման ռազմավարության մշակումն ու իրագործումը կարող է ստանձնել ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան՝ իր գիտահետազոտական ու գիտակրթական ներուժի նպատակալաց գործադրման միջոցով և համապատասխան պետական ու հանրային ֆինանսավորմամբ:

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ-ԹՎԱՅԻՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ.
ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ
ՈՐՊԵՍ ՑԱՆՑԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ*

*Դ. Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ, ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային
հետազոտությունների կենտրոնի տնօրեն*



Հայոց պատմության «գիտական» խեղաթյուրման շարունակական գործընթացը՝ Ցեղասպանության փաստի ժխտելուց մինչև Հայաստանը ադրբեջանական տարածք հայտարարելը, հնագույն և միջնադարյան պատմության իրադարձությունների աղավաղումից մինչև Արցախյան պատերազմի ընթացքի նենգափոխելը ոչ միայն Ադրբեջանի և Թուրքիայի, այլ նաև բոլոր հակահայկական քաղաքականություն վարող ուժերի՝ Հայաստանի և հայության դեմ ուղղված քաղաքականության սյուներից մեկն է հանդիսանում:

Հսկայական նյութական ռեսուրսներ են տրամադրվում այս քաղաքականության իրականացման համար: Հարյուրավոր «գիտնականներ» և «մասնագետներ» աշխարհի տարբեր երկրներում ներգրավված են հակահայկական քարոզչության իրականացման և ընդլայնման գործընթացի մեջ:

Մենք հաճախ կրկնում ենք հայտնի բառերը, որ մեր «շերեփը թղթից է»: Մենք իբրև թե չունենք անհրաժեշտ ռեսուրսներ: Բացի այդ, երբեմն կարծում ենք, որ, միևնույն է, ճշմարտությունը մնում է ճշմարտություն, և հակահայկական նման գործունեության բոլոր ջանքերը ապարդյուն են, հաշվի չառնելով, որ քաղաքականությունը և պատմական ճշմար-

* Հեղինակի կարծիքը պարտադիր չէ, որ համընկնի ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի կարծիքի հետ: Հոդվածը տպագրվում է առանց փոփոխությունների՝ քննարկման կարգով:—*Խմբ.:*

տությունը շատ հաճախ կարող են ոչ միայն չհամընկնել այլ նաև՝ հակասել իրար:

Հասկանալի է, որ եթե մենք շարունակենք հենվել միայն ներկայումս ունեցած հնարավորությունների վրա, ապա դժվար կլինի հակազդել Հայաստանի և հայության դեմ ուղղված քարոզչությանը:

Ուստի կարևորագույն հարցերից մեկն այն է, թե ինչպե՞ս պետք է մենք ինքնակազմակերպվենք, ի՞նչ հնարավորություններ ունենք առկա ռեսուրսներն ու և միջոցները վերակազմավորելու և ուղղորդելու մեր բոլորի կողմից ընդունված արժեքների համակարգից բխող նպատակներին:

Դեռևս 1988 թվականից հայաստանյան հասարակությունը իր տարբեր ներկայացուցիչների միջոցով արտահայտել է Հայաստանի և հայության զարգացման կաղապարների վերաբերյալ իր բավականին ակտիվ որոնումների տվյալ փուլին համապատասխանող մոտեցումները և պատկերացումները: «Համաշխարհային ազգ», «ազգային պետություն», «ազգ-պետություն», «հայկական քաղաքակրթություն», «Հայկական աշխարհ»՝ այս բոլոր հասկացությունները որոշակի նյութ են տվել մտավոր ակտիվություն դրսևորող հայ հասարակական և քաղաքական շրջանակներին՝ հստակեցնելու պետության, հասարակության և ազգի զարգացման հեռանկարները, ձևավորելու որոշակի տեսլականներ:

Հիմնական նպատակները, որոնք հետապնդվել են նման քաղաքակրթական կաղապարներ մշակելիս, հետևյալն են՝

- ա) անվտանգություն,
- բ) արագ և համաչափ զարգացման համար անհրաժեշտ նախապայմանների ապահովում:

Զարգացման հետագա ընթացքն իր հերթին առաջադրել է նոր խնդիրներ, որոնց հաշվառումով մշակումներ կատարելիս անհնար է խուսափել մի քանի կարևոր տեսական հարցերից: Դրանցից ամենասկզբունքայիններն են՝

- ա) որքանո՞վ է ժամանակակից համաշխարհայնացված (գլոբալ) էլեկտրոնային-թվային հասարակությունը փոխակերպում իր իսկ պատվերը պետության ձևի և գործառույթների առումով,
- բ) որքանո՞վ են գլոբալ ենթակառուցվածքների և վերպետական կառույցների գործառույթները հակասում կամ խաչվում ներկայիս պետությունների գործառույթներին,
- գ) արդյո՞ք ցանցային համակարգերի և պետությունների հակասությունները հաղթահարելի են, և ո՞ր դեպքերում և որքանո՞վ են ցանցային համակարգերը կառավարելի, ինչպիսի՞ն է կապը ցանցային համակարգերի տիպերի և կառավարման համակարգերի միջև:

1. Սկսենք «ա» կետում ձևակերպած հարցի պատասխանից: Ժամանակակից էլեկտրոնային-թվային հասարակության կարևորագույն առանձնահատկությունն այն է, որ նվազում կամ նույնիսկ վերանում է միջնորդի դերը¹: Կապը սպասարկողի, մատակարարողի, արտադրողի, կարգավորողի և սպառողի միջև այլևս ուղղակի է: Սա նշանակում է, որ բազմաթիվ հարցերի լուծումը, կարգավորումը և կանոնակարգումը, որ մինչև այսօր մտնում էր պետության գործառույթների մեջ, աստիճանաբար օտարվում է նրանից: Պետությունը ներկայումս փորձում է դանդաղեցնել այդ գործընթացը: Սակայն դա չի կարող երկար շարունակվել:

2. «բ» կետում ձևակերպված հարցի առումով հարկ է արձանագրել, որ ածխի և պողպատի եվրոպական միության ստեղծման օրը դարձավ պետությունների ձևափոխման նորագույն պատմության սկիզբը: Ժան Մոննեն, որը Եվրոպայի միավորման նախաձեռնողն էր, առաջարկեց նոր սկզբունք այդ միավորման համար: Այն է՝ պետությունների ինքնիշխանության որոշակի մասը կամավոր կերպով հանձնել վերպետական մի մարմնի, որի որոշումները կախված չլինեն այդ պետությունների եսասիրական շահերից: Այս սկզբունքի կիրառումը հիմք դարձավ բազմաթիվ եվրոպական կառույցների ստեղծման համար: Սա է Եվրամիության հիմնական տարբերությունը գոյություն ունեցող մյուս միջազ-

¹ Stu D. Tapscott. The Digital Economy. Promise and Peril in the Age of Networked Intelligence. New York, 1996, PP. 14–17:

գային կազմակերպություններից, այն կառուցվում է ընդհանուր պետության մոդելով, սակայն պահպանելով պետությունների ինքնիշխանությունը, որը գործընթացների զարգացման տրամաբանությամբ աստիճանաբար նվազում է, սակայն չի վերանում:

Այսօր գործնականում բոլոր պետությունները համաձայնվել են այս կամ այն չափով հրաժարվել իրենց ինքնիշխանության պահանջվող մասից, ինչը միաժամանակ նպաստում է ազգային շահերի իրականացմանը:

Սակայն պետությունները ինքնիշխանությունը զիջում են ոչ միայն ԵՄ կաղապարով ստեղծված վերպետական մարմիններին, կամ միջազգային կազմակերպություններին: Գլոբալ աշխարհում անհրաժեշտ է դարձել գլոբալ ենթակառուցվածքների այնպիսի կառավարում և սպասարկում, որը բացառի կամ զոնե նվազեցնի ենթակառուցվածքների գործունեության անխափանության կախվածությունը այն պետությունների ազդեցությունից, որոնց տարածքներով դրանք անցնում են: Փաստորեն ստեղծվել է այնպիսի իրավիճակ, որ պետությունները, որոնք իրավական առումով հանդիսանում են ենթակառուցվածքների տերերը (այս կամ այն չափով), գործնականում ընդամենը ունեն հյուրընկալողի դեր: Անշուշտ, նման վիճակում հայտնված պետությունները պահպանում են իրենց իրավունքները այդ ենթակառուցվածքների նկատմամբ:

Պետություններն իրենց գործառնությունների զգալի մասը կամավոր կերպով հանձնում են նաև տեղական ինքնակառավարման մարմիններին, և այս գործընթացը ավելի ու ավելի խորանում և արագանում է: Այս ամենը սերտորեն կապված է գլոբալացման պրոցեսների հետ և բխում է դրանցից:

Գլոբալացման գործընթացները բացատրելու համար ժամանակակից քաղաքագիտությունը, պատմագրությունը, սոցիոլոգիան, նույնիսկ՝ փիլիսոփայությունը և մեթոդաբանությունը, օգտվում են հիմնականում «Քաղաքակրթությունների բախում» կաղապարից: Հասկանալի է, որ

գլոբալ աշխարհը ծնունդ է գլոբալ գործընթացներ, որոնք դրսևորվում են նաև գլոբալ ծրագրերի իրականացման միջոցով:

Հիմնական պատասխանները, որ մինչ այժմ տրվել են, կապված են այն ակնհայտ փաստի արձանագրման հետ, որ երկիր մոլորակը ներկայումս ավելի ընդհանրական և միասնական հասկացություն է, քան երբևիցե: Քարտեզի վրա գտնվող յուրաքանչյուր կետ հասանելի է ցանկացած մյուս կետից, ինչը նշանակում է, որ թե՛ քաղաքական և տնտեսական, և թե՛ սոցիալական դաշտերը ներկայումս գլոբալ բնույթ են ստացել, այսինքն՝ համաաշխարհայնացվել են: Նման դաշտերում գործելու համար անհրաժեշտ են ավելի մեծ համակարգեր:

Միաժամանակ նոր մոտեցում է ձևավորվել «տարածաշրջան» հասկացության վերաբերյալ, որը կարող է չափազանց արդյունավետ լինել վերլուծությունների ընթացքում:

Գլոբալ աշխարհում, որտեղ տարածությունը արդեն էական դեր չի խաղում կապերի զարգացման համար, որտեղ կան բազմաթիվ համաաշխարհային ենթակառուցվածքներ (Ինտերնետ, բանկային համակարգ, արբանյակային հեռուստատեսություն, վերազգային ընկերություններ և այլն), որտեղ միգրացիոն գործընթացները հանգեցրել են նրան, որ էթնոսները և կրոնական համայնքները աստիճանաբար սփռվում են իրենց բնական արեալներից դուրս՝ ձևավորելով յուրատեսակ համաաշխարհային համակարգեր (օրինակ՝ չինացիները, հրեաները, լեհերը, հայերը, քրիստոնյաները, մուսուլմանները, ինդուիստները և այլն), ձևակերպվում է «տարածաշրջանի» մեկ այլ՝ «վիրտուալ» իմաստ, որը, չմերժելով ավանդականը, թույլ է տալիս նոր բովանդակություն ներմուծել նրա մեջ:

Հիմք է ընդունվում «բազային (կամ՝ հիմնական) արժեք» հասկացությունը: Օրինակ՝ եթե բազային արժեքը ժողովրդավարությունն է իր «Ազատություն, հավասարություն, եղբայրություն» ֆրանսիական կադապարով, ապա աշխարհագրական քարտեզի վրա այդ արժեքի տարածման գոտիների ընդհանրական պատկերը տալիս է մի նոր տարածաշրջանի մասին ամբողջական պատկերացում:

Եթե որպես բազային արժեք ընտրվում է, օրինակ՝ կոնյակը, ապա դրա մշակութային դրսևորումն է «սերը կոնյակի նկատմամբ», «կոնյակ խմելը» և այլն, իսկ դրանք ապահովող քաղաքակրթական կառույցներն են կոնյակի արտադրության համար հումք աձեցնող խաղողի այգիները, տակառներ պատրաստող արհեստանոցները, կոնյակի գործարանները, ռեստորանները և այլն: Այդ բոլորի տարածման գոտիները նշելով քարտեզի վրա, ստանում ենք «կոնյակի տարածաշրջան»: Բազային արժեքները կարող են լինել ամենատարբեր բնույթի և տիպի:

3. «Տարածաշրջան» հասկացության մասն ըմբռնումը նոր իմաստ է հաղորդում նաև «ցանց» հասկացությանը («զ» կետում նշված հարց): Այս հասկացությունը բազմիցս բնութագրվել է, սակայն վերջին շրջանում հիմնականում ընդունված է հետևյալ ձևակերպումը. ցանցեր են կոչվում ինքնակազմակերպվող բազմակենտրոն կառույցները, որոնք նպատակամղված են կոնկրետ խնդիրներ լուծելուն և բաղկացած են ինքնուրույնություն ունեցող խմբերից (հաճախ՝ ժամանակավոր) և անձերից:

Բաց կառույցներ լինելով՝ ցանցերը ունակ են ընդլայնվելու՝ իրենց մեջ ներգրավելով նոր հանգույցներ: Նոր հանգույցները՝ ունենալով արդեն իսկ գոյություն ունեցող ցանցի հետ համընկնող խնդիրներ և հիմնվելով նույն կամ մմանատիպ արժեքների վրա, իրենք են ձգտում ընդգրկվելու ցանցի մեջ՝ նույնացնելով իրենց հաղորդակցման նշանաբանական և իմաստաբանական համակարգերը ցանցային կոմունիկացիոն կողի հետ:

Ցանցերի համար հատուկ են կառավարման և պատասխանատվության ապակենտրոնացումը, ինչպես նաև կապերի հորիզոնականությունը: Կապերը ստեղծվում են և վերացվում գրեթե միայն երկկողմանի ձգտման և համաձայնության սկզբունքով: Ցանցերը ձկուն են, շարժունակ և դժվար խոցելի, շատ ավելի կենսունակ են, քան սովորական կենտրոնացված կառույցները:

Ցանցերը լինում են երեք տիպի.

ա) *տեքստ և կենտրոն ունեցող ցանցեր*, ինչպես օրինակ՝ Վատիկանը, որը ներկայումս ազատականացրել է հորիզոնական կապերի հարթության կառավարումը,

բ) *Կենտրոն ունեցող ցանցեր*, օրինակ՝ ցանկացած տրանսնացիոնալ կորպորացիա: Այն ունի կենտրոն, որն իրականացնում է ընդհանուր կառավարման գործառնությունը՝ իրենց ամենօրյա գործունեության մեջ ազատություն տալով հանգույցներին, և չունի որևէ գաղափարական, դիցաբանական, փիլիսոփայական, սոցիալական տեքստ, սակայն հիմնվում է նույն հիմնարար արժեքի՝ արդյունավետության վրա,

գ) *տեքստ ունեցող ցանցեր*, օրինակ՝ սուննիական իսլամական ֆունդամենտալիստական ցանցերը, որոնք չունեն կենտրոն, սակայն ունեն տեքստ, որի հիմնադրությունը դեկավարվում են հանգույցները իրենց ամենօրյա գործունեության մեջ:

Միայն տեքստ ունեցող ցանցերում, որոշ դեպքերում նաև՝ տեքստ և կենտրոն ունեցող ցանցերում, անհնար է առանձնացնել հիմնական կազմակերպչական կառավարող և կարգավորող օղակը: Կենտրոնը գոյություն ունի միայն դիցաբանական, գաղափարական, այսինքն՝ արժեքային համակարգի վրա ձևավորված համակարգի ձևով, շատ ավելի հազվադեպ կա նաև ֆինանսավորման կամ նյութական ընդհանուր ապահովումը իրականացնող կենտրոն, որը երբեմն կատարում է նաև մեթոդական օժանդակություն ցույց տվող մարմնի դերը: Կենտրոնի ֆիզիկական բացակայությունը անխուսափելիորեն վերացնում է ցանկացած տիպի հիերարխիա, բացի արժեքայինից:

Ցանցը կարող է լինել կառավարելի, միայն եթե ցանցի հանգույցները չեն առարկում լինել կառավարելի: Ցանցի անդամ դառնալը կամավոր է, ուստի կամավոր է նաև ցանցում մնալը, գործելը և դուրս գալը: Հանգույցների պակասելը վտանգի տակ չի դնում ցանցը, ցանցի ձկունությունը թույլ է տալիս ձևափոխել ինֆորմացիոն հոսքերի ուղղվածությունը և շարունակել գործել նույն հաջողությամբ:

Ցանցի գոյությանը սպառնում է միայն տեքստի ապաակտուալացումը, երբ տեքստի արժեքային հիմքը կորցնում է իր նշանակությունը, դադարում է գրավիչ և ձգող լինել:

Հայաստանյան ինտելեկտուալ որոշ շրջանակների կողմից իրականացվող մշակումներից մի քանիսը ձգտում են հաշվի առնելու այն հիմնա-

րար փոփոխությունները, որոնց մասին խոսվեց: Հատկապես մոտ է դրան վերջին շրջանում ակտուալություն ձեռք բերած «Հայկական աշխարհ» անվանված կոնցեպցիան: Այս կաղապարը, մեր կարծիքով, ծնվել է «*Pax Romana*», «*Pax Americana*», «*Русский мир*» արժեքային հասկացություններից, որոնք իրենց իմաստով և ուղղվածությամբ կայսերական են: «*Pax Romana*» (Հռոմեական աշխարհ) անվանումը տրվել է Հռոմեական կայսրության ամբողջ տարածքում Օկտավիանոս Օգոստոսի իշխանության հաստատման ժամանակից (29 թ. մ.թ.ա.) սկսվող խաղաղ և ծաղկուն դարաշրջանին: Հռոմեական աստվածների տաճարները հիմնվում էին Հռոմից շատ հեռու ընկած կայսրության նվաճած ժողովուրդների տարածքներում, այսինքն՝ հռոմեական արժեքները և նորմերը հաստատվում էին նախկին թշնամիների գիտակցության և մշակույթի մեջ: «Հռոմեական աշխարհ» հասկացությունը հակադրվում էր «Բարբարոսների աշխարհին»: Այս անալոգիան կիրառվեց արդեն 20-րդ դ., երբ սառը պատերազմի իրավիճակը նկարագրելու համար ամերիկյան գաղափարախոսները ստեղծեցին «*Pax Americana*»^{*} հասկացությունը, որը հակադրեցին նոր «Բարբարոսների աշխարհին»՝ Խորհրդային Միությանը և նրա արբանյակ պետություններին:

«*Русский мир*» հասկացությունը կամ կոնցեպցիան ստեղծվել է բոլորովին վերջերս՝ շարունակելով այս ուղղությունը, սակայն որպես աղբյուր օգտագործելով նաև դասական գերմանական փիլիսոփայության կոնցեպտներից մեկը՝ «Արյուն և հող»-ը, որը հիմք ծառայեց նապոլեոնական պատերազմների ժամանակաշրջանում գերմանական ազգի միասնականության գաղափարախոսության ստեղծման համար: 300-ից ավելի գերմանական մեծ և մանր պետություններում ապրող գերմանացիներին երկու հիմնական արժեք էր միավորում՝ նույն ցեղին պատկանելը և նույն տարածքում (գերմանական ցեղերի բնակության

^{*} Համարվում է, որ «*Pax Americana*»-ն «*Pax Britanica*»-ին էր եկել փոխարինելու, այսինքն՝ քաղաքակրթության տարածման գործում վերջինիս իրավահաջորդն էր: «Բարբարոսներին պետք է քաղաքակրթել նույնիսկ նրանց կամքին հակառակ»՝ շատ տիպիկ կայսերական մոտեցում է: Մի կայսրությունը այս առաքելության իրականացման գործառույթը հանձնում է մյուսին, որը, սակայն, նույն հիմքի վրա է կառուցված:

տարածքներ) ապրելը: Արդյունքում ստեղծվեց Քերմանական կայսրությունը՝ Ռայխը:

Խորհրդային Միության փլուզումից հետո Ռուսաստանի հետագա գոյության և նրա առաքելության շուրջ քննարկվող կոնցեպտները հասկանալի պատճառներով չէին կարող «Արյուն և հող» կոնցեպտը ձևավորել և մշակել առանց վերաիմաստավորման: Վերաիմաստավորումը հանգեցրեց ոչ թե «Արյուն և հող», այլ «Լեզու և մշակույթ» գաղափարի ի հայտ գալուն (Ա. Նեկլեսասայի, Պ. Շչեդրովիցկիի, Ա. Օստրովսկիի և մի շարք այլ լուրջ գիտնականների աշխատանքներում): Այս գաղափարի հիմքում ընկած էր այն, որ Ռուսաստանի ֆիզիկական տարածքից դուրս կան տարբեր երկրներում բնակվող միլիոնավոր մարդիկ, որոնք ռուսալեզու են և ռուսական մշակույթը համարում են իրենց հարազատը, ինչը կարող է հիմք դառնալ Ռուսաստանյան Դաշնություն կոչվող պետության շուրջ նրանց միավորման համար: Այդ միավորումն էլ հենց կոչվում է «Русский мир», և այն պետք է դառնա ռուսական գլոբալիզացիոն ծրագրի իրականացման հիմքը: Ինչպես տեսնում ենք, այս գաղափարի մեջ բոլորովին նոր ձևով, սակայն առկա է կայսերական միտվածություն:

Հայաստանի և Հայության զարգացման համար ամենանպաստավոր կաղապարը ցանցապետությունն է, որի հնարավորությունները ժամանակակից քաղաքակրթական համակարգին աղապտացիոն մեխանիզմների առավել նպաստավոր կազմակերպման տեսանկյունից գերադասելի են մյուսների նկատմամբ:

Մեր՝ հայերիս, պատմական հանգամանքներով լիովին բացատրելի մշտական թերությունը՝ ինդիվիդուալիզմը և սեփական ընտանիքի սահմաններից դուրս գալու և հասարակական կյանքում անկեղծորեն համագործակցելու միտումի, մղումի և խիզախության պակասը ներկայումս կարող է դառնալ իրական առաջընթացի գրավական, եթե այս ամենը գիտակցվի, ուղղորդվի և ծառայեցվի ընդհանուրի, այսինքն՝ իրեն որպես գլոբալ աշխարհում ինտեգրված իմաստավորող Հայաստանի՝ որպես քաղաքակրթական կառույցի և Հայության՝ որպես համաշխարհային ցանցի շահերին: Կարևորն այն է, որ էությունը և

Երևույթը գիտակցվեն և իմաստավորվեն, դրա հիման վրա հասկանալի կդառնան նաև այն կանոնները և սահմանափակումները, որոնք անհրաժեշտ են, որպեսզի մեր հայկական մշակույթը առաջատարի միտումներ ունենա եկող քաղաքակրթական համակարգում: Այս ամենի համար անհրաժեշտ է մշակել այնպիսի համակարգ, որը թույլ տա ինդիվիդուալ ազատության մաքսիմալ ծառայեցումը ընդհանուրի շահերին, հնարավորինս քիչ այն սահմանափակելով, քանի որ ցանկացած մշակույթի էությունը և որակը կախված են այդ մշակույթի էությունը կազմող ազատությունից:

Հայաստանակենտրոն ցանցապետությունը կարող է լինել ազատ ցանցային համակարգ, որը հիմնվում է կամավոր մասնակցության և հորիզոնական բազմատեսակ համագործունեության դաշտերի ստեղծման սկզբունքով: Համագործակցությունը պետք է իրականացվի՝ ելնելով մի շարք հիմնարար արժեքների տրամաբանությունից: Դրանք են՝ Հայաստան, Հայություն, Զարգացում, Շահավետություն, Անվտանգություն: Այս ամենը կարելի է հանգեցնել մի կարևոր զգացումի, որը խորապես կապված է նաև «ինքնություն» հասկացության հետ: Եթե ցանցը հնարավորություն է տալիս անձին իր ինքնության ճշտման, ամրապնդման և ընդլայնման առումով, ապա նա ինքնըստինքյան զարգանում և կատարելագործվում է: Ցանցը պետք է ծավալի իր հիմնարար արժեքների գրավչությունը ապահովելու գործունեություն, և այդ գործունեությունը չպետք է զուգորդվի այլ խնդիրների լուծմանն ուղղված ապակողմնորոշող ծրագրերով: Գրավչությունն այստեղ հիմնական միջոցն է: Պատահական չէ, որ հատկապես վերջին շրջանում բազմաթիվ միջոցառումներ և ծրագրեր են իրականացվում, որոնց առաջնային նպատակն է գրկել «Հայ», «Հայություն», «Հայաստան» բառերը, կամ ավելի ձիշտ՝ իմաստները, իրենց գրավչությունից*:

* Մեր հակառակորդները լավ հասկանում են դա: Պատահական չէ, որ Ադրբեջանի հեռուստատեսությունը ընդհատում է մանկական Եվրատեսիլի մրցույթի հեռարձակումը այն պահին, երբ հասկանալի է դառնում, որ Ստեփանակերտում ծնված և Հայաստանը ներկայացնող երեխան է դառնալու հաղթողը: Ծիծաղելի է, սակայն՝ ոչ պատահական:

Գործունեության ուղղությունները ինքնակարգավորվում և ձևավորվում են ցանցի մասնակիցների ուղղվածություններից հասցեագրվող առաջարկներից և մասնակցության ինտենսիվության չափից ելնելով: Որևէ նախաձեռնություն չի կարող արգելվել կամ խոչընդոտվել արհեստականորեն: Ցանցն ինքն է որոշում իր արձագանքների հաճախակա- նությամբ, թե ինչն է կարևոր և շահավետ:

Հայաստանակենտրոնությունը պետք է լինի բնականորեն դրսևորվող և ուղեկցվող «ապաստիյունքացման» գործընթացով, քանի որ Հայաստան պետությունից դուրս ապրող հայությունը այլևս «սփռված» չէ, այն Հայ- րենիք ունեցող և տվյալ ցանցապետությունում ապրող ինքնակազմա- կերպված համայնք է:

Ցանցապետությունը ենթացանցերի տատանումներով ճշտում է ար- ժեքները, դրանց հիման վրա ձևակերպում նպատակները, ընտրում և գտնում է միջոցները, միավորում և բազմազանեցնում է ռեսուրսները:

Ընդհանուր տեքստային հիմքի վրա գործող ենթացանցային համա- կարգերն սպասարկում են տարբեր խնդիրներ՝ ուղղորդվելով այդ խնդիրների արդիականությամբ: Սակայն խնդիրները պետք է լինեն ճիշտ ձևակերպված և հասցեագրված, այսինքն՝ լիովին, առանց շեղումների համապատասխանեն հայտագրված արժեքներին, նպաս- տեն ցանցի հանգույցներում ինքնության ամրապնդմանը և ցանցի յու- րաքանչյուր մասնակցին տան ինքնարտահայտման հնարավորություն:

Որոշակի առումով այդ ցանցն արդեն գործում է: Հաճախ հայկական կայքերում մենք կարող ենք գտնել կամավորական նման գործու- նեության օրինակներ: Սակայն այդ կայքերի արդյունավետությունը կտրուկ կերպով կաճի, եթե ցանցապետության գաղափարը ընկալվի որպես Հայության կազմակերպման կոնցեպցիա:

Հասկանալի է, որ այդ դեպքում լուծված կլինի ոչ միայն հակաքարոզ- չության խնդիրը: Հայությունը հանդես կգա որպես 21-րդ դարի համաշ- խարհային էլեկտրոնային թվային հասարակության անքակտելի և հզոր անդամ, ինչը հնարավորություն կտա «Հայություն» և «Հայաստան»

անունները դարձնելու առավել գրավիչ, իսկ դրան դիմադրելու բոլոր փորձերին ապահովել արժանի հակահարված:

Ադրբեջանական ղեկավարությունը, հատկապես՝ վերջին շրջանում, գիտակցելով ցանցային կառույցների կարևորությունը ժամանակակից աշխարհում, ջանքեր է գործադրում նման հնարավորություններ ձեռք բերելու ուղղությամբ: Այն հայտարարությունը, որով փորձ էր կատարվում հաստատագրելու Իլհամ Ալիևի դերը որպես աշխարհի ազերիների լիդերի, նման փորձերից մեկն է: Այն ցույց է տալիս, որ ադրբեջանական քարոզչությունը, գիտակցելով, որ նման տիպի ցանցային կառույցների ձևավորման համար անհրաժեշտ է արժեքային հենք, փորձ է կատարում ստեղծելու նման տեքստ, սակայն դա արվում է չափից դուրս ուղղակիորեն և միամիտ ձևով, ինչն անմիջապես հակազդեցություն է առաջացնում այս տեքստի հնարավոր հասցեատերերի կողմից: Բացի այդ, ադրբեջանական ուղերձը հաշվի չի առնում մշակութային և քաղաքակրթական սկզբունքային տարբերությունները, որոնք առկա են էթնիկական ազերիական պատկանելություն ունեցող աղոտ զանգվածի տարբեր հատվածներում, ինչպես նաև ժառանգած թրայբոլիստական խանդն ու կասկածամտությունը:

Սակայն այս ամենը չի նշանակում, որ մենք կարող ենք հանգիստ նայել նրանց գործունեությանը: Միակ իրական նպատակային և շարունակական ազդեցություն ունեցող ծրագիրը մեր համակարգի ստեղծումն է և վիրտուալ տարածքում գերակշռող առավելություն ապահովելը:

Եզրակացություններ

- Ցանցապետությունը գործիք է, որի օգտավետությունը կախված է այդ գործիքն օգտագործողի հմտությունից: Արդեն միայն ցանցապետության գաղափարի քարոզումը բավականին լուրջ ազդեցություն կունենա՝ համախմբելով այս հասկացության հիմքում ընկած արժեքների հավատարիմ մարդկանց և, մյուս կողմից, ապակողմնորոշելով թշնամուն, նրա մոտ առաջացնելով անվստահության զգացմունք, ստիպելով նրան չկողմնորոշվել մեր ներուժը գնահատելիս, ինչը համար-

վում է քարոզչության կարևորագույն նպատակներից մեկը: Միաժամանակ այս գաղափարի ցանցայնացումը կօգնի ապասփյուռքայնացմանը, ինչը հնարավորություն կտա հայ համայնքներին և, ի վերջո, ամբողջ հայությանը վերածնակերպելու ազգային և պետական խնդիրները և նոր դարաշրջանի համար առաջ քաշելու նոր նշանակետեր և նպատակներ:

- Անհրաժեշտ է լրջագույն ուշադրություն դարձնել լոբբինգային աշխատանքների ուղղվածության փոփոխմանը, սկզբունքային դեր տալով տարբեր տիպի ազդեցիկ կառույցների մեջ թափանցելու ծրագրերին: Պետք է նշել, որ ազերիները վերջին շրջանում բավականին հաջող կերպով կարողացել են ներթափանցել մի շարք մոսկովյան ազդեցիկ կառույցներ, պակաս հաջողությամբ դա փորձում են անել թուրքերը թե՛ Մոսկվայում և թե՛ Միացյալ Նահանգներում և եվրոպական երկրներում: Այս առումով ևս ցանցապետության հնարավորություններից, ցանցային ազատության ներուժից օգտվելու աշխատանքը կարող է լինել չափազանց արդյունավետ:

- Քարոզչությունը պետք է անտեսի թշնամու քարոզչության կողմից շրջանառության մեջ դրված տեքստերը կամ, որոշ դեպքերում, ուղղակի հեզնաբար վերաբերմունք դրսևորի դրանց նկատմամբ: Բոլոր պարագաներում, մեր քարոզչական աշխատանքը պետք է տարվի այն հարթության մեջ, որը նվազեցնում է քարոզչական մրցակցության հնարավորությունները, թույլ չի տալիս թշնամուն մտնել լեզվակաթվի մեջ: Փոխարենը պետք է շեշտը դրվի այնպիսի տեքստերի տարածման վրա, որոնք պատկերացում են տալիս Հայաստանի և հայ ժողովրդի մասին, կերտում են համամարդկային արժեքներով ուղղորդվող հասարակության պատկեր, ընդգծում են այլ երկրների շենացման գործում հայ համայնքների ունեցած լուծման:

ԱԴԻԲԵՁԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ՀԱՄԱԿԱՐԳՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅԱՆԸ
ՎԵՐԱԲԵՐՈՂ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ
ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ
ՈՒՂԵՆԻՇՆԵՐ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ
ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԱԶՄԱԿԱՐԱԿԱՆ
ՈՒՂԵՆԻՇՆԵՐ

Ադրբեջանում պետական մակարդակով կատարվում են Հայաստանի պատմության նենգափոխումներ, որոնք իրագործվում են պատմագրության աղավաղումների տրամաչափով: Հայաստանի, ներառյալ՝ Արցախը, տարածքի և հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգության նկատմամբ ադրբեջանական ոտնձգությունները Հարավային Կովկասում հայոց պետականության պատմության նենգափոխման արդյունք են: Դրանց նպատակն է ժխտել իր բնօրրանի նկատմամբ հայ ժողովրդի պատմական իրավունքը, միջազգային հանրության առջև հիմնավորել Հայաստանի, ներառյալ՝ Արցախը, տարածքի նկատմամբ հավակնությունները և պատերազմի հնարավոր վերսկսումը:

Իրողությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ ադրբեջանական նենգափոխումներին Հայաստանի կողմից ցուցաբերվող գիտական հակազդեցությունը ներկայումս արդյունավետ չէ: ՌԻստի անհրաժեշտ է մշակել նոր ռազմավարություն, որում շեշտը դրված լինի ոչ թե զուտ տեղային ռեսուրսների սահմաններում ընթացող ավանդական երկկողմ ձևաչափով մենամարտի, այլ համաշխարհային ընկերակցության մեջ հայության ցանցային ինտեգրվածության պայմաններում Հայաստանի և Սփյուռքի համադրված ռեսուրսի ներգրավման վրա: Դա հնարավոր է անել միայն համաշխարհային գիտական կենտրոնների հետ սերտ համագործակցությամբ՝ հիմնվելով հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգության այն կողմերի վրա, որոնք համաշխարհային պատմագիտության բաղկացուցիչ մասն են, այսինքն՝ համաշխարհային գիտական համակարգին Հայաստան–Սփյուռք միասնական հումանիտար գիտական ներուժի ինտեգրմամբ:

Սակայն հունանիտար գիտությունների ինտեգրման խնդիրը հնարավոր չէ լուծել միայն հասարակագիտության ենթահամակարգի շրջանակներում. այն պահանջում է ամբողջ ազգային գիտական համակարգի համընդգրկուն ինտեգրում միջազգային գիտական համակարգին: Մինչդեռ ՀՀ-ում գիտության գործող կազմակերպվածքը հիմնականում պահպանում է ԽՍՀՄ համապատասխան համակարգի հատկանիշներն ու տարրերը, ինչը խոչընդոտում է ինտեգրման գործընթացին, ուստի առաջանում է այդ համակարգի բարեփոխման անհրաժեշտություն:

Հաշվի առնելով, որ ԳԱԱ-ն իր ներուժով ՀՀ գիտության համակարգի գլխադաս և համակարգաստեղծ բաղադրիչն է, նպատակահարմար է ձեռնամուխ լինել ԳԱԱ-ի բարեփոխմանը՝ այն օժտելով ժամանակակից արևմտյան տիպի գիտահետազոտական և գիտակրթական համալիր հաստատության տարրերով: ԳԱԱ-ում արդեն ձևավորվել են նման տարրեր, մասնավորապես՝ 2004 թ. գործարկվել է մագիստրոսական կրթության բաղադրիչը:

Առաջարկվող բարեփոխումներն ունեն համակարգային բնույթ և կնպաստեն գիտության ընդհանուր համակարգի զարգացմանն ու միջազգային համակարգի հետ լիարժեք համատեղելիության ապահովմանը, ԳԱԱ-ի համակարգում մասնագիտական-կրթական բաղադրիչի ուժեղացմանը՝ գիտության և կրթության միջև փոխադարձ կապի սերտացմամբ: Որպես նման փորձ կարելի է դիտել ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի, Հարվարդի համալսարանի Քենեդու անվան պետութենագիտության դպրոցի և Գիտության պետական կոմիտեի փորձագետների կողմից մշակված ԱՐՀԻ-ի՝ Պաշտպանական հետազոտական ազգային համալսարանի կերպափոխման պիլոտային նախագծի իրագործումը:

Բարեփոխումները պետք է նպատակաուղղված լինեն միջազգային ասպարեզում ՀՀ գիտության մրցունակության մեծացմանը: Ընդսմին պետք է ստեղծվի հիմնարար և կիրառական գիտությունների միջև կապն ապահովող ենթակառուցվածք:

Ըստ այդմ՝ առաջարկվում է.

ՀՀ Նախագահի աշխատակազմին՝

հաշվի առնելով ՀՀ «Ազգային անվտանգության ռազմավարության» հիմնադրույթները՝ համապատասխան պետական կառույցների ներգրավմամբ ձեռնամուխ լինել.

- գիտության ու կրթության՝ որպես հայ ժողովրդի ցանցապետական անվտանգ կայուն զարգացման կարևոր գերակայություններից մեկի հռչակմանը,
- գիտական համակարգի զարգացման ու կազմակերպվածքով միջազգային գիտահետազոտական համակարգի հետ համատեղելիության ապահովման արդյունավետ քաղաքականության մշակմանն ու հետևողական իրականացմանը:

ՀՀ կառավարությանը՝

• իր համադասմամբ և համապատասխան կառույցների ներգրավմամբ մշակել և իրականացնել Ադրբեջանի կողմից Հայաստանի պատմության նենգափոխման և հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգության յուրացման քաղաքականության դեմ համահայկական ցանցապետական գիտական հակապատերազմի ծրագիր,

• ԳԱԱ-ի՝ որպես գիտահետազոտական գործունեությամբ զբաղվող հիմնարկների միասնական համակարգի և նրա գիտահետազոտական ու կրթական բաղադրիչների համալիր կերպափոխմամբ ու համադասմամբ ստեղծել «Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիա-հետազոտական համալսարան» (ՀԳԱԱՀՀ) գիտակրթական կառույցը,

- ՀԳԱԱՀՀ-ի կառուցվածքում օպտիմալ համամասնությամբ ստեղծել գիտակրթական ինստիտուտների արևմտյան գիտահետազոտական համալսարանական մշակույթին համապատասխանող համակարգ՝ բաղկացած գիտահետազոտական

կենտրոններից, մագիստրոսական ու ասպիրանտական դպրոցներից և այլ անհրաժեշտ ստորաբաժանումներից,

- ՀԳԱՀՀ-ին տալ առավելագույն ակադեմիական ինքնավարություն և ազատություններ՝ ինքնազարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովմամբ,
 - ԳԱԱ-ի ընդհանուր ժողովի, նախագահության ու նախագահի լիազորությունների և գործառույթների համատեղելի սկզբունքների պահպանմամբ սահմանել ՀԳԱՀՀ-ի կառավարման համապատասխան մարմինների լիազորությունները, գործառույթները և ձևավորման (ընտրության) կարգը,
 - ՀԳԱՀՀ-ին վերապահել օրենքով սահմանված հնարավոր բոլոր ձևերի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու լիազորություններ,
 - ԳԱԱ-ի համակարգի գիտաշխատողներին ՀԳԱՀՀ-ի գիտահետազոտական և պրոֆեսորադասախոսական կազմի մեջ ընդգրկելու նպատակով սահմանել մրցութային չափանիշներ և մեխանիզմներ,
 - ՀԳԱՀՀ-ի գործունեությունը իրավական առումով ապահովելու համար նպատակահարմար է վերանայել գիտակրթական ոլորտի վերաբերյալ գործող իրավական ակտերը՝ սահմանված կարգով մշակելով դրանցում համապատասխան փոփոխությունների, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում նոր իրավական ակտերի նախագծեր
- ձեռնամուխ լինել ԱՌՀԻ-ն Պաշտպանական հետազոտական ազգային համալսարանի կերպափոխելու պիլոտային նախագծի իրականացմանը՝ հաշվի առնելով, որ այն կարող է նախատիպ լինել ԳԱԱ-ն հետազոտական համալսարանի կերպափոխելու համար,
 - «Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիա-հետազոտական համալսարանի» ստեղծման շրջանակներում հումանիտար

գիտությունների ոլորտում հայության ներուժի համախմբման և համաշխարհային գիտության համակարգին ինտեգրելու միջոցով դրա զարգացման նպատակով ձևավորել «Հումանիտար հետազոտությունների համահայկական ցանց» (ՀՀՀՑ)։

1. ՀՀՀՑ ռազմավարական նպատակների թվում ներառել՝

- ադրբեջանական պատմական կեղծարարությունների դեմ արդյունավետ պայքարը միջազգային գիտական առաջատար կենտրոնների հետ համագործակցությամբ,
- հումանիտար հետազոտությունների ոլորտում ՀՀ և Սփյուռքի ռեսուրսների արդյունավետ համադասումը,
- գիտական դպրոցների զարգացման գործում հայության ներուժի նպատակային օգտագործումը,
- քաղաքակրթական և մշակութային զարգացումներում հայ ժողովրդի ունեցած ներբերման ներկայացումը միջազգային գիտական շրջաններին,
- աշխարհի առաջատար գիտական կենտրոնների հետ համագործակցության զարգացումն ու համադասումը միջազգային գիտական միջավայրին ՀՀ հումանիտար գիտության ինտեգրման նպատակով,

2. ՀՀՀՑ գործունեության ֆինանսավորման աղբյուրների թվում դիտարկել՝

- «Հայաստան համահայկական հիմնադրամի» մոդելով «Հումանիտար հետազոտությունների միջազգային հիմնադրամի» ստեղծում,
- պետական միջոցներից ֆինանսավորում՝ հայտամրցութային եղանակով ընտրված ծրագրերի շրջանակում և անկախ փորձագիտական գնահատումների հիման վրա,
- ցանցին մասնակցող կառույցների գործունեությունից ձևավորված միջոցներ:

**ՀՀ ԳԱԱ նախագահությանը,
Գիտության և կրթության նախարարությանը/
Գիտության պետական կոմիտեին՝**

մշակել և ՀՀ կառավարությանը ներկայացնել ԳԱԱ-ի կերպավորմամբ ՀԳԱԱՀՀ-ի ձևավորման և դրա համադասմամբ «Հումանիտար հետազոտությունների համահայկական ցանցի» ստեղծման ծրագրեր՝ հաշվի առնելով ԱՌՀԻ-ի՝ Հարվարդի Համալսարանի և ՀՀ Գիտության կոմիտեի հետ մշակված Պաշտպանական հետազոտական ազգային համալսարանի կերպավորման պիլոտային նախագծի ստեղծման և իրագործման փորձը:

ԱԳՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆԵՆԳԱՓՈԽՈՒՄՆԵՐԻՆ
ԳԻՏԱԿԱՆ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ
ՀԱՐԱԿԻՑ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

Հեղինակների կարծիքը պարտադիր չէ, որ համընկնի
ՀՀ ՊՆ ԱՌ-ՀԻ-ի կարծիքի հետ

ԱԴԻԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.
ԱՂՎԱՆՔԸ ԱԴԻԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հ. Ս. ԽԱՌԱՏՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու,
Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի
մշակութային մարդաբանության և երկրագիտության ամբիոնի վարիչ



Ադրբեջանի ակադեմիական պատմագիտության զարգացումները վերջին քսանամյակում զգալի չափով թելադրվում են Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի հանրապետությունների հետ քաղաքական հակամարտությամբ: Իրենց քաղաքական ուղղվածությամբ Ադրբեջանի պատմագիտության առանցքային գաղափարները կողմնորոշիչ են դառնում հումանիտար գիտության այլ հարակից ոլորտների հետազոտողների համար:

Ադրբեջանական պատմագիտության, իրականում՝ պատմագրության զարգացման կարևորագույն թեմաները երկուսն են՝ ադրբեջանցիների ծագման խնդիրը և Կովկասյան տարածաշրջանում հայերի բացակայության «պայացուցման» ջանքերը: Սրանք թեև ունեն ինքնուրույն զարգացումներ, սակայն փոխկապված են՝ խարսխված լինելով ադրբեջանական էթնիկության ձևակերպման և էթնիկ ինքնության բովանդակության փնտրտուքի վրա, որն ակնհայտորեն կառուցվում է հայոց պատմագրության հակոտնյայի հիմնավորումների վրա: Այդ մոտեցման համաձայն՝ հայ պատմագրությունը և հայ պատմագիտությունը հայերին վերաբերող նյութերում կառուցված են կեղծիքի վրա, ուստի ճշմարտությունը պետք է փնտրել հայկական նյութերը հակառակ իմաստով մեկնաբանելու ճանապարհով: Բոլոր հայ հեղինակներն իբր նպատակ են ունեցել յուրացնելու այլոց մշակույթն ու պատմությունը: Նշված համընդհանուր մոտեցումը անհարմար վիճակ է ստեղծում, քանի որ անհնար է տրամաբանական հիմնավորումներ տալ ակնհայտ անհեթեթություններին ու գիտականի քողի ներքո մատուցվող կեղծարարություններին: Օրինակ՝ ադրբեջանցի հեղինակները մի կողմից, պնդում են, որ Հարավային Կովկասում մինչև 19-րդ դարը առհասարակ հայեր չեն եղել, որ

ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքը Արևմտյան Ադրբեյջանն է, որտեղ, ինչպես նաև Ադվանքում, զարգացել է ադրբեյջանցիների նախնիների մշակույթը, մյուս կողմից՝ թե Ադվանքի մատենագրական երկերը մեզ են հասել հայերեն լեզվով՝ «պատմական ճակատագրի բերումով»¹: Հարավային Կովկասում հայերի պատմական գոյության փաստի ժխտման դեպքում անհեթեթ է դառնում այն հարցի հիմնավորումը, թե ինչպես «չեղած» հայերը ոչնչացրին ադվանական գրավոր ժառանգությունը. «Միանգամայն ակնհայտ է, որ հայ հոգևորականությունը մի որոշ ժամանակ աշխատել է ադվանական վիճագրությունների և ձեռագրերի վրա՝ հանգամանորեն թաքցնելով դրանց հետքերը: Նրանք նման գործունեության մեջ ռեկորդակիրներ են, քանի որ ադրբեյջանական բնակչությունը պահպանել է հայկական արձանագրությունները»²:

Ադրբեյջանական պատմաշինության գլխավոր ճարտարապետներից մեկի՝ Ջ. Բունիաթովի աշակերտուհի Ֆարիդա Մամեդովայի վերոհիշյալ պնդումները դարձել են ադրբեյջանցիների կովկասյան ծագման հիմնական դրույթներ, ադրբեյջանցի պատմաբանների, մշակութաբանների, լեզվաբանների և այլ մասնագետների համար ուղեցույց:

Ադրբեյջանցիների ծագումնաբանության հիմքում դրվում են երեք ուղղություն՝ իրանական, թյուրքական և կովկասյան (ադվանական)³: Երեք ուղղություններն էլ առկա էին ադրբեյջանական խորհրդային պատմագրությունում, սակայն այսօր զգալիորեն հարստացել է ադվանական և թյուրքական ծագումնաբանական բաղադրիչի որոնումների և հաստատումների ներկայակը, ինչպես նաև թափ են առել ադրբեյջանական էթնոսի ձևավորման վաղեմության ու տարածքի, վերջինիս «տեղաբնիկ» էթնոսի/էթնոսների ցանկի վերանայումն ու ադրբեյջանցիների ծագմանը այդ տեղաբնիկների մասնակցության հիմնավորումը:

Ադրբեյջանական պատմագրության մեջ Կովկասյան տարածքի հետ առնչվող ծագումնաբանական պնդումները կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

¹ Փ. Մամեդովա. Об исторической географии Кавказской Албании, Армении и албанском этносе. «Caucasian Albania» (<http://www.bakililar.az/ca/photos/farida.html>).

² Նույն տեղում:

³ Տես Փ. Մամեդովա. Кавказская Албания и албанцы. Баку, 2006, с. 615:

1. Ադրբեջանի տարածքում թյուրքալեզու բնակչությունն ապրել է վաղնջական ժամանակներից (կան տարբեր մտտեցումներ՝ մ. թ. ա. 1-ին դարից, մ. թ. 5-րդ դարից և այլն, իսկ առավել ծայրահեղականները՝ մ. թ. ա. 2-րդ և առաջին հազարամյակներից), ժամանակի ընթացքում նրանց հարևանությամբ ապրող իրանալեզու ցեղերը և կովկասալեզու աղվանները դարձել են թյուրքախոս, նրանց մեջ ձևավորվել է ադրբեջանական էթնիկ ինքնագիտակցություն⁴,

2. այսօրվա ադրբեջանցիներն զգալի չափով Աղվանքի կովկասալեզու բնիկ էթնիկ միավորների մշակույթի անմիջական ժառանգորդներն են, որոնք մահմեդականացել ու թյուրքախոս են դարձել արաբական տիրապետության շրջանում, ինչի հետևանքով և վերածնվածությունը և նրանց ինքնությունը, մյուս մասն ուծացվել է հայերի և վրացիների կողմից, և նրանց միայն մի փոքր հատված այսօր դիմադրում է հայ առաքելականությանը⁵,

3. Աղվանքի կովկասալեզու բնիկներն ուծացվել են հայերի կողմից, հայերը «խլել» են նախ նրանց տարածքները, ապա՝ նրանց էթնիկական ինքնության դրսևորումները (լեզուն, կրոնը և այլն), և դրանով, մի կողմից, սահմանափակել ադրբեջանական էթնոսի հետ ամբողջանալու նրանց հնարավորությունը, մյուս կողմից՝ հայացնելով, հնարավորություն են ստացել ձևավորելու ներկայիս Հայաստանի Հանրապետությունն ու Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը: Այդ ամենը տեղի է ունեցել 19-րդ դարում, սակայն

⁴ «Հնագույն Ադրբեջանը ...Միջագետքի ընդհանուր քաղաքակրթության մաս էր և դեկավարվում էր թյուրքական դինաստիաների կողմից», «առնվազն մ. թ. ա. առաջին հազարամյակում «Ադրբեջանի տարածքը զբաղեցված էր թյուրքական բնակչության կողմից», «մ. թ. ա. երրորդ դարում... Կովկասյան Աղվանքի բնակչության գերակշիռ մասը խոսում էր թյուրքական լեզուներով...» (տե՛ս «Report Submitted by Azerbaijan Pursuant to Article 25, Paragraph 1 of the Framework Convention for the Protection of National Minorities», 4 June, 2002. «Refworld» (<http://www.unhcr.org/refworld/country,,COESFCPNM,,AZE,,4254e99d4,0.html>), հմմտ. *Ильгар Маммадов, Тафик Мусаев*. Армяно-азербайджанский конфликт: история, право, посредничество. Тула, 2006, с. 10):

⁵ Տե՛ս *Փ. Мамедова*. Кавказская Албания и албанцы, сс. 616–617; *Անյվի՛*՝ Об исторической географии Кавказской Албании, Армении и албанском этносе: Ադրբեջանի շատ հեղինակներ ուղղակի, երբեմն բառացի, կրկնում են Ֆ. Մամեդովային (տե՛ս *Юнис Насибли*. Очерк об этноконфессиональных процессах в исторической Албании и их роли в генезисе азербайджанского народа. «Caucasian Albania» (<http://www.bakililar.az/ca/photos/nasibli.html>)):

հայ պատմագրությունը իրեն հատուկ խորամանկությամբ դարեր առաջ կանխատեսել կամ ծրագրել է դեպքերի նման զարգացումը⁶,

4. պատմական Աղվանքի բնիկները ևս եղել են քյուրքալեզու⁷:

**ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (ՀԱՅԱՏԵՑՈՒԹՅՈՒՆԸ)
ԱԳՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Հակահայկական և բացարձակ հայատյաց է ինչպես աղբբեջանցիների ծագմանը նվիրված «գիտական» գրականությունը, այնպես էլ ընդհանուր քաղաքական պատմաշինությունը, որում աղբբեջանական պատմագրության հակահայկականությունն ավելի լայն ընդգրկում ունի և կարող է պայմանականորեն բաժանվել երկու խմբի.

ա) հայերն Ասիա են գաղթել Բալկաններից մ. թ. ա. առաջին հազարամյակի կեսերին և «յուրացրել են» Ռիարտական պետության պատմությունը: Հայերը մշտապես մոլորության մեջ են գցել աշխարհը՝ իրենց ներկայացնելով որպես կայուն պետական ավանդույթներ ունեցող ժողովրդի, ուռճացած են ներկայացրել իրենց երբևէ ունեցած պետական և էթնիկական սահմանները,

բ) հայերն առաջավորասիական ժողովուրդ են, մինչև 19-րդ դարը երբևէ Կովկասում չեն ապրել և ոչ մի կապ չունեն Կովկասի պատմության հետ:

Այս երկու դրույթները աղբբեջանական պատմագրության մեջ հիմնավորվում են իրարամերժ «փաստարկումներով» և բոլոր դեպքերում՝ կա՛մ աղբբյուրների հատվածային օգտագործմամբ, կա՛մ՝ բացարձակապես առանց աղբբյուրների: «Փաստարկ» են ծառայում, օրինակ, հետևյալ պնդումները.

⁶ «С возникновением Османской империи армяне теряют надежду на создание своего государства на исторической родине, территории Малой Азии. Они устремляют свои взоры на Кавказ, на исторический Азербайджан, вынашивают идею очищения Кавказа от азербайджанских тюрков. Творцы «Истории армянского народа» вводят в научный оборот понятие Восточной Армении, переосмыслив его, под которым с XVI в. до XX в. подразумевают только и только азербайджанские земли – Карабах, Ереван, Гянджа, Сюник-Зангезур» (տե՛ս *Փարիда Մամեդովա*. Об исторической географии Кавказской Албании, Армении и албанском этносе): Տես նաև *Նույնի՛ր*՝ Кавказская Албания и албанцы, сс. 591, 605, 606:

⁷ Տես *Т. Мамегов*. Кавказская Албания в IV – VII веках. Баку, 1993, сс. 33, 34:

1. հայերը մեծապետական հավակնություններ ունեցող ժողովուրդ են, և նրանց պատմագրությունը ամենավաղ շրջանից՝ առնվազն 5-րդ դարից, մոլորության մեջ է պահում աշխարհը⁸ (ըստ էության, սա Ադրբեջանի պաշտոնական քաղաքական դիրքորոշումն է),
2. հայերը մինչև 19-րդ դարը Կովկասում չեն ապրել⁹, իսկ Հայաստանն ավելի շուտ աշխարհագրական տարածք է, քան՝ պետության անուն, և գտնվում է Փոքր Ասիայում՝ Եփրատի ափերին¹⁰: Հայերն իրենց պետությունը նույնացնում են Հայկական լեռնաշխարհի հետ, մինչդեռ վերջինս լոկ աշխարհագրական տարածք է, որը նույնիսկ չունի հստակ սահմաններ¹¹:
3. Լեռնային Ղարաբաղի ներկայիս հայերը պատմական Աղվանքի այն բնիկ ժողովուրդն է, որը հետագայում հայ առաքելական եկեղեցու ազդեցությամբ հայացել է:

⁸ Տես Բ. Մամնադով, *Տ. Մուսաև*, Նշ. աշխ., էջ 10, 11, 13, 14, *Շաիր Ասադով*. Миф о «Великой Армении». Баку, 1999:

⁹ Որոշ հետազոտողներ համաձայն են հայերի գոյությունը տեսնել Փոքր Ասիայում, միայն թե այն չլինի Կովկասում. «...о нахождении Армении далеко за пределами Кавказа, а именно в Малой Азии, на двух берегах р. Евфрат свидетельствует много фактов, среди которых крещение армянского народа во главе с царем Трдатом в 314 г. в р. Евфрат» (տես Փ. Մամեդով. Об исторической географии Кавказской Албании, Армении и албанском этносе): Տես նաև X. Ю. *Вердиева*. Переселенческая политика Российской Империи в Северном Азербайджане (19–начало 20 вв.). Баку, 1999, Բ. Մամնադով, *Տ. Մուսաև*, Նշ. աշխ., էջ 18–22:

¹⁰ «Հարավային Կովկասում հայերը հայտնվել են միայն 1828–1830-ական թվականներին. 40 հազար մարդ՝ Իրանից, 84 հազար մարդ՝ Թուրքիայից... և բնակեցվել են Ելիզավետպոլի և Էրիվանի մահանգներում՝ այդ տարածքներում ապրող մահմեդականների հողերի վրա...» (տես «Report Submitted by Azerbaijan Pursuant to Article 25, Paragraph 1 of the Framework Convention for the Protection of National Minorities», 4 June, 2002. «Refworld» (<http://www.unhcr.org/refworld/country,,COESFCPNM,,AZE,,4254e99d4,0.html>): Սույն հարցադրումով Ադրբեջանը պետական մակարդակով վիճարկում է Արևելյան Հայաստանի տարածքում հայերի գոյության պատմականության և պետականություն ունենալու իրավունքը: Այս դրույթների փաստարկմանը լծվում է Ադրբեջանի պատմագրությունը՝ ի դեմս Ադրբեջանի գիտական կենտրոնների երաշխավորությամբ հրատարակվող հսկայական գրականության (օրինակ՝ *Ա. Շ. Սյւմբատզադե*. Азербайджанцы – этногенез и формирование народа. Баку, 1990; *Տ. Մամնադով*, Նշ. աշխ., *Ս. Մաշրով*, Նշ. աշխ., *Խ. Յու Վերդիևս*, Նշ. աշխ., *Փ. Մամեդով*. Об исторической географии Кавказской Албании, Армении и албанском этносе):

¹¹ Տես Փ. Մամեդով. Об исторической географии Кавказской Албании, Армении и албанском этносе; *Ս. Մաշրով*, Նշ. աշխ., էջ 54 – 75:

4. Հայերը յուրացրել են Աղվանքի պատմագրությունը՝ երկերը թարգմանելով հայերեն և վերացնելով բուն աղվանական պատմության հուշարձանները:
5. Թուրքիայում Հայոց ցեղասպանությունը հայերի կողմից հորինված առասպել է¹²:
6. Ադրբեջանի «պատմագիրներին» առավել հուզող խնդիրը պատմական Աղվանքի և խորհրդային շրջանի Ադրբեջանի տարածքների նույնականացումն է, ուստի անհրաժեշտ է համարվում Լեռնային Ղարաբաղը ներկայացնել որպես բուն Աղվանքի մաս¹³:

Ընդհուպ մինչև տասնիններորդ դարը Արցախի տարածքի «աղվանականությունը» ներկայացնելու ծրագրի մաս է Լեռնային Ղարաբաղի հայ մելիքների աղվանական ծագման «ապացուցումը»¹⁴:

Ադրբեջանական պատմաշինության համար կարևոր խութերից մեկը մեծ քանակությամբ քրիստոնեական հուշարձանների առկայության բացատրության անհրաժեշտությունն է, քանի որ, եթե Աղվանքի բնակչությունը մահմեդականացել է առաջին հազարամյակում, իսկ այս տարածքում հայեր չեն եղել, ապա հարց է ծագում, թե ինչու է շարունակվել քրիստոնեական հուշարձանների շինարարությունը: Մինչդեռ ադրբեջանական պատմագրությունը հայերին մեղադրում է «աղվանական» հուշարձաններն իրենց վերագրելում¹⁵:

Ադրբեջանական պատմագրությանը խորապես հուզող հարցերից է Կովկասում քրիստոնեության ընդունման առաջնության և եկեղեցական աստիճանակարգության հարցը¹⁶: Քննարկման հիմնական թեմաներից են՝

¹² Տես *Ս. Ասիդով*, Նշ. աշխ., էջ 210–224:

¹³ Տես *Ս. Բաբաև*, Некоторые особенности Материальной культуры Кавказской Албании. «Caucasian Albania» (<http://www.bakililar.az/ca/photos/babaev.html>):

¹⁴ *Ն. Ա. Դձավանիւր*, О происхождении рода Мелик-Аслановых (<http://www.bakililar.az/ca/photos/nurlana.html>).

¹⁵ «...жемчужинами албанского зодчества Гандзасарским и Хотаванкским монастырями, а также множествами подобным им памятниками, расположенными на исконно азербайджанской земле, которые именуются фальсификаторами величайшими памятниками армянского зодчества...» (տես *Ս. Գաձձևեա*, Неповторимость культовой архитектуры Кавказской Албании (<http://www.bakililar.az/ca/photos/sabina.html>)).

¹⁶ Տես *Ք. Գեյոշև*, Христианство в Кавказской Албании. Баку, 1984 (տես նաև գրախոսականը *Յ. Վ. Տմբաթյան*, Замечания по поводу книги Р. Геюшева «Христианство в

ա) հայերը մոլորեցնում են աշխարհը՝ հայտարարելով, թե իրենք են առաջինն ընդունել քրիստոնեությունը որպես պետական կրոն,

բ) Աղվանքում քրիստոնեությունը տարածվել է հայերից անկախ, և Աղվանքն ունի իր առաքյալը,

գ) Աղվանքի քրիստոնեությունը տարբերվում է հայ դավանաբանությունից. աղվաններից պահպանված միակ բեկոր ուղիները ամեն կերպ խուսափել են հայ առաքելականությունից, և հենց շնորհիվ դրա էլ կարողացել են պահպանել իրենց ինքնությունը:

Այդ պնդումների նպատակն է բացառել աղվանից եկեղեցու նկատմամբ հայկական հավակնությունները և Հայոց եկեղեցու իրավասությունը Գանձասարի թեմի նկատմամբ:

ԱԳՐԲԵԶԱՆԱԿԱՆ ՓԱՍՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Իրական փաստարկներ չլինելու պայմաններում հիմնական ճանապարհը աղբյուրների և տեղեկությունների շրջանցումն է կամ հատվածային օգտագործումն ու «տրամաբանական վերականգնումը»:

Աղբրեջանական «աղվանագիտական պատմագրության» կառուցողները կան շրջանցում, կան շատ հպանցիկ են խոսում այնպիսի «անկարևոր» հարցերի մասին, թե ինչպես և ինչու են աղվաներեն լեզվի այբուբենը կազմել Կովկասում չեղած հայերը, ինչպես է պատահել, որ, չնայած Կովկասում «հայերի բացակայությանը», «Աղվանքի տարածքի» գրավոր ժառանգությունը հայերեն լեզվով է, սահմանափակվելով «պատմական ճակատագրի առանձնահատկություն» և այլ անորոշ ձևակերպումներով:

Նյութերի մի մասը պարուրված է ակադեմիական շարադրանքի շղարշով և կարող է թողնել լուրջ հետազոտության տպավորություն: Նյութի մատուցման ձևը և ահռելի քանակով հրատարակումը ազդում են գիտական շրջանների վրա: Նման օրինակներից է Սիմայ լեռան վրա հայտնաբերված «աղվաներեն» ձեռագիրը¹⁷: Այն վերծանող հեղինակներից երկուսի՝ Ջազա

Кавказской Албании». «К освещению проблем истории и культуры Кавказской Албании и Восточных провинций Армении». Е., 1991, сс. 406–429):

¹⁷ 2001 թ. մայիսի 21–24-ը Բաքվում տեղի ունեցած «Կովկասյան Աղվանքի էթնոմշակութային ժառանգությունը» գիտաժողովի մասին հաղորդման համաձայն (<http://www.caucasianhistory.org>), Չ. Ալեքսիձեն հայտարարություն է արել 4-րդ դարով թվագրվող աղվաներեն

Ալեքսիձեի և Ժան-Պիեր Մահեի կողմից հրատարակության համար գրված նախաբանում փորձ է արվում պարզելու Աղվանքում քրիստոնեության տարածման ժամանակաշրջանը¹⁸, ինչպես նաև այն հարցը, «թե ինչպես հայերը չեն մասնակցել Աղվանքում քրիստոնեության տարածմանը»: Այնուհայտ է, որ այս գիտնականների հեշտ հերքելի փաստարկները, աղբյուրները և նույնիսկ ձևակերպումները վերցված են աղբրեջանական պատմաշինության զինանոցից: Մասնավորապես՝ Ջազա Ալեքսիձեի և Ժան-Պիեր Մահեի գրում են. «8-րդ դարում Աղվանքի եկեղեցու ժամասացության լեզուն դարձավ հայերենը: Սա տեղի ունեցավ արաբական խալիֆայության օրոք. երկրի հարավային մասը, որը մոտ էր Հայաստանին, քրիստոնյա էր և հայալեզու, մինչդեռ հյուսիսայինը՝ Կուրի ձախ ափում, որը Կասպից ծովով դեպի Պարսկաստան ելք ուներ, ի վերջո իսլամացավ»¹⁹: Այս միտքը ուղղակիորեն աղբրեջանական աղվանագիտության չափավոր թևի մոտեցումների պատճենն է, մինչդեռ հենց վրացական աղբյուրների համաձայն՝ 10-րդ դարում Շաքիում իշխող Ատրներսեհ Բագրատունու որդի և հաջորդ Իշխանիկի օրոք մինչև ղեմ շարունակում էին պայքարել քաղկեդոնիկ և հակաքաղկեդոնիկ քրիստոնյաները²⁰:

ձեռագրի մասին և «գիտաժողովի մասնակիցներին ցուցադրել է Սինայի թերակղզում հայտնաբերված 4-րդ դարով թվագրվող աղվաներեն գրերը (հայերեն գրերից մեկ հարյուրամյակ առաջ): Այս հայտնագործությունն արձատապես հերքում է իբրև թե 5-րդ դ. Մեսրոպ Մաշտոցի կողմից աղվանական գրերի գյուտը՝ շատ հայ գիտնականների ընդունած պնդումը: Ջ. Ալեքսիձեի ելույթից հետո արտասահմանյան շատ հետազոտողներ ստիպված էին վերանայել աղվանական գրերի վերաբերյալ իրենց զեկուցումները և ընդունել այս ոլորտում իրենց նախկին հայացքների սխալը»: Դատելով Ջ. Ալեքսիձեի ելույթի տեքստից՝ նա իսկապես ասել է, որ Սինայ լեռան վրա հայտնաբերված ձեռագիրը կարող է թվագրվել 4–5-րդ դդ. սահմանագծով, որով, ըստ Ջ. Ալեքսիձեի, կարելի է սահմանել մնացած հայ ձեռագրերի ժամանակագրական նոր ցանկ՝ հունական-վրացական-աղվանական-հայկական-ասորական (տես *Zaza Aleksidze. Предварительное сообщение об идентификации и дешифровке албанского текста, обнаруженного на Синайской горе. «Caucasian Albania»* (<http://www.bakililar.az/ca/photos/zaza.html>): Ձեռագրի վերծանության հրատարակության՝ Ջ. Ալեքսիձեի հեղինակակցությամբ գրված նախաբանում աղվաներեն այբուբենի ստեղծման հեղինակը Մեսրոպ Մաշտոցն է:

¹⁸ Տես «The Caucasian Albanian Palimpsests of Mount Sinai» (*Monumenta Palaographica Medii Aevi: Series Ibero-Caucasica*), 2 vol., ed. by Jost Gippert, Wolfgang Schulze, Zaza Aleksidze, Jean-Pierre Mahe. Turnhout, 2008:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Տես *L. Մելիքսիս-Բեկ*, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա: Ե., 1934, էջ 203, *նույնի՝* Նշ. աշխ., հ. Գ: Ե., 1955, էջ 39–40, 67:

Եզրակացություններ

Աղբբեջանական «գիտական» պատմագրությունը Հայաստանի պատմության կեղծարարության միջոցով իրականացվող պատմաշինություն է, որը նպատակ ունի, մի կողմից, լուծելու ներքին խնդիրները՝ աղբբեջանցիների ն ազատելու քաղաքակրթական բարդույթից, նպաստելու ազգային ինքնահաստատմանը, մյուս կողմից՝ միջազգային գիտական և ընթերցող լայն շրջաններին ներկայացնելու հեռամետ աղբբեջանական քաղաքական ծրագրերի պատմական հիմնավորումները:

Աղբբեջանի կողմից իրականացվող պատմական կեղծարարության ռազմավարական թիրախներից մեկը պատմական Աղվանքի և խորհրդային Աղբբեջանի տարածքների նույնականացման խնդիրն է: Այդ նպատակի իրականացմանն է միտված նաև կեղծ գիտելիքի ստեղծման և տարածման միջոցով Լեռնային Ղարաբաղի՝ որպես բուն Աղվանքի տարածքի մասի ներկայացումը:

Աղբբեջանական պատմագրության կողմից առաջ քաշվող հաջորդ թեզը աղբբեջանական էթնոսի մեջ Աղվանքի էթնիկ խմբերի ճուլման և ներկայիս աղբբեջանցիների՝ աղվանների ժառանգորդ լինելու կեղծ տեսությունն է:

Միննույն ժամանակ, Աղբբեջանի իշխանությունները իրականացնում են նաև հայկական և աղվանական մշակութային ժառանգության ֆիզիկական ոչնչացման քաղաքականության, ինչը համարժեք արձագանք չի ստանում համապատասխան միջազգային կառույցների կողմից: Միջազգային կառույցների այս վերաբերմունքը խրախուսում է Աղբբեջանի «գիտնականներին» ու նրանց պատվիրատու իշխանություններին, որոնք մի կողմից, նպաստում են իրենց ժողովրդի ազգային հպարտության և արժանապատվության ձևավորմանը, մյուս կողմից՝ միջազգային գիտական հանրությանն են ներկայացնում հայերի հազարամյա «կեղծիքների ապացույցները»:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՆԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Է. Բ. ԱԹԱՆԵՍՅԱՆ, ՀՀ ՊՆ ԱՌՎԻ-ի ասպիրանտ



1. Ներածություն

Պատմական նենգափոխումները Ղարաբաղյան հակամարտության կարգավորման աղբյուրական ռազմավարության կարևոր գործիքներից են՝ ուղղված հայկական կողմի պատմաիրավական-քաղաքական փաստարկների չեզոքացմանը:

Բաքուն ջանում է իր կեղծ պատմագիտական մշակումները «օրինականացնել» և ամրագրել՝ դրանք շրջանառության մեջ դնելով միջազգային գիտական-ակադեմիական ասպարեզում: Այդ նպատակով

նա ակտիվորեն օգտագործում է նաև տեղեկատվական պատերազմի միջոցներն ու եղանակները, թեև գիտական մոլորեցման և տեղեկատվական քարոզչության միջև կան էութենական տարբերություններ:

Գիտական մոլորեցումը նպատակաուղղված է գիտելիքի մակարդակով ճշմարտության աղավաղմամբ տվյալ սուբյեկտի նեղ շահերի ռազմավարական առաջնդմանը, մինչդեռ տեղեկատվական քարոզչության նպատակն է ապահովել տվյալ սուբյեկտի գերակա դիրքը իրավիճակային կտրվածքով: Մինևույն ժամանակ, հարկ է նշել, որ գիտական մոլորեցումը, կամ գիտելիքի նենգափոխումը, ևս իր վրա կրում է իրադրության ու տվյալ միջավայրում տեղի ունեցող գործընթացների ազդեցությունը՝ փոփոխելով իր գործադրման մեթոդներն ու եղանակները, բայց հաստատուն պահելով ռազմավարական նպատակը:

2. Աղբյուրական կեղծարարությունները խորհրդային շրջանում

ԱդրԽՍՀ կազմում ներառումը պատմական հայկական հողերի աղբյուրական պատմագիտական հայեցակարգին «հարմարեցնելու» խնդիրը հանրապետության ղեկավարության առաջ է հայտնվել խորհրդային առաջին իսկ տարիներից:

Բաքվի քայլերը Ղարաբաղում ուղղված էին տեղի հայությանը՝ երկրամասի նկատմամբ բոլոր տեսակի, և առաջին հերթին՝ պատմաիրավական իրա-

վունքներից զրկելուն և ԼՂԻՄ-ում ադրբեջանական ներկայությունն ամրապնդելուն¹: Փաստորեն, ադրբեջանական պատմագիտությունը պետք է գիտականորեն հիմնավորեր ադրբեջանական ժողովրդի անքակտելի պատմական իրավունքը Լեռնային Ղարաբաղի տարածքի նկատմամբ հակառակը վկայող բազմաթիվ փաստավավերագրական տեղեկությունի առկայության պայմաններում: Խնդիրը բարդանում էր այն պատճառով, որ հետագայում «ադրբեջանցի» կոչված թյուրքալեզու մահմեդական քոչվոր ցեղերը, անգամ տվյալ տարածքում հայտնվելուց հետո, միշտ էլ կազմել են չնչին փոքրամասնություն: Դրա հետ մեկտեղ հայերի կրոնական պատկանելությունը բացառում էր ԱդրԻՄՀ տարածքում առկա մշակութային ժառանգությունը մեխանիկորեն «ադրբեջանական» հռչակելու գործելաճի կիրառումը:

Ըստ այդմ՝ արցախցիների «հայրենագրկումն» իրականացվեց երկու փուլով. Աղվանքի վերաբերյալ 1960-ական թթ. ակադեմիկոս Ջիյա Բունիաթովի կողմից առաջ քաշված վարկածով արցախյան պատմամշակութային ժառանգությունը նախ վերագրվեց աղվաններին և ապա՝ իբրև նրանց հետնորդների՝ ադրբեջանցիներին: Դրա նպատակն էր «գիտականորեն» հիմնավորել երկրամասում ադրբեջանցիների պատմական ներկայությունը և նրանց ծագումնաբանական կապը աղվանների հետ²: Ըստ այդ վարկածի՝ Լեռնային Ղարաբաղի հայերը 1815 թ. Աղվանաց կաթողիկոսության վերա-

¹ «Կարելի է առանց չափազանցության հաստատել, որ միայն Հեյդար Ալիևի կողմից Ադրբեջանում իշխանությունն ստանձնելուց հետո Ղարաբաղի ադրբեջանցիները մարզում իրենց լիարժեք տերեր զգացին: 1970-ական թվականներին մեծ աշխատանք էր կատարվում: Այն նպաստեց սահմանակից շրջաններից՝ Լաչինից, Ադղամից, Ջեբրայիլից, Ֆիզուլիից, Ադջարեյիից և այլն, ադրբեջանական բնակչության ներհոսքին դեպի Լեռնային Ղարաբաղ: Բոլոր այս քայլերը, որոնք իրականացվում էին Ադրբեջանի Կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Հեյդար Ալիևի հեռատեսության շնորհիվ, նպաստում էին ադրբեջանական բնակչության ներհոսքին» (տես *Рамиль Усубов*. Нагорный Карабах, миссия спасения началась в 70-е годы. «Панорама», 12 мая 1999 г.: Բերվում է քստ՝ «Gandzasar.ru» կայքի (http://www.gandzasar.ru/nagorno-karabakh.htm#_ednref18):

² Խնդրո առարկայի վերաբերյալ ադրբեջանցի հետազոտողների աշխատություններից տես, օրինակ, *С. Асагов*. Миф о «Великой Армении». Баку, 1999; *Ф. Мамегова*. К вопросу об албанском (кавказском) этносе. История Азербайджана по документам и публикациям. Баку, 1990; *С. А. Мамегов*. Азербайджан по источникам XV – первой половины XVIII вв. Баку, 1993; «Гандзасарский монастырский комплекс». «История Азербайджана по документам и публикациям», под. ред. З. М. Буниатова. Баку, 1990; *Д. А. Ахундов*. Архитектура древнего и раннесредневекового Азербайджана. Баку, 1986; *Д. А. Ахундов, М. Д. Ахундов*. К вопросу о «спорных» моментах в истории и культуре Кавказской Албании (<http://www.bakililar.az/ca/history/spor.html>):

ցումից հետո «հայացած աղվաններն» են, որոնք որևէ էթնիկական կապ չունեն հայերի հետ³:

Այդ վարկածի համար «գիտական» հիմքեր ստեղծելու նպատակով ադրբեջանական պատմագրությունը դիմեց պատմական աղբյուրների կեղծմանը, մասնավորապես՝ անտիկ և միջնադարյան հայտնի հեղինակների աշխատությունների թարգմանություններից հանվեցին Ղարաբաղի և անգամ ամբողջ Արևելյան Հայաստանի հայկական լինելն ապացուցող հատվածները⁴:

Ընդամին, եթե խորհրդային շրջանում ադրբեջանական կեղծարարությունները որոշակիորեն սահմանափակվում էին Կենտրոնի՝ կոմունիստական-ամբողջատիրական «ինտերնացիոնալիստական» գաղափարախոսության շրջանակներում իրականացվող կուսակցական վերահսկողությամբ, ապա Ադրբեջանի անկախացումից հետո այդ «գալիչ գրքնությունը» վերացավ, և պատմական կեղծարարությունը դարձավ Ադրբեջանի Հանրապետության պաշտոնական քաղաքականության կարևոր մաս՝ ստանալով պետության բարձրագույն ղեկավարների հովանավորությունը:

3. Ադրբեջանական կեղծարարությունները հետխորհրդային շրջանում

Բունիաթովի հիմնադրած ադրբեջանական պատմագիտության, այդ թվում՝ «աղվանագիտության» դպրոցի շեշտադրումները փոփոխության ենթարկվեցին ԽՍՀՄ փլուզման շրջանում, երբ Ադրբեջանական ԽՍՀ ներքաղաքական օրակարգ մտավ ադրբեջանական պետականության և հասարակության ինքնահաստատման ու հետագա զարգացման ուղեգծի որոշման հարցը:

³ Ղարաբաղցիների՝ հայացված «աղվաններ» լինելու վերաբերյալ տես, օրինակ, *И. Г. Алиев. Карабах. Баку, 1989; Играр Алиев. Карабах в древности. «История Азербайджана по документам и публикациям». Баку, 1990; Каджар Чингиз. Выдающиеся сыны древнего и средневекового Азербайджана. Баку, 1995; Махмуд Исмаил. История Азербайджана (Краткий обзор с древнейших времен до 1920 г.). Баку, 1995; Гехар Мамедова. О походе Зубова в Азербайджан (1796 г.). Баку, 2003; Земфира Гаджиева. Гарабахское ханство: социально-экономические отношения и государственное устройство. Баку, 2008; М. С. Нейматова. Мемориальные памятники Азербайджана (XII–XIX века). Баку, 1981:*

⁴ Տես *В. А. Шнирельман. Войны памяти: мифы, идентичность и политика в Закавказье. М., 2003, сс. 216–222:*

Չևավորվեցին երկու մոտեցումներ.

–*չափավոր ազգայնամոլական*, որը բացառում էր կտրուկ հրաժարումը կոմունիստական անցյալից, այդ թվում՝ կեղծարարության սահմանափակվածությունից,

–*բացահայտ ազգայնամոլական*, որը ենթադրում էր Ադրբեջանի խորհրդայնացմամբ «ընդհատված» ավանդույթների վերակենդանացում և հրաժարում զարգացման ռուսական ուղեգծից՝ հոգուտ թուրք–թյուրքականի, այդ թվում՝ տարածաշրջանի պատմության նենգավիոխում համապատասխան ոգով:

Ղարաբաղյան հակամարտության սկզբնական փուլում Ադրբեջանական ԽՍՀ-ն որդեգրեց խորհրդային օրինականության պահապանի դիրքերից հանդես գալու գործելաոճ՝ ներքին օգտագործման համար նախատեսելով բունիաթովյան տեսությունից բխող պնդումներ, համաձայն որոնց՝ Հայաստանի հետ վերամիավորման ղարաբաղցիների պահանջը ոչ թե ինքնորոշման, այլ Ադրբեջանի տարածքային ամբողջականության նկատմամբ «եկվոր հայերի» կողմից ոսոճության դրսևորում էր⁵:

Վերջին տեսակետն ավելի ցայտուն դրսևորում ստացավ ադրբեջանցիներին բացառապես թյուրքական ծագում վերագրող Ադրբեջանի նախագահ Աբուլֆազ Էլչիբեյի որդեգրած թուրքամետ քաղաքականության շրջանակներում: Մասնավորապես՝ 19-րդ դարի սկզբի ռուս-պարսկական պատերազմներից հետո Կովկասում ձևավորված իրողությունները որակվեցին իբրև Ռուսաստանի և Իրանի միջև «միասնական» Ադրբեջանի մասնատում, իսկ հայերի վերադարձը՝ որպես Հյուսիսային Ադրբեջանի մի շարք շրջաններում, այդ թվում նաև Ղարաբաղում, էթնիկական պատկերը փոխելու ռուսների հեռահար ծրագրերի իրականացում⁶: Այդ համատեքստում Ղարաբաղյան հիմնախնդիրը ներկայացվում էր որպես ռուսական կայսերական ծավալապաշտության դրսևորում՝ միտված Ադրբեջանը Կրեմլի

⁵ Տես «Агрессия: Баку-январь-1990», под редакцией Азера Касум-Заде и Махира Гамзаева), Баку, 1990 (<http://www.elibrary.az/docs/aggress.pdf>):

⁶ Նման պնդումները հիմնավորելու համար ադրբեջանական պատմագրությունը հատկապես արժեքավորում է արևմտյան հեղինակների գործերը: Տես, օրինակ, *Джастин Маккарти, Каролин Маккарти*. Тюрки и армяне. Руководство по армянскому вопросу. Баку, 1996; *Н. А. Зенькович*. Ильхам Алиев. Взгляд из Москвы. М., 2008; *Н. Н. Шавров*. Новая угроза русскому делу в Закавказье: предстоящая распродажа Мугани инородцам. СПб., 1911:

քաղաքական ազդեցության ոլորտում պահելուն: Ուստի Բաքուն խոսեց ադրբեջանցիների՝ իբրև բաժանված ժողովրդի մասին, ըստ այդմ՝ բարձրաձայնելով իր տարածքային նկրտումները Իրանի հյուսիսային շրջանների նկատմամբ⁷:

Էլչիբեյին փոխարինած Հեյդար Ալիևը որոշակիորեն վերանայեց Ղարաքաղյան հակամարտության նկատմամբ առկա հայեցակարգային մոտեցումները՝ պատմագիտությունը ծառայեցնելով Ադրբեջանի բնակչության նոր ինքնության՝ «ադրբեջանականության» ամրագրմանը⁸: Բացահայտ հակաիրանական և հակառուսական պնդումներն ու «թյուրքական պատմական հաղթանակներով» հպարտությունը փոխարինվեցին համաադրբեջանական կորուստների վշտով՝ պարտվածի բարդությամբ ու բուն պարտությունը դարձնելով ամբողջ բազմազգ Ադրբեջանի մտահոգության խնդիր⁹:

«Եկվոր հայերի» և «գոհի կերպարի» գաղափարների վրա հիմնված հայեցակարգային մոտեցումներն ստացան պետաիրավական ամրագրում Ադրբեջանի նախագահի 1998 թ. մարտի 26-ի հրամանագրով, որով մարտի 31-ը հռչակվում էր ադրբեջանցիների ցեղասպանության գոհերի հիշատակի օր: Ըստ այդ փաստաթղթի՝ ՀՀ-ն ստեղծվել է «պատմական» ադրբեջանական տարածքներից ադրբեջանցիների տեղահանման հետևանքով, և դրա «անբաժանելի մասն էր ցեղասպանության քաղաքականությունը»¹⁰: Իբրև վերջինիս դրսևորումներ հիշատակվում են 1905–1907 թթ. հայ-թա-

⁷ Шу О. В. *Цыганов*. Ильхам Алиев: открытый мир. М., 2008, с. 250:

⁸ «Հատուկ հայեցակարգ առաջարկվեց 1993 թ. հետո՝ «ադրբեջանականության» հայեցակարգը: Այն պետք է լինի գիտնականների հիմնական գործը, և, նամանավանդ, կարծում եմ, երիտասարդների գործն այսօր, որովհետև կարծում եմ, դուք եք ապագայի գիտնականներն ու հետազոտողները. Ադրբեջանականության հայեցակարգը պետք է ամբողջությամբ լրացվի: Մեր ազգային առաջնորդ Հեյդար Ալիևն է, փաստորեն, հուշել դրա հիմքերը. ազգային-հոգևոր արժեքներ, մեր լեզուն և մեր պատմությունը...» (տես *Elnur Aslanov*. Speech at the «Spring debates» on the subject «Are we Europeans?», held on May 6, 2009 in Baku. «National Discussions: Spring Debates. «Are we Europeans?»». Baku, 2009, PP. 5–6):

⁹ Շրջանառության մեջ դրվեց, մասնավորապես, ադրբեջանական տարածքների 20 %-ի զավթման, մի քանի տասնյակ հազար գոհերի և ավելի քան մեկ միլիոն անօթևան ադրբեջանցիների մասին վարկածը (տես Հեյդար Ալիևի պաշտոնական կայքէջը (http://www.heydar-aliyev.org/index_ru.jsp)):

¹⁰ «Указ Президента Азербайджанской Республики о геноциде азербайджанцев». «Государственная Комиссия по делам военнопленных, заложников и без вести пропавших граждан» (<http://www.human.gov.az/?sehife=etrafli&dil=ru&sid=MTMyMjMzMtA4MTMyNjE1Mw==>).

քարական բախումները, 1918 թ. Բաքվի մուսավաթական ապստամբության ճնշումը, 1948–1953 թթ. ՀԽՍՀ ադրբեջանական բնակչության մի մասի՝ Կուր–Արաքսյան դաշտավայր տեղափոխելու մասին ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1947 թ. որոշումը, 1992 թ. Խոջալուի դեպքերը¹¹: Ընդհանուր առմամբ, ադրբեջանական կողմը պնդում է, որ «20-րդ դարում հայերի կողմից ադրբեջանցիների նկատմամբ իրագործված ցեղասպանությունների զոհ է դարձել 2,5 մլն ադրբեջանցի»¹²:

Պատմական գիտության կեղծման գործելաոճը շարունակվում է նաև Իլիամ Ալիևի օրոք¹³: Աղավաղվեցին և պաշտոնական Բաքվի քաղաքական

¹¹ Տես նույն տեղում:

¹² Տես *Տաբր Ասադով*. Миф о «Великой» Армении. Баку, 1999 (<http://karabakh-doc.azerall.info/ru/armyanstvo/arm8-1.php>):

¹³ 2005 թ. դեկտեմբերի 14-ին Ադրբեջանի Գիտությունների ակադեմիայի 60-ամյակին նվիրված հանդիսավոր ժողովի ժամանակ Ի. Ալիևը կոչ է արել ադրբեջանական գիտնականներին ապացուցել Լեռնային Ղարաբաղի նկատմամբ դարաբաղահայության պատմական իրավունքներից գուրկ լինելու իրողությունը: Իբրև մասնագետների կողմից մշակման ենթակա թեզ, նա առաջարկել է ապացուցել, որ «հայերը եկել են Լեռնային Ղարաբաղ՝ Ադրբեջանի անբաժանելի մաս, իբրև հյուրեր» ուստի «ընդհանրապես որևէ իրավունք չունեն պնդելու, թե Լեռնային Ղարաբաղը նախկինում իրենց է պատկանել» (տես «Речь Президента Азербайджана Ильхама Алиева в торжественном собрании, посвященное 60-летию Национальной Академии Наук». «www.president.az», 14.12.2005 (http://archive.president.az/print.php?item_id=20070810125435235&sec_id=11)):

Որպես Ադրբեջանում 2006 թվականից պետության կողմից ուղղորդող կեղծարարությունների օրինակ տես *Փազиль Իбрагимլի*. Карабахская игра по внешней политике Советской России (20-е годы XX века). Баку, 2007; նույնի՝ Исторические корни мартовского геноцида. Баку, 2008; նույնի՝ Трагическая судьба Эривани. Баку, 2008; *Карам Шукуров*, *Ягуб Махмудов*. Нахичеван: история и памятники. Баку, 2007; *Хавер Аббасова*. И. Алиев продолжатель политики Г. Алиева (Материалы межвузовской конференции, посвященной 85-летию со дня рождения Г. Алиева). Баку, 2008; *Нуру Мамедов*. Депортация азербайджанцев из историко-этнических земель в Арм. ССР и ее трагические последствия (1948-1953). Альманах «Литературный Иреван». Баку, 2007; *Азиз Боран*. Ходжалинский геноцид: причины, методы, последствия. Баку, 2008; *Асмед Мухтарова*. Нашествие тюркских племен на Кавказ. Программа для магистратуры. Баку, 2008; *Габиль Алиев*. История Кавказа (с древнейших времен до наших дней). Методические указатели для бакалавров. Баку, 2008; *Рафиг Гурбанов*. Освободительная борьба народа против колониальной политики царизма на Кавказе в XVIII-XIX веках. Программа для магистратуры. Баку, 2007; *Саубар Исмаилова*. Культура тюркских народов в раннем средневековье. Древнетюркская письменность. «Тарих вя онун проблемляри» («История и ее проблемы»), 2004, № 4; *Севиндж Руинтан*. Армяно-Азербайджанский конфликт и Турция (Материалы международного научно-практического симпозиума «Тюркский мир в направлении развития мира по новым тенденциям. Азербайджан и

նպատակներին համապատասխանեցվեցին նորագույն շրջանում Ղարաբաղյան հակամարտության ծագման պատճառները և 20-րդ դարի 80-ական թվականների վերջին դրա սրման խնդիրը, ադրբեջանական պետության կենսագործունեությունը և իրողությունները, իրադարձությունների պատճառահետևանքային կապը և ռազմական գործողությունների ընդհանուր տրամաբանությունն ու իրական հետևանքները (մարդկային կորուստներ, տարածքներ, փախստականներ): Խեղաթյուրվում են նաև հիմնախնդրի կարգավորման միջազգային-իրավական հիմքերը¹⁴:

Իլիամ Ալիևի օրոք Բաքուն ակտիվացնում է իր ջանքերը հակամարտության «վերամիջազգայնացման», տարբեր միջազգային կառավարական ատյաններում կեղծ գիտելիքի կիրառմամբ, ԵԱՀԿ Մինսկի խմբի հովանու ներքո ընթացող կարգավորման գործընթացին խոչընդոտող, միակողմանի ադրբեջանականաստ քանաձևերի ընդունման նպատակով: Այսպիսով՝ Ադրբեջանի կողմից տվյալ փուլում լայնորեն կիրառվող «հայկական ազրեսիայի» վերաբերյալ վարկածը առանցքային նշանակություն ստացավ Բաքվի անվտանգային հայեցակարգային մոտեցումներում¹⁵:

Турция», посвященного 81-летней годовщине рождения общенационального лидера Азербайджанского народа Г. Алиева и ко дню Республики – 28 Мая. 24–27 мая 2004 года). Баку, 2004; *Айнуր Гусейнова*. Источники об участии скифов в процессе формирования азербайджанского народа. «Tarix və onun problemləri» («История и ее проблемы»), 2007, № 3; *Асиф Байрамов*. Основы этнографии и этнография Азербайджана. Методологическое пособие. Баку, 2008; *Фахрийя Гавилова*. Оккупированные мемориальные музеи Карабаха. «Археология Азербайджана», 2007, № 1–2; *Сулейман Алиярлы*. Этногенезис и историография Азербайджана. «Гамлет Исаханлы, Меджлисы по науке и искусству». Баку, 2008 (на азерб. яз.); *İnyəli*՝ История Азербайджана с древнейших времен до 70-х гг. XIX в. Изд. 2. Баку, 2009; *Забил Байрамов*. Некоторые вопросы управления Азербайджанского Сефевидского государства в книге «Путешествия Тавернье». «Вестник Бакинского Университета» (Серия гуманитарных наук), 2004, № 2; *Рабиль Сулейманлы*. Отношения Азербайджан-Армения (1918-1920). «Azərbaycan Dövlət Pedaqoji Universitetinin Xəbərləri» («Новости Азербайджанского государственного педагогического университета»), 2008, № 1; *Атамоглан Маммедли*. Пришельцы. Баку, 2008; *Кямаля Софиева*. Кавказское движение Османской армии и ее освободительная роль в Азербайджане. Баку, 2008:

¹⁴ Տես, օրինակ, *В. Казимиров*. Два хельсинкских принципа и «атлас конфликтов». «Россия в глобальной политике», 2007, № 2 (http://www.globalaffairs.ru/number/n_8403):

¹⁵ «Ադրբեջանի Հանրապետության դեմ ձեռնարկված ազրեսիան հանրապետության անվտանգային միջավայրի գլխավոր բնութագրիչն ու առանցքային գործոնն է ազգային անվտանգության քաղաքականության ձևակերպման գործում» (տես «National Security Concept of the Republic of Azerbaijan». Approved by Instruction № 2198 of the President of the Republic of Azerbaijan on 23 May 2007 (<http://azembassy.pl//dload/NSC.pdf>):

4. Եզրակացություններ

Հայաստանի պատմության և Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ Ադրբեջանի կողմից պետական կառույցներով համակարգվող կեղծ գիտելիքի ստեղծումն ու տարածումը ծառայեցվում են ներքին և արտաքին լսարաններում քիրախային նպատակների հասնելու համար.

- *ներքին լսարանում`*

- համոզել ադրբեջանական հասարակությանը, որ հակամարտության էությունն է վերականգնել «պատմական արդարությունը», այն է՝ վերադարձնել հայերի հսկողության տակ գտնվող բոլոր ադրբեջանական տարածքները, ներառյալ՝ ներկայիս ՀՀ տարածքը: Դրանով իսկ Ղարաբաղյան հակամարտությունը տեղափոխվում է ՀՀ-ի նկատմամբ տարածքային ոսնձգությունների հարթություն, և կեղծ գիտական հիմքեր են ստեղծվում ապագայում ՀՀ-ի դեմ ռազմական ագրեսիայի համար,

- օգտագործել Ղարաբաղյան հիմնախնդիրը ադրբեջանական ազգի համախմբման և ներքին սոցիալ-տնտեսական ու իրավական-քաղաքական բնույթի բազմաթիվ խնդիրների քողարկման նպատակով:

- *արտաքին լսարանում`*

- միջազգային հանրությանը ներկայացնել հակամարտության վերաբերյալ իր հայեցակարգը, որի համաձայն՝ Ադրբեջանի «պատմական տարածքներում» Հայաստանի Հանրապետության գոյության հանդուրժումը Ադրբեջանի կողմից արդեն իսկ էական զիջում է, ուստի Ղարաբաղյան հակամարտության համատեքստում Ադրբեջանի կողմից տարածքային նոր զիջումները անընդունելի են:

- Ղարաբաղյան հակամարտության էության նենգափոխմամբ ձևավորել ադրբեջանապաստ մթնոլորտ և միջազգային տարբեր կառույցներում (ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, Եվրախորհրդարան, ԵԽԽՎ, ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողով, ՆԱՏՕ-ի Խորհրդարանական վեհաժողով, «Իսլամական կոնֆերանս» կազմակերպություն), ապահովել ադրբեջանական տեսակետներն արտացոլող բանաձևերի ընդունում:

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱԳՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մ. Մ. ՀԱՄՐԱԹՅԱՆ, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի վարիչ



Հայոց պատմության և պատմամշակութային ժառանգության վերաբերյալ աղբյուրաբանական կեղծարարությունները, առավել ծավալուն ստանալով հետխորհրդային շրջանում, դուրս են եկել առանձին մենագրությունների ու հոդվածների շրջանակներից և տարածվել ընթերցողների շատ ավելի մեծ դաշտ ունեցող ինտերնետային կայքերում ու բուկլետներում: Այդ կեղծարարությունը առավել ազդու է հայկական ճարտարապետական հուշարձանների կեղծման պարագայում, քանի որ, ի տարբերություն «գիտական» աշխատություններից, հուշարձանների խեղաթյուրված պատկերները խոր տպավորություն են գործում իրազեկ լայն լսարանի վրա և սպառնալիք ստեղծում հայկական ճարտարապետության պատմության համարժեք ընկալման համար: Նման հրապարակումներից են, մասնավորապես, էլեկտրոնային հանրագիտարանները, որոնցում աղբյուրաբանական «մասնագետների» գիտական կեղծարարությունների քիթախ են դարձել առաջին հերթին պատմական Հայաստանի Արցախ և ՌԻտիք նահանգների (այժմ՝ ԼՂՀ և հարակից տարածքներ) ճարտարապետական հուշարձանները: Նրանց աշխատություններում հստակորեն արտահայտված է քաղաքական պատկերը՝ հուշարձանների «աղվանացումը», այն է՝ «աղբյուրաբանականացումը»:

Որպես հակակշիռ այդ քաղաքականությանը կարելի է, մասնավորապես, հիշատակել Արցախի ճարտարապետությունը անձամբ ուսումնասիրած ֆրանսիացի նշանավոր արվեստաբան Ժ. Մ. Թիերիի հետևյալ կարծիքը. «Արվեստի պատմաբանների համար Ղարաբաղը մնում է որպես շատ առանձնահատուկ մի նահանգ, բայց միևնույն ժամանակ՝ հայկական արվեստի նահանգ»¹:

Աղբյուրաբանական բազմալեզու «գիտական» աշխատություններում և էլեկտրոնային հանրագիտարաններում «Աղբյուրաբանի ճարտարապետութ-

¹ J. M. Thierry. Eglises et Couvents du Karabagh. Antelias, 1991, P. 223.

յուն» հողվածներում փորձ է արվում հայկական ճարտարապետությունից օտարել նրա մի հատվածը, մասնավորապես՝ Գանձասարի վանքը²: Մինչ-դեռ արվեստի և ճարտարապետության պատմության խոշոր մասնագետ Ա. Յակոբսոնը Գանձասարի վանքը անվանում է «13-րդ դարի հայ ճարտարապետության հանրագիտարան»³:

Ադրբեջանցի հեղինակները փորձում են անտեսել նաև շինությունների պատերին դրոշմված տարբեր դարերի շինարարական կամ նվիրատվական հայերեն արձանագրություններն ու կառուցման ժամանակը (Գանձասարի դեպքում՝ 13-րդ դարի առաջին կես, երբ Աղվանքը որպես պետական միավոր վաղուց արդեն գոյություն չուներ): Անտեսվում են ոչ միայն այս տաճարի ու դրա գավիթի հայկական ճարտարապետական ոճը, այլև այն հանգամանքը, որ Արցախի բոլոր կառույցներն ունեն իրենց ոճական գույնատեսքերը Հայաստանի այլ նահանգների ճարտարապետական հուշարձաններում: Այդ հանգամանքն արդեն ապացույց է, որ դրանք կառուցվել են ճարտարապետական նույն ոճով, իսկ գույն և մասնագիտացված շինարարների նույն խմբի կողմից⁴: Ադրբեջանցիների կեղծարարություններին գիտական հիմնավորումով դեռ 20-րդ դարի ութսունական թվականներին հակահարված էր տվել Ա. Յակոբսոնը⁵:

Անտեսվում է այն փաստը, որ ժամանակակիցների վկայությամբ Լեռնային Ղարաբաղի բնիկ բնակչությունը հնում, ինչպես և շինությունների կառուցման ժամանակ ու նաև հետագայում, հայկական էր: Հայագի էր նաև Գանձասարի վանքի կառուցող Հասան Ջալալ իշխանը, ինչը տաճարի վրա եղած բազմաթիվ արձանագրություններից բացի, վկայում է նաև միջնա-

² «...жемчужинами албанского зодчества Гандзасарским и Хотаванским монастырями, а также множествами подобным им памятниками, расположенными на исконно азербайджанской земле, которые именуются фальсификаторами величайшими памятниками армянского зодчества» (տե՛ս *Сабина Гагжиева*. Неповторимость культурной архитектуры Кавказской Албании. «Caucasian Albania» (<http://www.bakililar.az/ca/photos/sabina.html>)).

³ А. Л. Якобсон. Из истории армянского средневекового зодчества (Гандзасарский монастырь XIII в.). «Исследования по истории культуры народов Востока. Сборник в честь академика И. А. Орбели». Москва – Ленинград, 1960, с. 151.

⁴ Տե՛ս *Մ. Հաիրյանի*, Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը: Ե., 1992:

⁵ Տե՛ս А. Л. Якобсон. Гандзасарский монастырь и хачкары: факты и вымыслы. «Պատմա-բանասիրական հանդես», 1984, թիվ 2:

դարյան պատմիչ Կիրակոս Գանձակեցին: Ինչ վերաբերում է Գանձասարին՝ որպես Աղվանից կաթողիկոսների նստավայրի, ապա ադրբեջանցիները շրջանցում են այն փաստը, որ այդ վանքը կառուցվել էր Աղվանից կաթողիկոսարանն այստեղ փոխադրելուց երկու դար առաջ: 18-րդ դարում այն հայ ազատագրական պայքարի կենտրոնն էր:

Ակնհայտ է նաև դարաբաղյան հուշարձանների հնացման միտումը, ինչը, ըստ հեղինակների, կոյուրացնի դրանց «աղվանացումը»: Այսպես. Խութավանքի բազիլիկան (գիտական գրականության մեջ հայտնի է որպես Դադիվանք), որն ինչպես իր ճարտարապետական առանձնահատկություններով, հարդարանքով, այնպես էլ արձանագրություններով պատկանում է 13-րդ դարին, ներկայացվում է որպես 6-րդ դարի հուշարձան:

Կան կեղծարարության ու աղավաղումների նաև այլ օրինակներ: Որպես աղվանական է ներկայացված հեղինակների բնորոշմամբ «Խութավանքի Արգու-խաթունի կենտրոնական եկեղեցին»⁶: Մինչդեռ տաճարի կառուցող իշխանուհի Արգու-խաթունը, ըստ պատմիչ Կիրակոս Գանձակեցու, Մահկանաբերոյի իշխան, հայազգի Սադուն Արծրունու հարազատ քույրն էր⁷:

Ադրբեջանական հողվածներում հիշատակվող՝ Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Խաթրավանքը 1143 թ. ավերվել է սելջուկ թուրքերի կողմից և կրկին կառուցվել է 1204 թ. հոգևոր ականավոր գործիչ հայազգի Հովհաննես Խաչենեցու կողմից, որը 12-րդ դարի վերջին Սանահինի, ապա՝ Հաղպատի վանքերի վանահայրն էր: Ըստ Խաթրավանքի եկեղեցու շինարարական արձանագրության՝ Հովհաննեսը Խաչենի իշխանության ամբողջ տարածքից այնտեղ է հավաքել հին ձեռագրեր և խաչքարեր՝ Խաթրավանքը դարձնելով միջնադարյան Հայաստանի եզակի թանգարան ու գրարարան:

Ադրբեջանական ճարտարապետությանն է վերագրվում նաև 15-րդ դարում Նախիջևանի մոտ գտնվող Հայկական Ջուղա քաղաքի վաճառականների կառուցած քարավանատունը⁸:

⁶ Տես *Ս. Գաջիև*, Նշ. աշխ.:

⁷ Տես *Կիրակոս Գանձակեցի*, Պատմություն հայոց: Ե., 1961:

⁸ Տես «Архитектура: Караван-сарай около Джульфы» (<http://www.azeri.ws/culture/architecture.shtml>):

Ճարտարապետության ոլորտում աղբբեջանական կեղծարարությունները չեն սահմանափակվում միայն հին ու միջին դարերով, այլև ներառում են նոր ու նորագույն շրջանի ճարտարապետությունը: Այսպես. «Ճարտարապետության զարգացումը 19-րդ դարում»⁹ և «աղբբեջանական ճարտարապետության զարգացումը 20-րդ դարում» կայքէջերում չեն հիշատակվում հայ ճարտարապետները, որոնք գրեթե վճռական դեր են ունեցել Աղբբեջանի մայրաքաղաք Բաքվի 19-20-րդ դարերի ճարտարապետական տեսքի ձևավորման գործում: Նշված է միայն Ն. Գ. Բանի անունը (հավանաբար՝ ոչ հայկական ազգանվան շնորհիվ)¹⁰: Մինչդեռ Հ. Խիզանյանը 19-րդ դարում Բաքվում կառուցել է առևտրական ընկերությունների շենքեր, նավթարդյունահանման վարչության, մանկական հիվանդանոցի շենքերը և այլն: Վ. Մարկիսովը (Մարգսյան) բորսային հրապարակի կառուցապատման հեղինակն է, կառուցել է Բասինի փողոցում գտնվող հիվանդանոցը, Կոմպոզիտորների միության և Երկաթուղային վարչության շենքերը, մի շարք այլ վարչական ու բնակելի շենքեր: Ճարտարապետ Գ. Տեր-Միքելովը (Տեր-Միքելյան) Բաքվում կառուցել է Պետական բանկի, Ֆիզիոթերապևտիկ ինստիտուտի, Աղբբեջանի ֆիլիարմոնիայի, Աղբբեջանական մանկավարժական ինստիտուտի, «Մանկական աշխարհ» հանրախանութի շենքերը, բազում բնակելի շենքեր և այլն: Ֆ. Աղայանը Բաքվի բնակելի թաղամասերի կառուցապատման հեղինակն է:

20-րդ դարի երկրորդ կեսին Բաքվում արդյունավետ կերպով աշխատել են ճարտարապետներ Մ. Թովմասյանը, Ա. Ահարոնովը և ուրիշներ: Մ. Թովմասյանը Բաքվի հերթական գլխավոր հատակագծի, Ծովային կայարանի, Կանաչ թատրոնի, մետրոպոլիտենի «26 կոմիսարներ» կայարանի, «Բաք-գիպրոգոր» ինստիտուտի, ԱղբբՄՍՀ Նախարարների խորհրդի ընդունելությունների տան և հյուրանոցի, Բաքվի միկրոշրջանների, բնակելի թաղամասերի և այլ նախագծերի հեղինակն է:

Պատմամշակութային ժառանգության, այդ թվում՝ ճարտարապետական հուշարձանների պատմության ու պատկանելության, աղբբեջանական նենգափոխումն ուղեկցվում է միաժամանակ դրանց մի մասի ոչնչացմամբ:

⁹ «Развитие архитектуры в XIX веке». «Министерство культуры и туризма Азербайджанской Республики» (<http://www.mct.gov.az/?/ru/azculture/view/92/&PHPSESSID=d3a2b10d48bdb58adbeae3e9b1d10de4>).

¹⁰ Տես «Развитие азербайджанской архитектуры в XX веке». «КСАМ» (<http://www.ksam.org/index.php?mtype=news&mid=124>):

Բացի Հին Չուդայի խաչքարերի ոչնչացման փաստից, հայտնի է նաև Նախիջևանի ԻՀ տարածքում հայկական ճարտարապետական բոլոր հուշարձանների ոչնչացման փաստը: 2006 թ. Նախիջևանի ԻՀ-ում «երկարատև հետազոտություններից» հետո աղբբեջանական ԳԱ-ի կողմից հայտարարվել է, որ այդ տարածքում չկա «հայկական ներկայության որևէ հետք»: Այնինչ, համենայն դեպս՝ մինչև 1986 թ., Նախիջևանի ԻՀ տարածքում կանգուն են եղել հայկական քսանութ վանք և քառասունինը եկեղեցի¹¹: Հայկական մշակույթի նկատմամբ նման վերաբերմունքը չի կարելի բացատրել կրոնական գործոնով, քանի որ մշակութային այս եղեռնի միանգամայն հակադիր պատկեր է Իրանի Իսլամական Հանրապետությունում: Այստեղ ոչ միայն պահպանվում, այլև պետականորեն վերանորոգվում են հայկական հուշարձանները, և նույնիսկ Իրանի իշխանությունների ներկայացմամբ հայկական երկու վանական համալիրները՝ Սուրբ Ստեփանոս և Թադեի վանքերը, ընդգրկվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցանկում:

¹¹ Տես Ա. Այվազյան, Նախիջևանի ԻՍՍՀ հայկական հուշարձանները (համահավաք ցուցակ), Ե., 1986:

ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱՐՎԵՍՏԻ ԱՂԱՎԱՂՈՒՄԸ
ԹՈՒՐԹ-ԱԴԻԲԵԶԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ*

Լ. Վ. ԵՐԼԶԱԿՅԱՆ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի առաջարար գիտաշխատող



Շուրջ մեկ դար է, ինչ թուրք և ադրբեջանցի գիտնականները, քաղաքական գործիչներն ու երաժշտագետները համատեղ մշակում են թուրքական մշակույթի ձևավորման պատմական հիմքերը, ծագումնաբանությունը, զարգացման ուղու հարացույցները: Տարածաշրջանի հիմնական մշակութային իրողությունների սեփականացման միջոցով փորձ է արվում հիմնավորելու Մերձավոր և Միջին Արևելքի մշակութային ոլորտում թյուրքական մշակույթի հեգեմոն լինելու հավակնությունները: Պատմական էքսկուրսներում նշվում են Արևելքի ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտության կազմավորման և զարգացման խնդրում վճռորոշ դեր խաղացած մշակութային աղբյուրները՝ հունական, բյուզանդական, իրանական, արաբական: Թուրք-ադրբեջանական որևէ ուսումնասիրության մեջ հայկական ժողովրդապրոֆեսիոնալ արվեստը չի արժանացել համապատասխան ուշադրության՝ իբրև մերձավորարևելյան մշակույթի հավասարազոր անդամի, չի շոշափվել հայ-թուրքական կամ հայ-ադրբեջանական երաժշտական կապերի խնդիրը:

Մահմեդական աշխարհին բնորոշ երևույթների թուրք-ադրբեջանական մատուցման հակադիտական փաստարկներն ու սկզբունքները պարբերաբար վրդովմունքի ալիքներ են առաջացնում թե՛ պարսիկ, թե՛ այլազգի գիտնականների մոտ, երբեմն՝ մեծ վերապահումներով արդարացվելով մահմեդական միասնական մշակույթի դրույթով, որի ձևակերպումը տվել է 15-րդ դարի բանաստեղծ Ալիշեր Նավոյին. արաբերենը արմատն է, պարսկերենը՝ շաքարը, հնդկերենը աղն է, թուրքերենը՝ հունարը: Այս պատկերավոր դրույթը արտացոլում է ինչպես մահմեդական մշակույթի բազմա-

* Սույն հոդվածում փորձ է արվում պրակի թեմատիկան ուսումնասիրել ավելի լայն թուրք-թյուրքական-համաարևելյան մշակութային փոխազդեցությունների համատեքստում:

Հեղինակի նյութը հնարավորություն է տալիս գնահատելու թուրք-ադրբեջանական տանդեմի կողմից պատմամշակութային խեղաթյուրումների վրա հիմնվող ցանցապետական կառուցումների «քաղաքակրթական» ռեսուրսը:

Տպագրվում է առանց փոփոխությունների:—*Խմբ.*:

չերտ էությունը, որ ձևավորվել է հնդիրանական և արաբական գեղարվեստական հզոր ավանդույթների ազդեցության տակ, այնպես էլ դրա բաղադրիչներից յուրաքանչյուրի ինքնատիպությունը: Այս ընդհանրական հիմքն է շահարկվում թուրք և ադրբեջանցի գիտնականների կողմից:

Թուրքական դասական-ավանդական երաժշտության ակունքների կնճռոտ խնդիրը հակամետ կարծիքներ է բանաձևել: Չնայած Օսմանյան կայսրության ժառանգությունը բազմաշերտ էր, տարբեր մշակույթների կոնգլումերատ, գաղափարախոսական մակարդակում չէին խրախուսվում էթնիկ-ռասայական ու ցեղակրոնական դատաստումները: Կայսրության փլուզման և հանրապետության ստեղծման միջև ընկած ժամանակափուլում, թուրքական նոր ազգային ինքնության որոնումների գործընթացում ավանդական երաժշտության՝ մականների և հարակից ժանրերի արմատներն ու գեղագիտական արժեքը սկսեցին քննարկվել թուրքիզմի գաղափարախոսության դիրքերից՝ խնդրի ըմբռնումը դարձնելով ազգային մշակութային քաղաքականության անկյունաքարերից մեկը: Բոլոր բևեռացված տեսակետների բուն էությունն ու ընդհանուր կարգախոսը թուրքական երաժշտությունը Մերձավոր և Միջին Արևելքի հնագույն մշակույթ հայտարարելն էր:

Օսմանյան երաժշտության քննադատությունը թուրքական ազգային մշակույթի մաքրման ծրագրի մասն էր: Հասարակագետ Ջիյա Գյոքալպն իր «Թուրքիզմի սկզբունքները» աշխատության մեջ փորձում է հիմնավորել թուրքական երաժշտության «թրթությունը»: Ըստ նրա՝ թուրքական դասական-ավանդական երաժշտությունը թուրքերինը չէ, այլ հույներինը, բյուզանդացիներինը, պարսիկներինն ու արաբներինն է և զուրկ է ազգային նկարագրից: Մահմեդական ազգերը չեն կարողացել բացահայտել իրենց երաժշտության ինքնատիպությունն այնպես, ինչպես դա արել են ճարտարապետության մեջ: Հիմնական պատճառն այն է, որ Ալ-Ֆարաբին, փոխառնելով բյուզանդական երաժշտական տեխնիկան, այն տեղադրել է արաբականի մեջ: Այդ երաժշտությունը թափանցել է արաբական, պարսկական ու թուրքական բարձր խավերի շրջանները, սակայն չի տարածվել ցածր խավերի մեջ, որոնք ստեղծել են ազգային ժողովրդական երաժշտությունը՝ շարունակելով հեռավորարևելյան քաղաքակրթության «տեխնիկան»: «Մեկ այլ կարևոր պատճառով մենք այն իսլամական չենք կարող անվանել, քանի որ ոչ միայն մահմեդական ժողովուրդներն են այն օգտագործում, այլև օրթոդոքս ազգերը՝ հայերն ու հրեաները, իրենց հոգևոր արարողակարգում»¹: Այսպես. պարզունակ և հակագիտական բացատրութ-

¹ *Ziya Gökalp. The Principles of Turkism. Leiden, 1968, P. 426.*

յուններով, հայ հոգևոր երաժշտարվեստը, ի միջի այլոց, հիշատակվում է իբրև «համաարևելյան» երաժշտության, մասնավորապես, մուղամաթի արվեստի հայացված դրսևորում, ժխտվում է դրա ինքնատիպությունն ու ինքնուրույնությունը:

«Whose in Turkish Music?» գրքում հասարակագետ Սադեթթին Արելը ապացուցում է, որ ոչ թե թուրքական երաժշտությունն է պարտք արաբականին, բյուզանդականին կամ հունականին (նկատենք, որ 18-րդ դարից սկսած իրանականը արդեն չհիշատակվող տարր էր), այլ ընդհակառակը՝ արաբական ու հունական հոգևոր-արարողական երաժշտությունն է սերում թուրքականից, որ օղուզ թուրքերը իրենց հետ Անատոլիա էին բերել Միջին Ասիայից²: Հենց այս տեսակետն էր ամրապնդել իր հետազոտություններում թուրքական կառավարության հրավերով 1936 թ. Թուրքիա այցելած անվանի կոմպոզիտոր, ֆոլկլորիստ Բելա Բարտոկը, որը եվրոպացի հեղինակների կարծիքով, «հաջողացրել էր» հայտնաբերել թուրքական և միջինասիական ժողովրդական երաժշտության շարունակականության բարձր աստիճանը ժամանակակից հունգարական ֆոլկլորի բազմաթիվ օրինակներում: Բարտոկի այս «հայտնագործությունը» հետագայում օգտագործվեց իբրև փաստարկ՝ օսմանյան դասական-ավանդական և հանրապետության ազգային ժողովրդական երաժշտության արմատական ընդհանրությունը հաստատելու և իրենց ձեռքով ստեղծած օսմանականի (կայսերականի) և բնիկ թուրքականի հակադրության գաղափարական-մշակութային անջրպետները հարթելու համար:

Օսմանյան դասական երաժշտարվեստը համարվում էր բյուզանդական և հին մահմեդական քաղաքակրթությունների ժառանգորդը, իսկ թուրքական ժողովրդական երաժշտությունը բնիկ ազգային էր, դրանից էին սերում մյուս արևելյան մշակույթները, և դա էր ազգային ինքնության վկայականը:

Ավանդական երաժշտության թուրքացումը ընթանում էր դրա հեղինակների թրքացմամբ. իսլամական աշխարհի գրեթե բոլոր երաժիշտ-գիտնականները՝ Ալ Ֆարաբին, Իբն Սինան, Աբդուլբադի Մարադին, Ուրմավին թուրք էին հայտարարվում: Այս մեծ երաժիշտներին վերագրվող երաժշտական կտավները՝ որոշ փեշրաֆներ և սեմայիներ (Աջեմ, Ռաստ, Իսֆահան), խորհրդավոր կերպով հայտնվել են Իսմայիլ Հաքիմ Բեյի 20-րդ դարի առաջին տասնամյակի նոտային ժողովածուում: Իսկ մոլդավացի արքա-

² Stu *W. Feldman*. Cultural Authority and Authenticity in the Turkish Repertoire. «Asian Music», 1990, vol. 22, N 1, P. 101:

յազն Գ. Կանտենիրի (Կանտենիրօղլի՝ Օսմանյան ամենանշանակալից կոմպոզիտոր, 1714 թ.) հավաքածուի մեջ տեղ է գտել Պլատոնին վերագրվող և նրա անվամբ նոտագրված մական Նիկրիզը: Պլատոնը մահմեդական ժողովուրդների մոտ հայտնի է իբրև թամբուրի ստեղծող և շատ թե քիչ կրթված ժողովրդապրոֆեսիոնալ երաժիշտները (Թուրքիայում, ՌԻգ-բեկատանում) մեծ ոգևորությամբ լեզենդներ են պատմում նրա արարումների մասին: Երաժշտության ծագման և հույն փիլիսոփաներին վերաբերող առասպելական շերտերը, որոնք առկա են Արևելքի երաժշտատեսական տրակտատներում, թերևս թուրք գիտնականներին առիթ են տվել թամբուրի Իսակի կամ թամբուրի Արոֆիհի օրինակով, թամբուրի Պլատոնին (Էֆլաթուն) ներգրավել օսմանյան երկացանկի հեղինակավոր երաժիշտների շարքը: Այդ նույն երկացանկում ներառված են մականներ, որոնց հեղինակը առանց որևէ գոնե ձևական, ապացույցի, Ֆարաբին է: Աբդուլբադի (Խոջա Աբդ-ալ-Քադիր) Մարաղիի կապակցությամբ ավելորդ չէ հիշեցնել, որ նա իրանական Ադրբեջանից էր, գրում էր պարսկերեն, և նրան վերագրվող 30 երաժշտական «քար» կոչվող ձևերը 15-րդ դարում գոյություն չեն ունեցել: Այնուամենայնիվ, և՛ Կանտենիրօղլին և՛ Չարիզ Ֆոնտոնը (1751 թ.) և, բնականաբար, թուրք երաժիշտներն ու գիտնականները օսմանյան երաժշտության հիմնադիր համարում են Աբդուլբադի (Խոջա Աբդ-ալ-Քադիր) Մարաղիին³:

Հեռավոր անցյալի հեղինակներին հիմնադիր կամ թուրք հայտարարելն ավելի դյուրին է, քան 19–20-րդ դարերի ավանդական երաժշտության՝ մականների, փեշրաֆների ու սեմայիների այլազգի հեղինակներին, ուստի և օսմանյան մշակույթի ոչ թուրք և ոչ մահմեդական հեղինակների անուններն ավելորդ էր դառնում հիշատակել թուրքական երաժշտության զարգացման ներկայացուցչական շղթայում:

Ըստ ամենայնի՝ թուրքական հայտարարվածը Արևելքի դասական-ավանդական երաժշտության կազմավորված ու ձևավորված հեղինակային երկացանկ էր՝ ստեղծված կայսրության տարածքում բնակվող տարբեր ազգերի ներկայացուցիչների (այդ թվում և թուրքերի) գործունեության շնորհիվ: Այդ իսկ պատճառով, ընդհուպ մինչև 20-րդ դարի սկիզբը երաժիշտները խոսում էին «արևելյան արվեստի» մասին: Այդ երկացանկի ազգային-հեղինակային հիմքն էր մտահոգում և անվերջ վեճերի առիթ տալիս թուրք քաղաքական գործիչներին:

³ *Stu Ch. Fonton. Essai sur la Musique orientale comparee a la misique europeene. «Turkish Music Quarterly». Paris, 1988–89:*

Օսմանյանի և թուրքականի քաղաքական գաղափարական հակամարտության համատեքստում հայ երաժշտական մշակույթի ազդեցության կամ փոխազդեցության հարցի արծարծումը թերևս միանտոթյուն է թվում, մինչդեռ հայկական, թուրքական և աղբյուրական նյութերի համեմատական քննությունը ինքնին առաջադրում է խնդիրը:

Փաստագրական նյութը հավաստում է հայ երաժիշտների՝ մուղամաթա-հար-գործիքահարների, աշուղների և երաժիշտ-տեսաբանների խոշոր ավանդը Իրանի, Թուրքիայի և Անդրկովկասի երաժշտարվեստներում, նրանց հեղինակած և չափանմուշ դարձած մեղեդիների անհեղինակ կեն-ցաղավորումը Արևելքի ժողովրդապրոֆեսիոնալ արվեստում:

Ասվածի ապացույցն են իրանական և աղբյուրական ավանդական երաժշտությանը նվիրված օտարագրի գիտնականների աշխատություն-ներում հաճախ հանդիպող հայկական մեղեդիների ձայնագրությունները՝ «hava Armani» (հավա արմանի) անվան տակ⁴: Նոտային հրատարակույթ-յունների ուսումնասիրության արդյունքում ակնհայտ է դառնում, որ թուրքա-լեզու ժողովրդական երգերի բազմաթիվ ժողովածուներում ընդգրկված *թուրքի* և *շարքի* կոչվող մեղեդիների զգալի մասը հայկական միջնադարյան հոգևոր մեղեդիների, տաղերի, գանձերի՝ թուրքերենի վերածված տարբե-րակներն են:

Ցայտուն օրինակներից են «Vardar Ovasi» (դաշտի մեղեդի)⁵ թյուրքուն, որ Մ. Այրիվանեցու «Սիրտ իմ սասանի» գանձի նմանակն է, իսկ «թարաքյա-մա-գյոզալլամասի» անունը կրող տարբեր մեղեդիներ (հավաներ), Սալաթ-Նովայի երգերի կրկնօրինակներն են, որ հաճախ հնչում են աղբյուրա-նական հեռուստահամերգներում որպես ժողովրդական երգեր:

Նյութի հետազոտությունը վկայում է նաև, որ աշուղական մրցույթի ավանդույթը ձևավորվել ու զարգացել է Արևմտյան Հայաստանի Կարս և Էրզրում նահանգներում և, որ պակաս կարևոր չէ, այդ տարածաշրջանում են գրառվել «Քյոռօղլու» ամենահին տարբերակները: Տարածաշրջանի աշուղական արվեստի զարգացման և ձևավորման գործում (հատկապես՝ XIX–XX դդ.) հետազոտողներն առանձնացնում և մեծապես կարևորում են այնպիսի անուններ, որոնք պարզորոշ կերպով հուշում են նրանց հայ լինելը՝ աշիկ (աշուղ) Վիրանի Անիից, Ջուլալի, Սազայի, Սեյիտունի և այլն:

⁴ Stu Ch. Albright. The Music of Professional Musicians of Northwest Iran (Azerbaijan). Ph. D. thesis, University of Washington, 1976, P. 274:

⁵ Stu «Halk Türküleri». Istanbul, 1929:

Թեև վերոհիշյալ անվանի աշուղների ազգային պատկանելությունը բացահայտորեն չի արձանագրվում, նրանք իրավամբ համարվում են ներկայիս աշուղական երգարվեստի հիմնադիրները, ինչպես Կարսն ու Էրզրումը՝ աշուղական մրցույթի ավանդույթի բնօրրանը:

Թե ինչ ներդրում ունեն հայ երաժիշտները համաարևելյան աշուղական երգարվեստի զարգացման ասպարեզում, կարող ենք պատկերացում կազմել նաև օտարալեզու գրականության մեջ տեղ գտած տեղեկություններից, ինչպես նաև եվրոպացի և թուրք հեղինակների որոշ աշխատություններում ընդգրկված փաստերից: Այսպես. Յ. Էրդեների՝ թուրք աշուղների մրցույթին նվիրված աշխատության մեջ հիշատակված հանրահայտ թուրք աշուղների վկայությամբ նրանք իրենց գիտելիքներն ու արվեստի հիմքն ամրապնդել ու զարգացրել են «ռուսական և իրանական Աղբբեջանում», շրջագայել ու շփվել են Թիֆլիսի, Գյանջայի, Գյումրու և Ռևանի աշուղների հետ: Աշուղ Շերիֆը հատկապես կարևորում է Էրիվանի (Երևան) ռադիոյի երաժշտական հեռարձակումները, իր հարցազրույցի ընթացքում կատարելով մի շարք աշուղական մեղեդիներ, նա ընդգծում է, որ այդ բոլոր երգերը իրենց մոտ են եկել Էրիվանից⁶: Իսկ աղբբեջանական աշուղների երկացանկում ընդգրկված են «Իռեվանի», «Իռեվան շերիլիսի», «Գյումրի Գերայլիսի» և այլ հայկական անուններ կրող մեղեդիներ, որոնք սխալ կամ միտումնավոր թերի են մեկնաբանվում: Աղբբեջանցի երաժշտագետ Է. Էրդարովան «Իռեվան Գերայլիսին» հիշատակում է նմանատիպ ժանրային ձևերի («Իրան Գերայլիսի», «Նախչիվան Գերայլիսին», «Ղարաբաղ Գերայլիսի», «Քյուրդի Գերայլիսի») շարքում՝ նշելով, որ դրանց անունները պայմանավորված են տվյալ տեղանունների կատարողական ավանդույթներով, սակայն Իռեվանի, Գյումրու կամ Քյավառի մեղեդիների պարագայում երբևէ չի նշվում դրանց առնչությունը հայ երաժշտարվեստին⁷:

«Քյուռոլում» ասքի ավանդական մեղեդիների և այլ արևելյան երգարվեստների ոճական-ինտոնացիոն տարրերի քննությունից հետևում է, որ հայերեն երգերն այնքան ճանաչված են եղել Անդրկովկասում ու Թուրքիայում, որ նույնիսկ ժամանակի ու սոցիալ-քաղաքական իրավիճակի փոփոխության պայմաններում, աղավաղված ու վերանվանված շարունակել են գոյատևել ժողովրդապրոֆեսիոնալ արվեստի երկացանկում:

⁶ Stü Y. *Erdener*. The Song Contests of the Turkish Minstrels. New York & London, 1995, P. 32 (Յիլդիրեյ Էրդեները ԱՄՆ-ում կրթություն ստացած էրմեղեդագետ է՝ անտեղյակ հիշատակած քաղաքների աշխարհագրությունից):

⁷ Stü Յ. *Эльдарова*. Искусство ашыгов Азербайджана. Баку, 1984:

Նման տեքստերով առանձնապես հագեցած է ադրբեջանցի երաժշտագետ Տ. Մամեդովի աշխատությունը, որտեղ ընդգրկված են Քրոռոլլու ասքին պատկանող թուրքական և ադրբեջանական մի շարք երգեր⁸: Սակայն հիշյալ հանգամանքը, թերևս, անփութորեն վրիպել է հեղինակի ուշադրությունից, թեև հրատարակության առաջաբանում նշվում է, որ ձայնագրություններն արվել են նաև Հայաստանի տարածքում:

Հատկապես Քրոռոլլուն և նրա անբաժան «ընկերոջը»՝ Ղուաթին վերաբերող տեքստերն են ներծծված ընդհանուր արևելյան բացականչություններով և հայերեն բառերով: Այս տեքստերում են նվագարկվում քնարական-երգային բնույթի ռիթմահնարանացիոն ձևայինները, որոնք մեծ ընդհանրություն ունեն հայկական օրինակների, հատկապես՝ Կոմիտասի գրառած «Քրոռոլլու» հանրահայտ նմուշի հետ, որի աննախադեպ ժողովրդականության ապացույցն են հայ կոմպոզիտորների՝ Ա. Խաչատրյանի, Մ. Մազմանյանի մշակումները⁹:

Աղավաղված հայերենով տեքստերի հայտնաբերումը թուրք և ադրբեջանցի աշուղների երկացանկում փաստացի հաստատում են հայ աշուղների երաժշտական ներդրումը մերձավորարևելյան դասական մեղեդիների ստեղծման ու կանոնականացման գործընթացում:

XVIII–XX դդ. գրի առնված բազմաթիվ թուրքական երգերի, այսպես կոչված «շարքիների» հեղինակները հայեր են եղել: Այս բնագավառում իրենց լուսն են ներդրել Համբարձում Լիմնջյանը, Նիկողոս Թաշչյանը, Հակոբոս Այվազյանը և շատ ու շատ նշանավոր երաժիշտներ, որոնք հեղինակելով, նոտագրելով և հրապարակելով Արևելքի մոնոդիկ երաժշտության նմուշները, գործնականում լուծել են ավանդական երկացանկի հաստատագրման և պահպանման խնդիրը: Այսօր անժխտելի փաստ է թուրքական երաժշտության հետազոտողների համար, որ «համաարևելյան գործիքային երկացանկը» մեզ է հասել կայսրության առաջատար երաժիշտ թամբուրի Իսակի, նրա աշակերտ Օսկիյանի միջոցով և Համբարձում Լիմնջյանի նոտագրության համակարգի տարածման շնորհիվ⁹:

⁸ Տես *T. Мамедов. Песни Кероглы. Баку, 1984*:

^{*} XIX–XX դարերում հայ անվանի երաժշտագետներ Ա. Բրուսյանի, Սպ. Մելիքյանի, Բ. Քուչնարյանի և այլոց գրառած նյութերը վկայում են հիշյալ երգերի համատարած կենցաղավարումը Հայաստանում:

⁹ Տես *ՌԲ. Ֆելդման, Նշ. աշխ., էջ 76–77*:

Աղբրեջանցի երաժշտագետների գրքերում և հոդվածներում խոսք անգամ չկա հայ երաժիշտների գործունեության մասին, առիթ չի տրվում հերքելու կամ ճշգրտելու նյութի հավաստի լինելը: Հայկական գործոնի լիակատար անտեսման արդյունքում հայ անվանի գործիքահարմեր Սաշա Օգանե-զաշվիլին (Ալեքսանդր Օհանյան), Բալա Մելիքյանը, Լևոն Կարախանը, աշուղ Ավագը և այլք հայտնվում են աղբրեջանական երաժիշտների ցուցակներում: Խեղաթյուրելով հայկական աղբյուրներում ամփոփված նյութը, մասնավորապես, Խորենացու, Բուզանդի, Եղիշեի հաղորդած տեղեկությունները հայոց հինավուրց գուսանական երգ-երաժշտության մասին¹⁰, խորհրդային ժամանակաշրջանի աղբրեջանցի երաժշտագետները զբաղվում էին բացահայտ յուրացման քաղաքականությամբ: Մասնավորապես, Է. Աբասովան, առանց որևէ գիտական հիմնավորման, թուրք օգանների և աղբրեջանական աշուղների արվեստին վերագրում է դարավոր պատմություն՝ հասցնելով V դար: Մինչդեռ հայտնի թուրքագետ Վ. Գորդլևսկին «օգանների»՝ իբրև երգիչ-դաստանչիների հատուկ խավի առկայությունը սելջուկյան պալատական շրջաններում համարում է հայերից փոխառած երևույթ¹¹:

1906 թ. Փարիզում տպագրված Ա. Չոպանյանի՝ «Les Trouvers Armenien» ժողովածուի կապակցությամբ թուրք բանասեր Ֆ. Քյոփրյուլուի գրած «Թուրք գրականության ազդեցությունը հայ գրականության վրա» գրախոսականի սխալ հարցադրումները նույնպես հերքվել են Վ. Գորդլևսկու կողմից. «В этюде тенденциозном, но богатом фактическим материалом Кюпрюлю-заде ... пытается доказать, что современный институт народных певцов-ашугов заимствован армянами у турок. Однако небольшая справка из истории наводит на обратное заключение... Гусаны украшали двор армянских Аршакидов, когда армянское царство — «Великая Армения» пало, гусаны ушли к сельджукидам, покровителям искусств, а потом сохранились у османских беев в Анатолии»¹².

Աբասովան, մեծարելով աղբրեջանցի թառահար Սաղիխջանին իբրև նվագարանի ռեֆորմատորի, հանրաճանաչ քամանչահար Սաշա Օգանե-զաշվիլուն հպանցիկ հիշատակում է միայն որպես 20-րդ դարասկզբին

¹⁰ Տես *Nigoghos G. Tahmizyan. Gusan Art in Historic Armenia. «Journal of the Society for Armenian Studies», 2000, Vol. 11, PP. 101–107:*

¹¹ Տես *В. Гордлевский. Происхождение османского слова «узан». М., 1930:*

¹² *В. Гордлевский. Избранные сочинения, т. 3. М., 1963, сс. 264–265:*

Աղբրեջանում և նրա սահմաններից դուրս հայտնի Ջաբբար Կարյագդիի անսամբլի մասնակցի: Չի նշվում ազգությունը, 1921 թ. Բաքվում Արևելյան երաժշտության կոնսերվատորիա հիմնադրելու և դրա առաջին ռեկտորը լինելու փաստը, ինչպես նաև Թիֆլիսում, Երևանում, Շուշիում ու Բաքվում արևելյան երաժշտության մեծ գիտակի, հիրավի, նորարարական, գիտալուսավորչական և կատարողական գործունեությունը¹³: Իր ստեղծագործությամբ մի ամբողջ կատարողական դպրոց ստեղծելով, նա ժողովրդական նվագարանները միասնական հնչյունային կարգով լարելու առաջին գործնական քայլերն է արել և մտցրել մի շարք նորամուծություններ. մասնավորապես՝ քամանչային չորրորդ լար է ավելացրել¹⁴: Իսկ այնպիսի վարպետների շնորհիվ, ինչպիսիք էին Սադիկը, Ջեյնախը, ավագ և կրտսեր Գրիգորները, Բալա Մելիքյանը, Ղարաբաղում ստեղծվեց խոշոր երաժշտական ձևերի՝ մուղամների կատարման տեղական դպրոց¹⁵:

Ասեմք նաև, որ պատմական ժառանգության թուրքացման քաղաքականությունը չկասեցրեց հայ երաժիշտների գործունեությունը Թուրքիայում: Էթնոերաժշտագիտական հրապարակումներում երբեմն առկայծում են հայ երաժիշտների անուններն իբրև թուրքական փոկալ-գործիքային ցիկլիկ ստեղծագործությունների՝ *ֆասիլների և շարքիների* հեղինակների՝ մեծապես ներշնչված արաբական, գնչուական և ռումինական երաժշտարվեստով: 20-րդ դարի կեսերին ձևավորված այս նոր երաժշտակատարողական ավանդույթի հիմքերում, որը «ռաբիսի» դասական տարբերակներից է, դարձյալ տեսնում ենք հայ երաժիշտների ներդրումը՝ անկախ երևույթի գեղարվեստական արժեքից ու հասարակական տարբեր շերտերում ձևավորված ընկալումներից:

Չավեշտորեն, կայսրության անկմանը զուգահեռ նրա երաժշտական մշակույթը հարձակումների ենթարկվեց իր «օտար» էության և գեղագիտության պատճառով: Սակայն պարադոքսալն այն է, որ այդ նույն շրջանում Մերձավոր Արևելքի մյուս երկրներում՝ Հունաստանում, Եգիպտոսում, Հայաստանում, արևելյան դասական-ավանդական երաժշտության զարգացած ժանրերը՝ մուղամները, սեմայիները, շարքիները քննադատվում և մերժվում էին իբրև թուրքական երաժշտագեղագիտական ֆենոմեն: Մերժվում էր մի արվեստ, որ ստեղծվել էր հենց իրենց՝ հայերի, հրեաների, հույների և կայսրության այլ հպատակների ջանքերով:

¹³ Տես «Музыкальная Энциклопедия», т. 1, М., 1973, с. 66:

¹⁴ Տես Գ. Գևորգյան, Սաշա Օզանեզաշվիլի: Ե., 1973, էջ 12:

¹⁵ Տես В. Корганов. Кавказская музыка (Сборник статей). Тифлис, 1908, с. 28:

Հիշեցնենք, որ հայ իրականության մեջ անցյալում ձևավորվել էր նաև մի հասարակական պատկերացում, համաձայն որի՝ այդ ժամրերը առավել-լապես պարսկա-թուրքական նկարագիր ունեն և անհարիր են ազգային մշակույթին, ազգի ինքնությունը հավաստող գեղագիտական ու կրոնամշակութային խորհրդանիշներին: Այսօրինակ հարուստ երաժշտական ավանդույթներ ունեցող բնագավառի նկատմամբ եղած անուշադրությունն ու թերագնահատումն իր արմատներն ունի այն տեսություններում, որոնք որակավորել են դրանք իբրև ցածրարժեք ու գռեհիկ, թեև ժողովրդի լայն խավերն իրենց գեղագիտական հաճույքն ստացել են այդ արվեստի միջոցով:

Այս հարցում իր որոշակի դերն է կատարել նաև Կոմիտասի դիրքորոշումը: Թերևս ժամանակի սոցիալ-քաղաքական հանգամանքներով պայմանավորված՝ նրա զգուշավոր մոտեցումը նույնպես խոչընդոտել է բնագավառի ուսումնասիրությանը՝ սկզբնավորելով «օտարված ժամրերի» բնութագրման միմյանց հակադրվող «արևելյան և հայկական» ըմբռնումները: Տարբեր առիթներով Կոմիտասի արտահայտած մտքերն ու տարարժեք գնահատականները բավարար հիմք չեն տալիս հստակեցնելու նրա վերաբերմունքը աշուղական երաժշտարվեստի, հատկապես՝ «պարսկա-տաճկական» ավանդական եղանակների վերաբերյալ: Թեև հայ երաժշտության մեծ երախտավորի գիտական ստեղծագործական տարիներին ազգային աշուղական դպրոցը զարթոնքի շրջանում էր գտնվում, Կոմիտասն իր առջև խնդիր չէր դրել զբաղվել հայ մոնոդիկ երաժշտության տվյալ ճյուղի ուսումնասիրությամբ: Սակայն հայտնի է, որ նա ոչ միայն սիրել ու գնահատել է իր ժամանակակիցների՝ Շիրինի, Ջիվանու և Շերամի արվեստը, այլ նաև ինքն է վարպետորեն կատարել աշուղական երգեր: Կոմիտասի երաժշտաբեմական մտահղացումներին վերաբերող անտիպ նյութերի ուսումնասիրությունից հայտնի է դառնում նաև, որ իր հայրենի Կուտինա քաղաքում գրառած արևելյան-թուրքական կոչվող երկու երգ մտադիր է եղել օգտագործել իբրև աղոթք՝ իր երագած «Վարդանանց հերոսամարտի» երաժշտականացման համար: Այսուհանդերձ, իր հարազատներից ու ազգականներից գրառած երգերը նա անվանել է «արևելյան-թրքական եղանակներ»:

Երաժշտության պատմության առասպելականացման ու «պսևդոգրաֆիկ ավանդույթի» արժանի ժառանգորդ թուրք և ադրբեջանցի գիտնականների տեսակետները տեղ են գտել նաև երաժշտական հանրագիտարաններում ու կենսագրական բառարաններում: Դրանցում բանավոր ավանդույթով փոխանցված ամենահակիրճ երկին էլ տրվում է մտացածին հեղինակի անուն,

որ ըստ էության հակասում է միջնադարյան Արևելքի երաժշտարվեստում ձևավորված կանոնի և հանկարծաբանության հիմքով կամ «նագիրայի» (ռեպլիկ, պատասխան) սկզբունքով ստեղծված հարյուրավոր մուղաներին և փեշրաֆներին: Երաժշտական արվեստի և գիտության թուրքալեզու հանրագիտարաններում, բնականաբար, հայերին տեղ չի հատկացվում:

1934 թ. Աթաթուրքը կոչ արեց անհապաղ ծրագիր մշակել ազգային երաժշտության զարգացման համար. «Եթե թուրքերն իրենց ժողովրդական մեղեդիները ժողովեն, նոտագրեն և մշակեն արևմտյան ոճով, այնպես, ինչպես հունգարներն են անում, ապա մենք տեր կդառնանք ազգային ու եվրոպական երաժշտությանը»: Այդ կոչի արձագանքները հնչեցին թուրքական մշակույթի տարբեր ոլորտներում. գիտահավաքչական և հետազոտական աշխատանքներն իրականացվում էին փառավոր մշակութային ավանդույթներով հայտնի Անատոլիայում, որոնք, ըստ թուրք գիտնականների, ժամանակակից արևմտյան բոլոր քաղաքակրթությունների հիմքն էին¹⁶: Ստամբուլի համալսարանի հրավերով Անատոլիայում աշխատանքներ էր վարում ֆրանսիացի հայտնի բանասեր Ջորջ Դյումենիլը, որի թարգմանիչ-խորհրդական Պ. Բորաթավը հետագայում կազմեց ու հրատարակեց թուրքական հեքիաթների մոտիվային ցուցակը: Գերմանացի տեքստաբան-բանագետ Վ. Էբերհարդը ուսումնասիրում և հրատարակում էր թուրքական էպիկական ասքերը, իսկ կոմպոզիտորներ Պաուլ Հինդեմիտն ու Բեյա Բարտոկը ներգրավված էին երաժշտական մշակույթի հետազոտական աշխատանքներում: Այս քաղաքական-մշակութային եռուղեի համատեքստում հասկանալի է դառնում Բարտոկի վերջին էթնոերաժշտագիտական աշխատանքի երաժշտատեսական ու գաղափարական հիմքը. «Թուրքական ժողովրդական երգեր Փոքր Ասիայից» նոտային հավաքածուն գալիս էր հաստատելու թուրքական երգաստեղծության ինքնատիպության ու վաղեմի ծագման արդեն լայնորեն պրոպագանդված դրույթները¹⁷:

Չայնագրությունները հիմնականում կատարվել են Ադանայի վիլայեթի տարբեր գյուղերում, Սիվաս (Մերաստիա) վիլայեթի Վարթան գյուղում, Ուրֆայում: Ընդհանուր ծանոթացումը երգերի ձայնակարգերի, ժանրային ընդգրկման (նանի, Լարիբի ողբերգեր, պարերգեր, անձրևաբերության երգեր), ռիթմամեղեդային դարձվածքների հետ թույլ է տալիս ընդհուպ

¹⁶ Stü Arzu Öztürkmen. Folklore on Trial: Pertev Naili Boratav and the Denationalization of Turkish Folklore. «Journal of Folklore Research», 2005, Vol. 42, N 2, P. 190:

¹⁷ Stü B. Bartók. Turkish Folk Music from Asia Minor. Princeton, 1976:

առաջադրել դրանց ծագումնաբանական ընդհանրությունը հայ մոնոդիկ երաժշտության տարբեր ժանրերի ու սեռերի հետ:

Ադանայի վիլայեթում, հաճախ իրենց ծննդավայրն ու ծագումը չհիշող բանասացներից ձայնագրված այս պատառիկներին ինքնատիպ ոճն ու գեղարվեստական ավարտվածությունը հարուցել են Բ. Բարտոկի տարակուսանքը: Հաճախ տեքստերի ընդգծված գրական արտահայտություններն ու գործիքային հանկարծաբանության սկզբունքները փորձառու ֆոլկլորագետի ականջին անսովոր են թվացել և չեն տեղավորվել քաղաքակրթությունից կտրված Թուրքիայի հեռավոր գյուղերի կիսագրագետ ու անգրագետ բանասացների պատկերացումների համակարգում, որոնք, չհիշելով, երբեմն էլ չհասկանալով աղավաղված բառերի ծագումն ու իմաստը, փորձում են վերականգնել իրենց նախնիներից լսած երգերը:

Սակայն նշելով տարբեր քոչվոր և նստակյաց ցեղերի ու ազգությունների անունները, որոնց հետ թուրքերը շփվել են դարեր շարունակ, Բարտոկը գեթ մեկ անգամ չի հիշատակում հայերի անունը: Հնարավոր է, որ դա նաև «լուրջ» խմբագրական աշխատանքի արդյունք էր. հիշեցնենք, որ աշխատանքը կատարվել է թուրքական կառավարության պատվերով և կոմպոզիտոր Ադնան Սայգունի՝ ժողովածուի բանաստեղծական տեքստերի թարգմանչի և խորհրդական-դիտորդի անմիջական մասնակցությամբ:

Արևելյան (հունաբյուզանդական, պարսկական, արաբական), արևմտյան ու ժողովրդական երաժշտության ծագման հակամետ ընթրումներով հղկվում էր նոր մշակութային-գաղափարախոսական ծրագիրը: Թուրքական գիտակցությունից օսմանականի դուրս մղելը հրաժարումն էր մի մշակույթից, որը չէր կարողանում պաշտպանել իր ինքնությունը և առաջադրում էր հարգանքի արժանի մեծ անցյալի ստեղծում:

Այլ խոսքերով, բազմաշերտ մշակութային խճանկարը պարզեցվում էր և նրա հիմքում դրվում էր այդ խճանկարի բաղադրիչներից միայն մեկի էթնոմշակութային ստուգաբանությունը: Գիտական շրջանառության մեջ էր դրվում նաև ֆոլկ-խալամի դրույթը, որով ասպացուցվում էր թուրքական հոգևոր երաժշտության *խալաի* կոչվող հիմների ու որոշ մկիթային ժանրերի ժողովրդական ծագումը:

Նոր մշակութային կառույցում «հայկական հարց» գոյություն չուներ: Ազգային կարգախոսներով ու ձևաչափերով կողմնորոշվող պետությունը պատվիրում էր հետազոտություններ՝ կանխավ նախանշված եզրակացու-

յուններով: Պատահական չէր, որ ծրագրի հիմքում դրված էր ազգային մշակույթի ներկայացումը օտար գիտնականների ու երաժիշտների միջոցով, որ այսօր էլ տարածված երևույթ է. Եվրոպային ներկայանալ եվրոպացի հեղինակների աշխատությունների միջոցով:

Ընդհանուր գործընթացի էության ըմբռնումը հնարավորություն է տալիս տեսնելու և բացահայտելու առանձին բաղադրիչների, մասնավորապես՝ երաժշտական մշակույթի նպատակաուղղված վերակառուցումների հիմքերն ու սկզբունքները: Այդ գործընթացն առ այսօր շարունակվում է: Կայսերական բազմադեմ մշակույթի վերածնունդը միադեմ ազգայինի տարածվում էր մշակույթի բոլոր բաղադրիչների վրա: Այս ենթատեքստում երաժշտական մշակույթը նույնպես օտարվում է «համահեղինակներից», խոսք չի գնում նույնիսկ փոխազդեցությունների մասին:

Հայ երաժշտարվեստին ու երաժիշտ-կատարողներին վերաբերող փաստական նյութի առատությունն ու բազմազանությունը թուրք և ադրբեջանցի գիտնականներին այսօր առավել, քան երբևէ, չեն տրամադրում օբյեկտիվ խոսք ասել հայ մշակույթի դերի մասին: Իսկ հայ երաժիշտների ներդրումը թուրքական երաժշտության մեջ շարունակում է մնալ որպես կայսրության հպատակ ժողովրդի բնականոն գործունեություն: Լավագույն դեպքում այն զնահատվում է որպես հայերի կողմից թուրքական, պարսկական և արաբական երաժշտաբանաստեղծական ավանդույթների «սիստեմատիկ ինտերպրետացիա»: Օրինակ, հանրաճանաչ հայ երգահան, բանաստեղծ և գործիքահար Թաթոս Էֆենդին (Tateos Ekserciyan, 1858–1913), որի անունը հիշատակվում է տարաբնույթ հրապարակումներում, նախ և առաջ բնութագրվում է որպես թուրքական երաժշտության մեծ գիտակ և ստեղծագործող¹⁸:

Թուրքերի օրինակով, ադրբեջանական երաժիշտներն ու գիտնականները ցանկացած մտացածին տեսությամբ հիմնավորում են ազգային մշակույթի և ազգի անդրենաձին լինելը¹⁹:

Թուրքական երաժշտության պատմությունից արդեն մեզ ծանոթ «հիմնադիրներն ու Արևելքի բոլոր գիտնական-երաժիշտները», մասնավորապես, Մարադին, ներառված են նաև ադրբեջանական պատմագրության մեջ՝

¹⁸ Stu «Ermeni Bestekarlar» (Armenian Composers). Booklet. Istanbul, 2001, P. 26–29:

¹⁹ Stu *В. Шнирельман*. Войны памяти. Мифы, идентичность и политика в Закавказье. М., 2003, сс. 194–222:

ազգային պատկանելության և երաժշտատեսական ու կատարողական գործունեության տարբերակված մանրամասներով:

Պետական պատվերներով ստեղծված հրապարակումներն ու «գիտական հայտնագործությունները» դժվար է վերափոխել որևէ լուրջ փաստարկով կամ մեկնաբանությամբ²⁰: Սակայն հեշտ է տիրանալ ամտեր մշակույթին:

Եզրակացություններ

Հայ ավանդական երաժշտարվեստի ուսումնասիրությունը հայ երաժշտագիտության առաջնային և կարևոր ոլորտներից է՝ միահյուս ազգային ինքնության և մշակութային քաղաքականության խնդիրներին հայ-թուրքական և հայ-ադրբեջանական հարաբերություններում: Միակողմանի և միտումնավոր սխալ մեկնաբանվող փաստագրական և երաժշտական նյութերի համալիր քննությամբ և հրապարակումներով հնարավոր է ուղիներ հարթել Մերձավոր Արևելքի երաժշտարվեստին նվիրված աշխատություններում հանիրավի լռության մատնված հայկական երաժշտական ավանդույթի պատմական դերի ճանաչման և գնահատման համար:

²⁰ Шу «История Древнего Востока», ч. 1. Под. ред. И. М. Дьяконова. М., 1983, с. 93:

ԱԴԻԲԵՉԱՆՈՒՄ

«ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ»՝ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՆԱԽԱՎԻ ԳՈՐԾԻՔ

*Մ. Ս. ՉՈԼՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու,
Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական
համալսարանի ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մարդու իրավունքների
և ժողովրդավարության ամբիոնի դոցենտ*



Որոշ տեսական նկատառումներ: Հակամարտությունների առաջացումը միշտ էլ բազմաթիվ բարդ գործոնների փոխազդեցության արդյունք է. որևէ հակամարտություն հնարավոր չէ բացատրել պարզունակ բանաձևի միջոցով: Սակայն կան գործոններ, որոնք առկա են գրեթե ցանկացած հակամարտությունում: Դրանցից է ոչ ներառական (էքսկլյուզիվ) կոլեկտիվ հիշողության ձևավորմանն ուղղված քաղաքականությունը:

Ազգամիջյան հակամարտությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշակի էթնիկ խմբի դեմ ուղղված բռնություններին նախորդում է պատմության այնպիսի հայեցակարգի ձևավորումը, որի շրջանակներում այդ էթնիկ խումբը ներկայացվում է իբրև «օտար», «եկվոր», «թշնամի»: Պատմության նման հայեցակարգի ձևավորումը և քարոզչությունն ստեղծում են այնպիսի մթնոլորտ, որում հնարավոր է դառնում որոշակի էթնիկ խմբի հանդեպ բռնության կիրառումը: Միևնույն ժամանակ, որպես կանոն, «պատմական հիշողության» ձևավորումը ծառայում է որպես որոշակի խմբերի համար իշխանությունը գրավելու կամ պահպանելու միջոց՝ զանգվածների դժգոհությունն ուղղելով արտաքին «թշնամու» դեմ, պահանջելով ամբողջ հասարակության լիակատար «հավատարմություն» և ընդդիմախոսության ցանկացած արտահայտություն ճնշելով իբրև «դավաճանություն» և «թշնամական քարոզչություն»: Այս գործընթացները բնորոշ են բազմաթիվ հակամարտությունների, և դարաբաղա-աղբրեջանական հակամարտությունը բացառություն չէ:

Լեռնային Ղարաբաղի հայությունը խորհրդային Ադրբեջանի կազմում գտնվում էր «անցանկալի հյուրի» կարգավիճակում՝ բախվելով խտրականության և ենթարկվելով ճնշումների կյանքի ամենատարբեր ոլորտներում: Այն մթնոլորտը, որում Լեռնային Ղարաբաղի հայերը իրենց զգում էին

որպես «անկոչ հյուրեր», ստեղծվում էր Խորհրդային Ադրբեջանի իշխանությունների նպատակային քաղաքականության միջոցով, որի մասն էր արդի գիտության մեջ ընդունված «հիշողության քաղաքականությունը»:

Ադրբեջանում դեռ Խորհրդային տարիներին ստեղծվում է «պատմական հիշողության» մի այնպիսի հայեցակարգ, որի համաձայն հայերը, մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղի հայերը, ներկայացվում էին կա՛ն իբրև օտար, եկվոր տարր, կա՛ն, իբրև «հայացված» աղվաններ (որոնք նույնացվում էին ադրբեջանցիների հետ): Երկու դեպքն էլ հայերի օգտին չեն: Եթե նրանք «եկվոր են», ապա նրանց կարող է ներկայացվել հեռանալու պահանջ: Եթե նրանք «ձուլված ադրբեջանցիներ» են, ապա տրամաբանական է, որ պետք է հրաժարվեն իրենց հայ ինքնությունից և «վերադառնան» ադրբեջանական արմատներին: Հետխորհրդային տարիներին այդ գաղափարները դարձան Ադրբեջանի իշխանական վերնախավի պաշտոնական գաղափարախոսության բաղադրամաս:

Ադրբեջանում «պատմական հիշողության» հայեցակարգի ձևավորման փուլերը: Տարածաշրջանում հայերի եկվորության հայեցակարգը իր նախնական տեսքով առաջ է եկել դեռ 1918–1920 թթ., երբ Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Ժողովրդավարական Հանրապետության միջև ծագել էին տարածքային խնդիրներ: Հայեցակարգը արտացոլված է այդ շրջանի մի շարք փաստաթղթերում¹: Պատմության հարցերում Խորհրդային Ադրբեջանի վերնախավի քաղաքականությունը 20-րդ դարի կեսերից կառուցվում է հայերի «օտարության» և «եկվորության» գաղափարների վրա: Սկզբում այդ գաղափարները հանդես էին գալիս քողարկված ձևով՝ իբրև պնդումներ, թե Լեռնային Ղարաբաղի հայերը «իրականում» հայացված «աղվաններ» են: Հետագայում այս թեզին ավելացավ այն տեսությունը, որ հայերը եկվոր են՝ իբրև ռուսական իշխանությունների նենգ քաղաքականության հետևանքով Լեռնային Ղարաբաղ են տեղափոխվել Իրանից և Թուրքիայից:

Հարկ է նշել, որ պատմությունը ոչ միշտ է ծառայել Ադրբեջանում հայերին իբրև եկվոր ներկայացնելու նպատակին: 1930-ական թվականներին փորձ էր արվել գտնելու «հիշողության քաղաքականության» որոշակի փոխզիջու-

¹ Տես, օրինակ, *В. А. Шнирельман. Войны памяти: мифы, идентичность и политика в Закавказье. М., 2003, сс. 120–122: Տես նաև՝ А. Щепотьев. О спорных кавказских территориях, на которые имеют права самоопределившиеся азербайджанские тюрки. «Известия АН АзССР» (Серия «История, философия и право»), 1990, № 2:*

մային տարբերակ, որը, աղբրեջանցիներին իբրև բնիկ ներկայացնելով հանդերձ, ուղղված չէր լինի այլ էթնիկ խմբերի դեմ: Այսպես. այդ շրջանի առանձին աղբրեջանցի հեղինակներ նշում էին, որ Աղբրեջանի տարածքում ապրող թյուրքերը և հայերը հավասարապես բնիկ (ավտոխտոն) են և ընդհանուր մշակույթի կրողներ, հետևաբար նրանք պետք է ապրեն բարեկամության և փոխադարձ հարգանքի պայմաններում²: Սակայն այս մոտեցումները, որոնք ընդհանուր առմամբ տեղավորվում էին խորհրդային «ժողովուրդների բարեկամության» պաշտոնական հայեցակարգի շրջանակներում, երկարատև կյանք չունեցան:

Աղբրեջանական պատմագրության մեջ աղբրեջանցիներին որպես աղվանների ժառանգորդներ ներկայացնող հայեցակարգը, որը առաջ է քաշել Ջ. Յամպոլսկին³, հետագայում զարգացրել է Ջիյա Բունիաթովը: Նրա պնդմամբ՝ Աղվանքը, որն ինքը համարում էր «աղբրեջանական» պետական կազմավորում, ձգվում էր Սևանա լճից մինչև Կասպից ծով, այսինքն՝ ընդգրկում էր ոչ միայն Լեռնային Ղարաբաղը, այլև Հայկական ԽՍՀ մի զգալի մասը⁴: «Աղվաններն» ու աղբրեջանցիները «ըստ էության նույն ժողովուրդն են»: Այսպիսով՝ Բունիաթովը աղվաններին նույնացնում է թյուրքախոս և մահմեդական աղբրեջանցիների հետ, թեև նրանք խոսում էին «աղվաներեն» և քրիստոնյա էին: Ըստ Բունիաթովի՝ աղվանները դարերով ենթարկվել են հայերի ճնշումների և ուժացման քաղաքականության, որի զագաթնակետն այն էր, որ հայկական եկեղեցին արաբական խալիֆայության աջակցությամբ ոչնչացրել է բոլոր աղվանական գրական հուշարձանները, ընդ որում, ոչնչացվելուց առաջ դրանք թարգմանվել են հայերեն:

² Տես Վ. Շնիրհիման, Նշ. աշխ., էջ 129: Տես նաև՝ *A. Алекперов, A. Варпанетов. Задачи этнографии в Азербайджане. «Советская этнография», 1932, № 5/6:*

³ Տես, օրինակ, *З. И. Ямпольский. Две заметки к трактовке Страбонова текста об азербайджанской Албании. «Известия Аз ФАНа СССР», 1942 № 7:*

⁴ Տես *З. М. Бунятов. Азербайджан в VII-IX вв. Баку, 1965: Բունիաթովի տեսությունների քննադատական վերլուծությունը տես՝ A. Мнацаканян. О литературе Кавказской Албании. Е., 1969; S. Astourian. In Search of Their Forefathers: National Identity and the Historiography and Politics of Armenian and Azerbaijani Ethnogeneses. «Nationalism and History: the Politics of Nation-Building in Post-Soviet Armenia, Azerbaijan and Georgia». Toronto, 1994, PP. 104–132; Մ. Չոլլաև, Պատմական հիշողության և ազգային ինքնության քաղաքական ասպեկտները. ազգային պատմության կառուցումը Խորհրդային Աղբրեջանում: «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, 2005, հմ. 1, *նսև՝ Վ. Շնիրհիման, Նշ. աշխ., էջ 158–162:**

Բունիաթովի տեսությունը ենթարկվեց Հայաստանի գիտնականների խիստ քննադատությանը: Բանավեճին արձագանքեցին նաև արտասահմանյան գիտնականներ: Մասնավորապես՝ Ռ. Հյուսենը նշում էր, որ Աղվանքի բնակչությունը, ըստ սկզբնաղբյուրների, երբեք էքնիկապես միատարր չի եղել, այլ բաղկացած է եղել բազմաթիվ խմբերից: Բացի այդ, նա սխալ է համարել Չ. Բունիաթովի այն պնդումը, թե ժամանակակից աղբյուրագիտները ծագում են Աղվանքի բնակիչներից: Ինչ վերաբերում է հայերի և արաբների կողմից աղվանական գրականության ոչնչացման մասին պնդմանը, Ռ. Հյուսենն այն անվանում է Չ. Բունիաթովի «երևակայության թռիչք»⁵:

Բունիաթովի մոտեցումները համապատասխանում էին խորհրդային Աղբյուրագիտի իշխանական վերնախավի քաղաքական նախապատվություններին: Թեև 1971 թ. Հ. Ալիևը քննադատեց նրան և մի քանի այլ պատմաբանների՝ կուսակցական գծից հեռանալու համար, սակայն, ինչպես ենթադրում է ռուսաստանցի հետազոտող Վ. Շնիրելմանը, այս քննադատությունը հավանաբար պայմանավորված էր ոչ թե Հ. Ալիևի նախաձեռնությամբ, այլ խորհրդային կենտրոնական իշխանությունների ցուցումներով⁶: 1980-ական թվականների վերջին՝ Լեռնային Ղարաբաղում հակամարտության ծավալման անմիջական նախօրեին, Չիյա Բունիաթովի գաղափարները զարգացնում էր նրա աշակերտուհի Ֆարիդա Մամեդովան, որն ավելի հեռու գնաց՝ միմյանց հակադրելով «պետականություն ունեցող» աղվաններին և «պետութենագուրկ» հայերին⁷:

«Հիշողության քաղաքականության» դերը Աղբյուրագիտի արդի քաղաքական համակարգում: Հայերին իբրև թշնամի ներկայացնող տեսությունները դարձան հետխորհրդային Աղբյուրագիտի իշխանությունների վարած «հիշո-

⁵ R. Hewsen. Ethno-history and the Armenian Influence Upon the Caucasian Albanians. «Classical Armenian Culture: Influences and Creativity». Pennsylvania, 1982, pp. 215–221; նաև՝ T. de Baan. Черный Сад: Армения и Азербайджан между войной и миром. М., 2005, сс. 216–217.

⁶ Տես Վ. Շնիրելման, Նշ. աշխ., էջ 159:

⁷ Տես Փ. Մամեդովա. Политическая история и историческая география Кавказской Албании (III в. до н.э.–VIII в. н.э.). Баку, 1986: Մամեդովայի այդ մեկնաբանության քննադատական վերլուծությունը տես՝ А. Аюбян, П. Мурадян, К. Юзбашян. К изучению истории Кавказской Албании (о книге Ф. Мамедовой «Политическая история и историческая география Кавказской Албании (III в. до н.э.–VIII в. н.э.)»). П. Мурадян. История—память поколений: проблемы истории Нагорного Карабаха. Е., 1990: Տես նաև՝ Վ. Շնիրելման, Նշ. աշխ., էջ 216–225:

դության քաղաքականության» հիմքը: Այդ հայեցակարգը, որի շրջանակներում հայերին հատկացվում է ոչ միայն եկվորի, այլև ադրբեջանական ժողովրդի հիմնական թշնամու դերը, գրեթե սպառնիչ կերպով արտացոլված է 1998 թ. մարտի 26-ին Հ. Ալիևի ստորագրած «Ադրբեջանցիների ցեղասպանության մասին հրամանագրում»⁸: Հրամանագրի տեքստից պարզ է դառնում, որ դրա հեղինակները որպես «ադրբեջանցիների ցեղասպանություն» են դիտում ադրբեջանական ժողովրդի ամբողջ պատմությունը վերջին երկու հարյուր տարվա ընթացքում: Հայերը ներկայացվում են իբրև այն ուժը, որը կանգնած է ադրբեջանական ժողովրդի բոլոր «ողբերգությունների» հետևում. նրանք հայտարարվում են պատասխանատու այն բոլոր քայլերի համար, որոնք կատարվել են ռուսական ցարիզմի, բոլշևիկների, խորհրդային իշխանությունների կողմից:

Հեյդար Ալիևի օրոք պաշտոնական կարգավիճակ ստացած այս հայեցակարգը շարունակում է օգտագործվել նաև նրա հետնորդ Իլհամ Ալիևի օրոք: Այն սկզբունքային փոփոխություններ չի կրում, այլ ավելի ու ավելի ակտիվ է քարոզվում ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային ասպարեզում: Ներկայիս վարչակարգի ներկայացուցիչները չեն խուսափում հայերի հանդեպ բացահայտ ատելություն և ազգային խտրականություն պարունակող արտահայտություններից: Լեռնային Ղարաբաղի խնդիրը «ռազմական ճանապարհով լուծելու» սպառնալիքներին այժմ գումարվում են այնպիսի հայտարարություններ, որոնք բացահայտորեն արտահայտում են հավակնություններ Հայաստանի Հանրապետության տարածքի նկատմամբ: Այսպես. 2008 թ. հունվարին, մասնակցելով Գուգանլի գյուղում Հ. Ալիևի թանգարանի բացմանը, Ի. Ալիևը հայտարարել է, որ «1918 թ. Երևանը տրվեց հայերին... դա մեծ սխալ էր... Երևանի խանությունը ադրբեջանական պետություն էր, հայերն այստեղ հյուր էին»⁹: Ի. Ալիևի պաշտոնական կայքէջի բաժիններից մեկը, որը կոչվում է «Արյունոտ հիշողություն», կրկնում է հայերի հասցեին հնչեցված այն բոլոր մեղադրանքները, որոնք նշվում էին Հեյդար Ալիևի վերոհիշյալ հրամանագրում¹⁰:

⁸ «Указ Президента Азербайджанской Республики о геноциде азербайджанцев». «Независимая газета», 22 апреля 1998 г.

⁹ «Azerbaijani president: Armenians are guests in Yerevan». «Regnum», 17.01.2008 (<http://www.regnum.ru/english/943595.html>).

¹⁰ Տես Հ. Ալիևի պաշտոնական կայքէջը (<http://www.president.az/azerbaijan/memories/?locale=ru>):

Այլևս վարչախումբը տվյալ հայեցակարգը բավականին արդյունավետ կերպով օգտագործում է ինչպես Հայաստանի դեմ վարվող քարոզչական պատերազմում, այնպես էլ Ադրբեջանում իր իշխանությունն ամրապնդելու նպատակով: Ինչպես վկայում է Ադրբեջանի վերաբերյալ Միջազգային ճգնաժամային խմբի վերջին գեկույցը (որին դժվար է մեղադրել հայամենա լինելու մեջ), Ադրբեջանը ներկայումս կարելի է համարել լիովին ավտորիտար պետություն, որտեղ գրեթե բացակայում է քաղաքական ընդդիմությունը, ցածր է քաղաքացիական հասարակության ինքնուրույնության աստիճանը, խիստ սահմանափակումների է ենթարկվում խոսքի ազատությունը¹¹: Միջազգային հանրության լծակները՝ մարդու իրավունքների ոլորտում ազդելու Ադրբեջանի իշխանությունների վրա, բավականին սահմանափակ են:

Ո՞րն է «հիշողության քաղաքականության» դերն արդի Ադրբեջանի ավտորիտար քաղաքական համակարգի ձևավորման գործում: Իհարկե, այլևս վարչակարգի իշխանությունը հիմնված է առաջին հերթին տնտեսական և ուժային ռեսուրսների նկատմամբ վերահսկողության վրա: Սակայն նրան, ինչպես և ցանկացած ավտորիտար վարչակարգի, անհրաժեշտ է որոշակի գաղափարախոսական հիմնավորում: Ադրբեջանի դեպքում այդ դերը հատկացվում է «հիշողության քաղաքականությանը»: Ջարգացնելով Ադրբեջանի պատմության նկարագրված հայեցակարգը, ըստ որի հայերին վերագրվում է «գլխավոր թշնամու» դերը, այլևս վարչակարգը ամրապնդում է իր իշխանության գաղափարական հիմքերը: Ադրբեջանի գերագույն խնդիր է հռչակվում պայքարը «հայ թշնամու» դեմ, հայերի բանսարկություններով են բացատրվում Ադրբեջանի իշխանությունների թերացումները, իշխանության ընդդիմախոսներին փորձում են վարկաբեկել իբրև «հայկական գործակալների», երկրի կյանքում առկա խնդիրների լուծումը հետաձգվում է մինչև «հայերի դեմ պայքարի» ավարտը: «Հայկական վտանգի» դեմ պայքարը դառնում է այն գաղափարական գենքը, որի միջոցով այլևս վարչակարգը ձգտում է ադրբեջանական հասարակությունը համախմբելու իր շուրջը:

¹¹ Տես «Azerbaijan: Vulnerable Stability». «Europe Report № 207», 3 September, 2010. «International Crisis Group» (www.crisisgroup.org/en/regions/europe/caucasus/azerbaijan/207-azerbaijan-vulnerable-stability.aspx):

Եզրակացություններ

- Ադրբեջանի քաղաքական վերնախավի կողմից օգտագործվող պատմության հայեցակարգի հիմքում դրված են բացահայտորեն ազգայնամոլական մոտեցումները՝ իբրև «եկվորներ» ներկայացվող հայերի նկատմամբ ոչ ներառական վերաբերմունքը: Նման վերաբերմունքը հանգեցնում է ազգամիջյան թշնամանքի և ազգայնամոլական խտրականության, և բնորոշ է ծայրահեղ ազգայնական, ռասիստական ու ֆաշիստական ուսմունքներին:
- Այդ հայեցակարգի շրջանակներում Հայաստանի Հանրապետությանը ներկայացվում են ինչպես քողարկված, այնպես էլ բացահայտ տարածքային պահանջներ:
- Պատմական հիշողությամբ ձեռնածությունը (մանիպուլյացիան) և հայերի՝ իբրև թշնամու կերպարի ստեղծումը օգտագործվում են որպես քաղաքական-գաղափարախոսական գործիք ալիևյան վարչակարգի իշխանությունը օրինականացնելու և ամրապնդելու, բնակչության ուշադրությունը սոցիալ-տնտեսական խնդիրներից շեղելու համար:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԿԵՂՃԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՎ ԴՐԱՆՑ ԳԻՏԱԿԱՆ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆՄՈՒՇ

Որպես ադրբեջանական պատմագրության կողմից աղբյուրների խեղաթյուրման մակարդակով կատարված պատմական կեղծարարությունների նմուշ ստորև կրճատումներով ներկայացնում ենք ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գլխավոր մասնագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Պարույր Մուրադյանի վերլուծական հոդվածը: Նման համեմատական վերլուծությունները կարող են ցանցապետականության դիրքերից համակարգված ձևով ներկայացվել միջազգային գիտական հանրությանը՝ Հայաստանի պատմության նենգափոխումներին հակազդեցության գործում միջազգային գիտական ռեսուրսի արդյունավետ ներգրավման նպատակով:

Ս. Մ. МУРАДЯН

ДВА ИСКАЖЕННЫХ ИЗДАТЕЛЕМ ПАМЯТНИКА *

I. ГАНС ШИЛЬТБЕРГЕР. ПУТЕШЕСТВИЯ...

...Историческая наука пытается реконструировать модель прошлого, оперирует же она не только логикой событий и выявленными закономерностями, но и, прежде всего, данными разнородных первоисточников, сводя и анализируя их. **Научная критика первоисточника и исключительная добросовестность при его издании или интерпретации – первейший и важнейший долг историка-исследователя.** Любое неаргументированное вмешательство в первоисточник, любая вольность, допущенная издателем или исследователем, граничит с подлогом, а следовательно – преступна. Что это значит на деле – я хочу проиллюстрировать на примере нового издания русского перевода «Путешествия по Европе, Азии и Африке с 1394 года по 1427 год» Ганса (Иоганна) Шильтбергера (издательство «Элм», Баку, 1984, АН Азерб. ССР, Институт востоковедения, «Источники по истории Азербайджана»). ...баварец Ганс Шильтбергер оказался в плену у «язычников» – турок и, сопровождая своих пленителей-хозяев, он более тридцати лет скитался по странам и конти-

* «К освещению проблем истории и культуры Кавказской Албании и восточных провинций Армении», т. I. Е., 1991, сс. 225–230.

нентам, описывал события, страны и народы, которые он «имел случай видеть». Важность и достоверность сообщений Шильтбергера хорошо известны в специальной литературе по кавказоведению, цитировались неоднократно. Доказательством сказанного может служить и само образцовое издание русского перевода, осуществленное Ф. К. Бруном (Одесса, 1866 г.). Новое издание (на титульном листе значится: «Издание, редакция и примечания академика АН Азерб. ССР З. М. Буниатова») повторяет перевод Ф. К. Бруна, в отдельных случаях внося в текст уточнения стилистического характера. «Готовя к изданию перевод Ф. К. Бруна, – сказано в предисловии, – я сократил те части его «Путешествия», где превалируют бесконечные суждения схоластического порядка, много славословий в адрес католической церкви, которые в свою очередь снабжены такими же многоречивыми комментариями Ф. К. Бруна, почти вдвое увеличившего объем своего издания» (стр. 5).

Не верить словам издателя-академика, конечно же, нельзя. От того, что сокращены «бесконечные суждения схоластического порядка» или «славословия в адрес католической церкви», в принципе, первоисточник не должен сильно страдать, ибо не они составляют суть сообщений Шильтбергера. Однако издатель должен согласиться, что не все 6000 его читателей (это по количеству тиража книги) впервые берут в руки это сочинение; кое-кто из них этот памятник может знать и по немецкому оригиналу или, хотя бы, по предыдущему русскому изданию и вправе усомниться в отчетливом выборе подлежащих сокращению пассажей. К числу таковых, в частности, принадлежу и я. Не найдя в новом издании известных мне сведений по средневековой истории Армении, я занялся сверкой всего текста, и вот что выяснилось: под «схоластикой» и «славословием» наш редактор подразумевает все то, что по какой-либо причине ему не нравится, или то, чего ему не хотелось бы прочитать в сочинении немецкого автора. Вопреки элементарным нормам текстологии, он делает это без надлежащих примечаний, даже без простейших условных обозначений, как будто сокращаемых слов и выражений, целых отрывков вообще и не было в оригинале. Для представления лаборатории ученого ниже привожу несколько примеров, сокращенные слова и выражения выделяя жирным шрифтом:

«Король послал также пленных в подарок королям вавилонскому, персидскому, в Белую Татарию, в **Великую Армению** и в другие страны» (Брун, с. 8; Бун., с. 13).

«Есть еще город Кютайя, лежащий на высокой горе, в плодородной области, именуемой Кермиан, и город Ангора в земле ему соименной. В этом городе много христиан, **придерживающихся армянского вероисповедания**. В церкви их хранится крест, который блестит день и ночь и привлекает даже язычников, которые этот крест называют сияющим камнем» (Брун, с. 41; Бун., с. 38)...

«Среди рая есть источник, дающий начало четырем рекам, которые орошают различные страны... Третья река, именуемая Тигр, орошает Азию и **Великую Армению**. Четвертая, Евфрат, течет через Персию и **Малую Армению**. Из числа этих четырех рек я видел три: Нил, Тигр и Евфрат и провел много лет в орошаемых ими странах» (Брун, с. 85–87; Бун., с. 52)...

Ни один из приведенных примеров не содержит ни «бесконечных суждений схоластического порядка», ни «славословий в адрес католической церкви». Это несомненно важные для науки и достоверные исторические свидетельства, находящие подтверждения в разноязычных синхронных источниках. Так что же побудило их сократить? На этот вопрос можно ответить, исходя из количественного анализа: издатель не доволен Шильтбергером, так часто и так конкретно упоминаящем армян и Армению... этого оказалось достаточно, чтобы они были удалены из текста. Читателю может показаться, что схоластикой выглядит выражение «придерживающихся армянского вероисповедания», но наш издатель отлично знает, что на языке средневекового автора это равнозначно этническому определению. Он явно исказил суть сообщения, лишив армян и их культовые реликвии этно-культурной характеристики. Чтобы не быть заподозренным в тенденциозной интерпретации, уточню, что в остальных пассажах, где речь идет об исповедании «греческой веры» (Бун., с. 40, 45) или «О различных вероисповеданиях язычников», «О рождении Мухаммада и его религии» и т. д. (Бун., с. 56–61), издатель воздерживается от сокращения.

Последовательность З. М. Буниятова очевидна: он только расправился с «**Великой Арменией**» и тут же взялся за «Малую», «не заме-

тив», что сливаются воедино два совершенно разных административно-географических понятия, хорошо известные по греко-латино-грузино-русско-армянским источникам, и упустив из виду, что тем самым сливаются две разные реки—Тигр и Евфрат, а Междуречье исчезает. Во всем этом не только нет науки, но нет и нравственной позиции. Боюсь, что меня могут обвинить в предвзятости, поэтому вынужден привести более пространные и рельефные образцы редакторского вмешательства, но на ту же тему. В «Путешествии» Шильбергера имеется типичный для средневекового рыцарского романа отрывок (гл. XXX–XXXII), в котором рассказывается о находящейся в крепости девице и защищающем ее ястребе (Брун. с. 42–43; Бун., с. 38–39). Наш издатель не считал нужным сокращать текст до тех пор, пока не появился, невесть откуда, нежеланный для академика персонаж. Вот этот изъятый из текста отрывок: **«Затем явился туда однажды королевский сын из Армении, и также бодрствовал там трое суток: после чего вошел в дворец, где был ястреб, который начал кричать. Девица вышла навстречу и спросила его, чего он желает доброго и честного; Богатств он не требовал, говоря, что будучи сыном могущественного армянского короля, он имел довольно золота, серебра и драгоценных камней, но что, не имея супруги, он желал бы на ней жениться. Она ему ответила: тщеславие твое будет наказано над тобою и твоим могуществом, и прокляла его со всем его родом»** (Брун. с. 43)...

Полностью из текста исчезли главы «Об армянском Вероисповедании» (Брун., с. 111–114), «О св. Григорие» (Брун. с. 114–121), в которых фиксируются множество интересных преданий, этнографических реалий, данные по истории армянского языка и т. д. В силу сказанного из текста Шильтбергера изъятые такие, к примеру, свидетельства или характеристики: **«При всей своей храбрости армяне впоследствии потеряли все свои королевства. Не так давно еще король-султан отнял у них королевство, с хорошим городом Сис, резиденцию их патриарха, который впрочем обязан платить большую дань султану. При дворе кипрского короля находится также большое число армянских господ, по причине близости острова»** (Брун., с. 114). Вот еще: **«Армяне, живущие между язычниками, разно и те, которые обитают среди других христиан, весьма честные люди. Они также весь-**

ма искусны и не хуже язычников умеют вышивать разные шелковые и бархатные материи, золотые и пурпурные» (Брун. с. 122).

Должен признаться, я многократно пытался прояснить для себя, какие цели и методы в рамках науки могли заставить издателя пойти на это. Речь ведь идет не об интерпретации источника, а о его издании. Историю исследуют по первоисточникам, документам, если же будет позволено изымать из них то, что не нравится издателю, то мы дискредитируем саму историческую науку, заменив ее вымыслом. Мои сомнения и поиски прекратились после проверки и разбора специальной главы «Об Армении» в труде Шильтбергера (Брун, с. 110–111; Бун., с. 67). Она небольшая, поэтому считаю возможным привести ее начальную часть полностью, опять жирным шрифтом выделяя сокращенную в новом издании часть: **«Я также провел много времени в Армении. По смерти Тамерлана, попал я к сыну его, владевшему двумя королевствами в Армении. Этот сын, по имени Шах-Рох, имел обыкновение зимовать на большой равнине, именуемой Карабаг и отличающейся хорошими пастбищами. Ее орошает река Кур, называемая Тигр, и возле берегов сей реки собирается самый лучший шелк. Хотя эта равнина лежит в Армении, тем не менее она принадлежит язычникам, которым армянские селения принуждены платить дань. Армяне всегда обходились со мною хорошо, потому что я был немец, а они вообще очень расположены в пользу немцев (нимец), как они нас называют. Они обучали меня своему языку и передали мне свой “Патер ностер”»**.

З. М. Буниятов, фактически, пересмотрел не только историческую географию Карабаха («эта равнина лежит в Армении»), но и его этнический состав, исключив из текста «армянские селения». Более того, он может лишить родины целый народ и поселить туда одного мусульманского владетеля. Так, Шильтбергер несколько раз упоминает «страну Джаник» (гл. VII–VIII), т. е. страну чанов – народа картвельского происхождения, редактор же его книги заменил этот хороним именем Джунайда-бека (Бун., с. 17–18). Теперь читатель вместо «страны Джаник», «лесов Джаника» и «земель Джаника» должен иметь дело с «Джунайда-беком», «владениями Джунайда» и «землей Джунайда». Что это значит – поймет даже неискушенный в исторической науке читатель. Такой

поступок я бы назвал «Сумгаитом в истории», а точнее, быть может, историко-литературной подготовкой сумгаитской трагедии. Что станет с нашей исторической наукой, если у издателя книги Шильтбергера найдутся последователи?!

Это вовсе не праздный вопрос. В 1971 г. З. М. Бунятов издал в Москве русский перевод сочинения ал-Бакуви, современника Ганса Шильтбергера. Особенности его текстологической работы проявились и в этом издании. Прочитав сообщение первоисточника о том, что близ города Бакуйа (т. е. Баку) много селений. «Все жители этих селений—христиане» (с. 89–90), он тут же усомнился в достоверности этого сведения и снабдил оригинал вопросительным знаком, а вот в другом пассаже того же источника, где о русских говорится, что «Это большой народ из тюрок» и «Они самые грязные создания Аллаха» (с. 104), у нашего академика никаких сомнений не возникло, потому каким вопросом, ни восклицательным знаком этот текст он не сопроводил. Несколько лет тому назад в грузинском академическом журнале «Мацнэ» (серия языка и литературы, 1975, № 4, с. 168–174) было фиксировано, что в статье «Грузия и Ширван в первой половине XII века» З. М. Бунятов присвоил публикацию оды Фелеки Ширвани «На смерть царя Димитре I», подготовленную проф. Хади Хасаном. Так он поступил и при издании русского перевода «Албанской хроники» Мх. Гоша (Баку, 1960 г.), лишив Ч. Довсетта авторства многих примечаний (с. 33).

Как ни странно, все это не было замечено научной общественностью. Но вернемся к нашему вопросу—как же быть теперь с книгой Шильтбергера? Быть может, академика З. М. Бунятова объявить соавтором?

Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

«Աշխատանքային տետրերը» լույս են ընծայվում որպես ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հավելված՝ ընդգրկված ԲՈՀ-ի կողմից հաստատված «Դոկտորական և քեկնածուական առենախտությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հողվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող հապավումները:

Չեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը բույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

К сведению авторов и читателей

«Рабочие тетради» издаются в качестве приложения к военно-научному журналу «Айкакан банак» ИНСИ МО РА, включенному в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники. Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

For the information of the authors and readers

The «Working notebooks» is published as an appendix to the defense-academic journal «Haikakan banak» of the INSS, MoD, RA which is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

Authors should give footnotes for the most important sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of a clear print quality.

Please explain used acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory academic examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՈՐ

**ԱԴԻԲԵԶԱՆԻ ԿՈՂՄԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆԵՆԳԱՓՈԽՈՒՄՆԵՐԻՆ
ԳԻՏԱԿԱՆ ՀԱԿԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ.**

**ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԱՊԵՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ**

Նախագծի գիտական ղեկավար՝

ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի պետ, ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդական,
Ռուսաստանյան ռազմագիտական ակադեմիայի իսկական անդամ,
հակահարձակության գծով գիտնական-փորձագետ (ԱՄՆ),
քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ)
գեներալ-մայոր Հ. Ս. Քոթանջյան

Պրակի գիտական խմբագիրներ՝

պատմական գիտությունների դոկտոր Պ. Ա. Չոքանջյան,
պատմական գիտությունների դոկտոր (ՌԴ) Ա. Գ. Ավագյան,
պատմական գիտությունների թեկնածու Բ. Պ. Պողոսյան

Տեխնիկական խմբագրումը՝ Ա. Պ. Նազարեթյանի
Ձևավորող նկարիչ՝ Դ. Ա. Փարվանջյան

Տեքստերի թարգմանությունը՝ Դ. Ա. Չիլինգարյանի
Համակարգչային ապահովումը՝ Գ. Ա. Դադայանի, Վ. Ռ. Խալաֆյանի, Ա. Պ. Նազարեթյանի


Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. Ռիլենցու փողոց, 56/6, հեռ. 28-54-25, 28-12-94:
Էլ. փոստ՝ haykakanbanak@mail.ru

© ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների
ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հավելված, 2010 թ.

Ստորագրվել է տպագրության 10.12.2010:
Թուղթը՝ օֆսեթային: Ձևաչափը՝ 60x84 1/16:
Տեքստը՝ 120 էջ:

Պայմանական տպագրական 7,5 մամուլ: Տպաքանակը՝ 200:
Տառատեսակը՝ «Արիալ», «Թայմս» և «Բարբիկա»: Տպագրությունը՝ օֆսեթ:
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է «Լիմուշ» տպարանում



ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐԵՐ
ՀԱՅԿԱԿԱՆ ԲՈՒՆԱԿ

ՀԱՊԵՆԿԱԾ 4(16). 2010